վախեցել է իրենից, բայց Հայաստանի տարածքում ինքը նրան ոչ մի անգամ չի հարվածել: Մի անգամ նման գրույց եղել է, կասկածանք ունենալով, ինքը որոշել է ստուգել Բլազայի ճամպուրկը և դրա մեջ հայտնաբերել է 300.000 դրամ: Կանչել է, շատ հանգիստ գրուցել են, ինքը հիմար չէ, որ Հայաստանի հյուրանոցում ինչ-որ մեկին ծեծեր, դա կարող էր անել Լոնդոնում կամ Ռումինիայում: Իր սխալն այն է եղել, որ Բլազայի խաբեությունը բացահայտելուց հետո վերջինիս կատարած ծառայությունների համար հասանելիք գումարը չի տվել և չեն բաժանվել: Իր կարծիքով, խաբեության բացահայտման ժամանակ Բլազան վախեցել է իրենից, քանի որ ասել է, որ ոչ մի փող չի ուզում: Ինքն ասել է, որ պետք չէ ոչինչ միմյանցից թաքցնել, որ եթե այդպես շարունակեն, ապա կբռնվեն: Բլազան ազատ է տեղաշարժվել, ինչ ուզեցել ձեռք է բերել, անգամ կոստյում է գնել, նույնիսկ փող է ուղարկել տուն հարազատներին: Իհարկե, Բլազան իր մեղքով է այստեղ հայտնվել, դրա պատճառն այն է եղել, որ Բլազան Ֆաուրի լավ ընկերն էր: Ինքը Բլազայի հետ ծանոթ չի եղել, քանի որ Մարոկկոյից նոր էր եկել Լոնդոն: Հանդիպելով Բլազային, ինքը Ֆաուրից հարցրել է, թե ով է այդ երեխան, վերջինս Բլազային ներկայացրել է որպես կեղծ բանկային քարտերով գողություններ կատարող անձնավորություն, առաջարկել է նրան ներգրավել գողության կատարման մեջ և մի փոքր գումար տալ: Իր սեփական փորձից ելնելով կարող է ասել, որ Լոնդոնում ազգությամբ ռումինացի գրեթե բոլոր երիտասարդները դրանով են զբաղվել կամ բանկային քարտերի տեղեկություններն են գողացել, կամ բանկոմատներից գողությամբ են զբաղվել: Դրանով Լոնդոնում կարող է նույնիսկ 3 տարեկան երեխան զբաղվել, բանկոմատին փակցնելով համապատասխան սարք: Ինքը նման սարքեր չի ունեցել, Ֆաուրի միջոցով մի տղայից ձեռք է բերել այդ սարքերը, Բլազայի հետ ծանոթանալուց հետո սկսել են միասին գողությամբ զբաղվել: Մեկ-երկու շաբաթվա ընթացքում իրենք բանկային քարտերի տեղեկություններ են հափշտակել, ինքն ու Ֆաուրը փակցրել են այդ սարքը բանկոմատին, իսկ Ադի Իրան Բլազան ժամանակ անց այդ սարքը բերել է և տվել է իրենց: Իհարկե, այն բերելն ավելի վտանգավոր է եղել, դրա համար իրենք Բլազային են ուղարկել, օգտագործել են նրան: Բանկային քարտերի վրա գրառված տվյալները հափշտակելուց հետո վերադարձել են տուն և դրանց օգտագործմամբ կեղծ քարտեր են պատրաստել: Այդ կրեդիտային քարտերի PIN-ծածկագրերը ձեռք է բերել Միհայ Ֆաուրը, Բլազան այդ գործում ոչ մի լուրջ դերակատարում չի ունեցել, նրան ուղարկել են տարբեր մանր գործերով: Այդ երկու շաբաթվա ընթացքում Մեծ Բրիտանիայում մոտ 200 բանկային քարտերի տվյալներ է հաջողվել ստանալ: Քանի որ այդ ամենն արել են Լոնդոնում, պատրաստված քարտերով պետք է գումարներ հափշտակեին և դրա համար երկիր են որոնել: Լոնդոնում ինքը հանդիպել է Մարիուս Լուպուին, նրա հետ անցյալում ծանոթ են եղել, վերջինս իր երեսը վնասել էր ծեծկռտուքի ժամանակ: Ինքը հարցրել է, թե որտեղ է հնարավոր կեղծ բանկային քարտերով գումար հափշտակել, Լուպուն ասել է, որ ինչ-որ մեկին ուղարկել է Հայաստան, երբ տեղեկանա արդյունքների մասին և նրա տղաները գնան Հայաստան, ինքը նույնպես կարող է այնտեղ գնալ: Ինքը հարցրել է, թե ինչ է անհրաժեշտ ուղևորության համար, Լուպուն հայտնել է վիզա ստանալու անհրաժեշտության մասին, բացատրել է մանրամասնությունները: Մարիուս Լուպուն ասել է, որ կողմնակի անձանց այդ տեղեկությունները չհայտնի, որպեսզի նրա եղբոր և «Քիշտրույա»-ի հետ պրոբլեմներ չլինեն: Իր կարծիքով, վերջիններս հարազատներ են: Սովորաբար, երբ հայտնաբերվել է մի երկիր, որտեղ հնարավոր է եղել բանկոմատներից կեղծ քարտերով գումարներ հափշտակել, այնտեղ առաջնահերթ գողության գնացել են հայտնաբերողները: Բայց քանի որ Մարիուս Լուպուն, ժամանակին վնասելով իր երեսը, պարտք է եղել իրեն, մեղքի զգացումից ելնելով փորձել է լավություն անել: Ինքը խոստացել է այդ տեղեկությունը ոչ մեկին չասել: Որոշելով մեկնել

Հայաստան, ինքը գնացել է տուն, Միհայ Ֆաուրին և բոլորին հարցրել է, թե ով է ցանկանում իր հետ գնալ Ադի Իոան Բլազան իր և Ֆաուրի հետ նույն բնակարանում է ապրել Լոնդոնում՝ Բնավորությամբ վախկոտ լինելով, Ֆաուրը հրաժարվել է, ասելով, որ Հայաստանը հետխորհրդային երկիր է, նախընտրել է գնալ Իտալիա, իսկ Բլազան համաձայնվել է ուղեկցել իրեն՝ Ինքն ու Ֆաուրը կիսել են պատրաստված քարտերը, իր կողմից Ֆաուրին և Բլազային տվել է որոշ քանակությամբ քարտեր, քանի որ իր հետ գողություն կատարած անձանց նույնպես պետք է բաժին հասներ՝ Ադի Իոան Բլազան շատ քիչ քարտեր ուներ, որևիցե պայմանավորվածություն այն մասին, թե ինչպես կիսել գողոնը, նախապես չի եղել, բնական է, որ դրա գերակշիռ մասը մոտ 80 տոկոսը պետք է իրենը լիներ, քանի որ քարտերը պատկանել են իրեն՝ Դրանից հետո Բլազայի հետ գնացել են Լոնդոնում Հայաստանի դեսպանատուն, միասին դիմել են վիզա ստանալու համար, մի քանի օրից դեսպանատնից վերցրել են անձնագրերը վիզաներով՝ Ինքն այժմ չգիտի, թե Բլազան ուզեցել է Հայաստան գալ, թե եկել է այստեղ իրենից վախենալով՝ Ամեն ինչ հնարավոր է, քանի որ Լոնդոնում մի անգամ ինքն ուժեղ հարվածել է նրան, երբ վերջինս սկզբից համաձայնվել է փոխանակել նրա գնած «Դուլչե Գալբանա» ժամացույցն իրեն պատկանող «Պոլիս» ժամացույցի հետ, իսկ հետո, մտնելով Միհայ Ֆաուրի սենյակ, վերադարձել և հրաժարվել է փոխանակումից՝ Ինքը մտածել է, որ դրա նախաձեռնողը Միհայ Ֆաուրն է եղել, պարզաբանել է նրա հետ այդ հարցը և երբ վերջինս հրաժարվել է դրանից, մի անգամ հարվածել է Ադի Իոան Բլազային, որպեսզի իրենց միջև կռիվ չգրի՝ Հայաստան գալուց ինքն ուղեկցի կարիք չի ունեցել, իր քարտերը ոչ մեկին չէր վստահի, իսկ Բլազային վստահել է, որովհետև նա երիտասարդ էր և նման չէր խուլիզանի՝ Հայաստան գալուց կեղծ բանկային քարտերը թաքցվել են Ադի Իոան Բլազայի ուղեբեռում, նա այդ մասին իմացել է՝ Քանի որ ինքն է դեկավարել Բլազայի գործողությունները, բնական է, դա անձամբ չէր անելու, ամբողջ վտանգը հասնելու էր Բլազային, իրենք այդպես են պայմանավորվել Լոնդոնում՝ Երևանի օդանավակայանում ուղեբեռը ստուգել են և ինքը մտածել է, որ դա վերջն է, սակայն ոչինչ չեն նկատել՝ Այդպես եկել են Երևան, քանի որ առավոտյան ժամը 6-ին են ժամանել, որոշել են ստուգել, թե բանկոմատներից ինչքան գումար է կարելի հանել՝ Ադի Իոան Բլազան վերցրել մի 4-5 քարտ, գտել է մի քանի բանկոմատ, որտեղից գումար է հանել և վերադարձել է հյուրանոց, գումարի չափը չի տպավորվել իր հիշողության մեջ՝ Իր հիշելով, այդ երեկո ինքը Բլազային ասել է, որ փորձի թեթևաբարո աղջիկներ գտնել և բերել հյուրանոց, Ադի Իոան Բլազան եկել է 2-3 աղջիկների հետ, բայց վերջիններիս չեն թողել մտնել հյուրանոց՝ Իհարկե, ինքը հետևել է Ադի Իոան Բլազային, նա իր հսկողության տակ է եղել՝ Օրը 2-3 անգամ դուրս են եկել քաղաք գողություն կատարելու, ինքը Բլազային միանգամից մի 15-20 քարտ է տվել, վերջինս մոտեցել է բանկոմատների մոտ, իսկ ինքը նրան սպասել է՝ Այն քարտերով, որոնց միջոցով առավոտյան հաջողվել է գումար հափշտակել, փորձել են Լոնդոնի ժամով կեսգիշերից հետո նորից գողություն կատարել, քանի որ դրանք օրեկան լիմիտ են ունեցել՝ Ինքն իրոք պարբերաբար ստուգել է Բլազայի հազուստը և ուղեբեռը, քանի որ մի անգամ Բլազան սպասվածից քիչ գումար է հանձնել՝ Դա իր մեջ կասկած է հարուցել, ստուգելով ուղեբեռը, զուլպաների մեջ պահած 300.000 դրամ է հայտնաբերել՝ Կորցնելով Բլազայի հանդեպ վստահությունը, բարկացել և հարցրել է, թե ինչու է այդպիսի բան արել, որ ինքը մինչ այդ հոգացել է նրա բոլոր կարիքները՝ Բլազան պատասխանել է, որ ինչ-որ հարսանիքի նվերի համար գումար է պահել՝ Ինչ վերաբերվում է նրան, թե ինքն իբր արգելել է Բլազային մեկնել Հայաստանից և պատռել է Երևան-Բուխարեստ չվերթի վերջինիս ավտատոմսը, ապա նման դեպք չի եղել՝ Ադի Իոան Բլազան հափշտակված գումարները բերել և տվել է իրեն, իսկ ինքը դրանք պահել է սենյակում՝ Դա տևել է մի 4 օր,

մինչև Օլիվեր Ռադուկու Մարիանը ժամանել է Հայաստան, ինչը որևիցե կապ չի ունեցել իր կամ Բլազայի հետ՝ Օլիվերն իր համար չի եկել Հայաստան, ինքը վերջինիս կարիքը չի ունեցել, քանի որ իր հետ է եղել Ադի Իոան Բլազան՝ Օլիվերն եկել է սեփական քարտերով և սեփական նախաձեռնությամբ, մի անգամ Բլազային է առաջարկել դրանցով գումար հափշտակել և Բլազան դրան չի համաձայնվել։ Օլիվեր Ռադուկու Մարիանը սեփական քարտերով է գողություն կատարել, դրանց միջոցով շատ քիչ գումար է հաջողվել հափշտակել, քանի որ գերմանական բանկերի քարտեր են եղել։ Օլիվերը կանչել է Հայաստան Դանիել Ֆլորին Ֆեռառուին, որի հետ ինքը որևիցե առնչություն չի ունեցել, դա Օլիվերի մարդն է եղել։ Քանի որ Օլիվերի քարտերով չի հաջողվել մեծ գումար հափշտակել, նա գումարից շատ նեղն է եղել, մի անգամ գումար է ուզել և ինքը 700.000 դրամ է տվել։ Մի օր Օլիվերն եկել է իր մոտ «Երեբունի» հյուրանոց և իր ճամպրուկի մեջ տեսնելով 22 միլիոն դրամ, հարցրել է, թե արդյոք չի վախենում այդ գումարները պահել, առաջարկել է փոխարկել։ Իմանալով, նա Մարոկկոյում տարադրամի փոխանակմամբ է զբաղվել, ինքը ասել է, որ վերցնի այդ գումարը և փոխանակի տարադրամով։ Այդ օրը նա մի 20.000 եվրո է փոխարկել և բերել իրեն, թե որտեղ, ինքը չի իմացել, նրա հետ չի եղել Իր կարծիքով, ոչ մի հանցագործություն այդ առումով չեն կատարել, որովհետև Եվրոպայում կարելի է փոխարկել ցանկացած չափի գումար։

Հետո Հայաստան է ժամանել Մարիուս Լուպուն սեփական կեղծ քարտերով, երևի Օլիվերի հետ էր զրուցել և տեղեկացել, որ իրենց հաջողվել է բավականին մեծ գումար հափշտակել, որ Ադին «Բլունդու»-ն բախտավոր տղա է։ Հայաստան ժամանելուց հետո Մարիուս Լուպուն մի քանի անգամ իրեն խնդրել է միջնորդել, որ Ադին նրա համար էլ գումար հափշտակի։ Բայց Ադին չի համաձայնվել, որովհետև զնչուներին չէր սիրում։ Բլազան Մարիուս Լուպուն Լոնդոնում չի ձանաչել, մի գուցե մի անգամ տեսել է իր հետ և ինքը պատմել է, թե ինչ հանգամանքներում է Լուպուն իր երեսը վնասել։

Այնուհետև Հայաստան անսպասելի եկել է Դանիել Ֆլորին Ֆեռառուն, որի համար Օլիվերի մայրն է ավիատոմս է Նա սկսել է փող հափշտակել Օլիվերի «Ռադու»-ի և Մարիուս Լուպունի համար։ Շատ անգամ Օլիվեր Ռադուկու Մարիանը և Դանիել Ֆլորին Ֆեռառուն գողություն կատարելու համար վերցրել են նաև Բլազային, միասին փող հափշտակելուց հետո վերադարձել են, Օլիվերը Ֆեռառուի հետ օգտագործված քարտերը տվել է Մարիուս Լուպունին։ Նրանք շատ քիչ քարտեր են ունեցել մի 30-40 հատ, իսկ Ադի Իոան Բլազան հափշտակված փողը տվել է իրեն։ Իր հիշելով, մի օր ոստիկանությունը նկատել է Դանիելին և Օլիվերին բանկոմատի մոտ, դա օգոստոսի 25-ին կամ 26-ին է եղել։ Նրանք վախեցած վերադարձել են հյուրանոց և ասել, որ նրանց ոստիկանությունն է նկատել։ Ինքը հարցրել է, թե այդ դեպքում ինչու են Օլիվերի կողմից շահագործվող մեքենայով եկել հյուրանոց։ Մարիուս Լուպուն իր և Բլազայի հետ ոչ մի գործնական կապ չի ունեցել, նա եկել է սեփական քարտերով, նրանից առաջ Հայաստանում գործել են «Քիշտրուլյա»-ի և Մարիուս Լուպուի եղբոր մարդիք։ Ինքը նրանց չի ձանաչել, Հայաստանում նրանց պատահական է տեսել, իմացել է, որ Բաքաու քաղաքից են։ Անունները չեն տպավորվել իր հիշողության մեջ, երեխաներ են եղել, իսկ ինքն երեխաների հետ աշխատել է չշփվել։ Հավանաբար նրանք վախեցել են, որ ինքը կարող է գումարները խլել, քանի որ հաճախ է այդպես վարվել։ Մարիուսն անձամբ է գումարներ հափշտակել բանկոմատներից և անձամբ է գողոնը փոխարկել տարադրամով, հետո քարտերի ինչ-որ մաս տվել է Օլիվերին և Դանիել Ֆեռառուին, քանի որ նրանք գումար գրեթե չեն ունեցել, սոված են եղել, բոլորին ինչ-որ ծառայություններ են մատուցել գումարի դիմաց։

Գումարներ գողանալով, Մարիուսը որոշել է օգոստոսի 26-ի առաջօրյան գնալ Հայաստանից և մեկնել է ինքնաթիռով։ Նույն օրն

ինքը Բլազային ասել է, որ տեղափոխվի այլ հյուրանոց, որովհետև ոստիկանների է նկատել հյուրանոցում և մտածել է, որ Բլազային կարող են ճանաչել, քանի որ բանկոմատներից հիմնականում նա է գումար հափշտակել: Բլազան տեղափոխվել է այլ հյուրանոց իր մոտ մնացած բոլոր քարտերով հանդերձ, դրանց միջոցով արդեն գրեթե չի ստացվել գումարներ ստանալ բանկոմատներից: Նույն օրը կամ մի դրանից մի օր առաջ Ադի Իրան Բլազան ավիատոմս է գնել, իսկ առավոտյան մեկնել է Հայաստանից, ինքը վերջինիս նորմալ է ճանապարհել, փաթաթվել են եղբայրների պես: Իր հիշելով, Բլազային մեկնելուց առաջ մի 2 հազար եվրո է տվել, իմանալով, որ վերջինս փող է ուղարկել հարազատներին Ռումինիա, ավիատոմս է գնել: Բլազայի գնալու օրը, ժամը 10-ին Օլիվեր Ռադուկու Մարիանը մենակ եկել է իր մոտ, ինքը պատրաստվել է նույնպես փոխել հյուրանոցը: Օլիվերն իրեն առաջարկել է միասին սենյակ վարձակալել «Երևան» հյուրանոցում, քանի որ այն բարձրակարգ է և այնտեղ սեյֆեր կան: Ինքը համաձայնվել է, քանի որ այնտեղ աշխատում էր մի աղջիկ, որն իրեն դուր է եկել: Օլիվերի հետ կիսովի այդ սենյակն են վերցրել, իր հիշելով սեյֆում դրվել են միայն իր փողերը, մի 10 քարտ և մոտ 1 միլիոն դրամի չափի գումար, որոնք Բլազան բերել է իրեն մեկնելուց առաջ: Այդ օրն Օլիվեր Ռադուկու Մարիանը և Դանիել Ֆլորին Ֆեռառուն մոտ մի 10000 եվրո են փոխարկել: Օլիվերն ինչ-որ բնակարան է վարձել Երևանում, որովհետև ուզեցել է այստեղ ընտանիքը բերել, նրա կնոջ եղբայրը Դանիել Ֆեռառուի հետ մտերիմ ընկերն է եղել: Այդ վարձակալած բնակարանից վերադարձել է իր մոտ հյուրանոց, որտեղ ամբողջ օրը մենակ է գտնվել եղել, հյուրանոցի սրճարանում է ժամանակ անցկացրել, հյուսիս և սուրճ է խմել: Ժամը 17-ի սահմաններում Ֆեռառուն և Օլիվերն են եկել, ինքը մի աղջկա հետ պետք է հանդիպեր հյուրանոցի մոտ: Ինքը փոխել է հագուստը ժամադրման համար, վերցրել է մոտ մեկ շաբաթ առաջ Հայաստանում 250.000 դրամով գնած «Վերտու» հեռախոսը, մի 200 ֆունտ ստերլինգ և մոտ 100.000 դրամ, որ շատ փող չձախսի: Երբ գնացել է այդ աղջկա հետ հանդիպելու, տեսել է, թե ինչպես են առնել Օլիվեր Ռադուկու Մարիանին, իսկ Դանիել Ֆլորին Ֆեռառուին հաջողվել է փախչել: Ինքը Դանիելի հեռախոսահամարը չի ունեցել, նա Օլիվերի մարդն է եղել և ինքը նրան մինչ այդ չի ճանաչել: Այդ ժամանակ իրեն զանգահարել է վերոհիշյալ աղջիկը, ինքը տեսել է, որ հյուրանոցի մոտ ԱՄԾ աշխատակիցներ են և այնտեղ գնալ չի կարելի: Ջանգահարել է Օլիվերին և հարցրել է, թե ինչու են նրան բռնել, վերջինս ասել է, որ անձնագրի հետ կապված խնդրի պատճառով: Օլիվերը խնդրել է Դանիելի միջոցով անձնագիրը «Եվրոպա» հյուրանոցից բերել, բայց ինքը Դանիելի հեռախոսահամարը չի իմացել: Ինքը հարցրել է Դանիելի հեռախոսահամարը, բայց երբ զանգահարել է, վերջինս չի պատասխանել: Իմանալով, որ նա բնակվել է «Եվրոպա» հյուրանոցում, գնացել է այնտեղ և վերցրել է Օլիվերի անձնագրի պատճեն, իրեն այն տվել են սպասարարի աշխատակիցները: «Եվրոպա» հյուրանոցի աստիճաններով իջնելուց տեսել է Դանիել Ֆեռառուին, որն իջնում էր Օլիվերի և նրա ճամպրուկը ձեռքին: Ինքը հարցրել է, թե ինչու չի պատասխանել զանգին, Դանիելը պատասխանել է, որ որոշել է գնալ: Ինքը հարցրել է, թե որտեղ է Օլիվերի անձնագիրը, Դանիելն ասել է, որ նրա մոտ է: Ինքը վախեցել է անձամբ գնալ և անձնագիրը փոխանցել Օլիվերին, ասել է Դանիելին, որ տանի և Օլիվերին հանձնի անձնագիրը: Այդ ընթացքում մի տաքսի է կանգնեցրել, Դանիելն ասել է, որ անձնագիրը ոչ մի տեղ չի տանի, առաջարկել է գնալ այնտեղից: Ծանապարհին ինքը կանգնեցրել է տաքսին և ասել է, որ մի քանի քարտ պետք է պահի, երբ դուրս է եկել քարտերը պահելու, շրջվելուց տեսել է, որ տաքսին Դանիել Ֆեռառուի հետ գնացել է: Ինքը կրկին զանգահարել է Օլիվերին, ասել է, որ պատճեն բերել չի կարող և իմացել է, որ Դանիելն անձնագրով արդեն եկել է հյուրանոց: Ինքը հարցրել է Օլիվերին, թե ինչ է պատահել, նա

խորհուրդ է տվել փախչել, ասելով, որ վիճակը լավ չէ՛ք Հասկանալով վիճակի լրջությունը, որոշել է փախչել Հայաստանից, իր մոտ եղել է միայն անձը հաստատող քարտը, անձնագիրը մնացել է հյուրանոցային համարում՝ Ինքը չի իմացել, որ չայդ քարտով չի կարող մեկնել, դիմել է ծանոթներից մեկին, որն «Էրեբունի» հյուրանոցում զբաղվել է անվտանգության ապահովմամբ, խնդրել է մի տաքսի գտնել իր համար երկրից մեկնելու համար՝ Ծանոթը մի տաքսի է ուղարկել, որով ինքը գնացել է դեպի սահման և հետ է վերադարձել, քանի որ, հասնելով Գորիս, հասկացել է, որ ձեռքին եղած փաստաթղթով չի կարող անցնել սահմանը՝ Որոշել է հետ վերադառնալ, հասնելով Երևան, տեղավորվել է այն հյուրանոցում, որտեղ Բլազան է մնացել վերջին օրը՝ Ջանգահարել է ռուսիական դեսպանատուն, ասել է, որ մեղավոր չէ, իր ընկերները բռնվել են՝ Դեսպանատնից իրեն ասել են, որ կարող է առավոտյան ժամը 10-ին գալ գրույցի, հաջորդ օրը դրա ընթացքում յուրովի է բացատրել է իրավիճակը, ասել է, որ անմեղ է, խնդրել է իրեն մի անձնագիր տալ Հայաստանից մեկնելու համար՝ Դեսպանատնից դուրս գալուց նկատել է դրա դիմաց կանգնած մի ոստիկանական ավտոմեքենա, հասկացել է, որ արդեն սկսել են հետևել դեսպանատանը՝ Որոշել է դեսպանատնից դուրս չգալ մինչև փաստաբան գտնելը՝ Մի շաբաթվա ընթացքում իրեն գտել են փաստաբան, դրանից հետո միայն դուրս է եկել դեսպանատնից, դեսպանի անձնական ավտոմեքենայի մեջ կամավոր եկել է ՀՀ ԱԱԾ շենքի կենտրոնական մուտքի մոտ, որտեղ իրեն դիմավորել են, այնուհետև մեղադրանք են առաջադրել և կալանավորել՝ Հարցաքնության ժամանակ իր փաստաբանների խորհրդով հրաժարվել է ցուցմունքներ տալուց և միայն վերջերս է հասկացել, որ սխալ է վարվել՝ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բռնվել է Ադի Իոան Բլազան, հասկացել է, որ գործը փակելու հնարավորություն չկա՝ Ադի Իոան Բլազայի ցուցմունքների մեծ մասը համապատասխանել է իրականությանը, բացի այն հատվածից, որ ինքը նրան Հայաստանում ծեծել է և ստիպել է փող գողանալ բանկոմատներից՝ Վերջինիս իրոք ինքն է բերել Հայաստան և շատ է զղջացել, որ այդ իրավիճակի մեջ է գցել Բլազային՝

Ինչ վերաբերվում է Բլազայի կողմից Կորինա Դաբիժային փոխանցված 1000 ԱՄՆ դոլարին, ապա ինքը դրա հետ որևիցե առընչություն չի ունեցել, այդ գումարը Բլազային չի տվել՝ Իր իմանալով, Բլազան պարտք է եղել Միհայ Ֆաուրին 1000 ԱՄՆ դոլար և այդ գումարը փոխանցել է վերջինիս կնոջը Կորինա Դաբիժային՝

Իր ցուցմունքները դատապարտյալ Կոռնել Կոնստանտին Ստենգաչուն պնդել է նաև մեղադրյալ Ադի Իոան Բլազայի հետ առերես հարցաքնության ժամանակ՝

Դատապարտյալ Դանիել Ֆլորին Ֆեռառուի ցուցմունքով այն մասին, որ բնակվելով Մեծ Բրիտանիայի Լոնդոն քաղաքում, աշխատել է շինարարությունում որպես բանվոր, մտերիմ է եղել համերկրացու Ռումինիայի քաղաքացի Օլիվեր Ռադուկու Մարիանի հետ, ժամանակին աշխատել է վերջինիս հոր հետ՝ Ծանոթ է եղել նաև մյուս համերկրացու Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի հետ, լսել է, որ վերջինս կեղծ բանկային քարտերով օգտագործմամբ զբաղվել է գողություններով, սակայն մինչև Հայաստան ժամանելը որևիցե գործնական կապ չեն պաշտպանել՝ 2008 թվականի օգոստոսի 23-ին ինքը ժամանել է Հայաստան Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի հրավերով ՀՀ դրամի տեսքով գողոնն արտարժույթի փոխարկելու համար, վերջինս խոստացել է հատուցել ավիատոմսի արժեքն Երևան ժամանելուց հետո՝ Ավիատոմս գնելու համար գումարն ինքը պարտքով վերցրել է Օլիվեր Ռադուկու Մարիանի մայրից, ժամանելով Երևան, «Եվրոպա» հյուրանոցում բնակվել է Օլիվերի հետ նույն սենյակում՝ Վերջինիս և Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի պայմանավորվածության մանրամասնություններով չի հետաքրքրվել, սակայն լսել է, որ Օլիվերը պարտավորվել է ինչ-որ գումար տեղափոխել Լոնդոն՝

Ինքը Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի համար գնել է մոտավորապես 20.000 եվրո, այդ գումարի 5 տոկոսը որպես վարձատրություն ստանալու պայմանովՔ Երևանի «Կոնգրես» հյուրանոցում Կոռնել Կոնստանտին Ստենգաչուն իրեն ծանոթացրել է Ադի Իոան Բլազայի հետ, մինչ այդ Լոնդոն քաղաքում չեն հանդիպել և ծանոթացել են միայն ՀայաստանումՔ Վերջինիս հետ գնացել են քաղաքով շրջելու, ինքը վարել է վարձակալված ավտոմեքենան, նախապես չի իմացել Բլազայի դերակատարման մասին, այդ մասին տեղեկացել է ընթացքումՔ Բլազան աշխատել է Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի համար, եղել է վերջինիս խմբից և կեղծ բանկային քարտերով գումարներ է ստացել բանկոմատներից և հանձնել է ԿոռնելինՔ Հաջորդ անգամ քաղաքում շրջելուց Ադի Իոան Բլազան խնդրել է օժանդակել և օգնել գումարները բանկոմատներից ստանալու գործում, ինքը չի մերժելՔ Բլազան տվել է իրեն «top up», «Virginia» և «Orange» կազմակերպությունների թողարկած հեռախոսային քարտերի երկու տրցակ, քարտերի վրա նշված են եղել PIN-ծածկագրերըՔ Ինքն այդ քարտերով որոշ գումարներ է ստացել բանկոմատներիցՔ Այնուհետև, վախենալով հետևանքներից, հաջորդ անգամ քաղաքում շրջելուց ինքը հրաժարվել է անմիջականորեն գողություն կատարելուց, վերադարձրել է քարտերը և գողացված գումարը Բլազային, որը բարկացել է, դրանից հետո ինքը միայն ավտոմեքենան է վարելՔ Այդպես քաղաք են դուրս եկել շրջելու 3-4 անգամՔ Թե ընկերը Օլիվեր Ռադուկու Մարիանի ինչքանով է մտերիմ եղել Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի, Ադի Իոան Բլազայի և Մարիուս Լուպուի հետ, ինքը չի իմացել, նրանց միջև պայմանավորվածության մանրամասնություններով չի հետաքրքրվել, սակայն լսել է, որ Օլիվերը պարտավորվել է ինչ-որ գումար տեղափոխել ԼոնդոնՔ

Վկա՝ «Արդշինինվեստբանկ» ՓԲ ընկերության «Տիգրան Մեծ» մասնաձյուղի գանձապահ Հայկուհի Հրայրի Մարտիրոսյանի ցուցմունքով այն մասին, որ 2008 թվականի օգոստոսի 20-ին բանկում իրեն է մուտեցել արտասահմանցի մի երիտասարդ և անզկերեն լեզվով ցանկություն է հայտնել գնել 4000 ԱՄՆ դոլար: Ինքը խնդրել է ներկայացնել անձնագիրը և համարժեք գումարըՔ Երիտասարդը ներկայացրել է Դրագոշ Իոնուս Բուտեգատուի տվյալներով Ռումինիայի քաղաքացու անձնագիրըՔ Ինքը կազմել է արտարժույթի վաճառքի անդորրագիր, երիտասարդը ստորագրել է այն և վերցնելով փոխարկված գումարը՝ հեռացել էՔ 2008 թվականի օգոստոսի 21-ին բանկում իրեն է մուտեցել արտասահմանցի մեկ այլ երիտասարդ, խոսելով անզկերեն՝ ցանկություն է հայտնել գնել 2940 եվրո: Կարգի համաձայն ինքը խնդրել է ներկայացնել անձնագիրը և համարժեք գումարըՔ Երիտասարդը ներկայացրել է Ադի Իոան Բլազայի տվյալներով Ռումինիայի քաղաքացու անձնագիրըՔ Ինքը կազմել է արտարժույթի վաճառքի անդորրագիր, երիտասարդը ստորագրել է այն և վերցնելով փոխարկված գումարը՝ հեռացել էՔ 2008 թվականի օգոստոսի 25-ին բանկում իրեն է մուտեցել մի արտասահմանցի տղամարդ, անգրեբեն լեզվով ցանկություն է հայտնել գնել 5000 եվրո: Ինքը խնդրել է ներկայացնել անձնագիրը և համարժեք գումարըՔ Տղամարդը ներկայացրել է Մարիուս Լուպուի տվյալներով Ռումինիայի քաղաքացու անձնագիրըՔ Կազմվել է արտարժույթի վաճառքի անդորրագիր, տղամարդը ստորագրել է այն և վերցնելով փոխարկված գումարը՝ հեռացել էՔ

Վկա՝ «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության վճարային համակարգերի բաժնի գանձապահ Քրիստինա Սերյոժայի Մարտիրոսյանի նախաքննական ցուցմունքով այն մասին, որ 2008 թվականի օգոստոսին հաճախ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի վարչական շենք են եկել երկու արտասահմանցի երիտասարդներ, որոնք ըստ գործարքների ժամանակ ներկայացված անձնագրերի հանդիսացել են Ռումինիայի քաղաքացիներ Դրագոշ Իոնուս Բուտեգատուն և Կատալին Իոնուտ Ապետրի ՖուրդույըՔ Գրեթե միշտ նրանք միասին են եղել և իր մոտ նույնիսկ տպավորություն է ստեղծվել, որ նրանք եղբայրներ ենՔ

Նրանք մոտեցել են իրեն, ցանկություն են հայտնել «Վեսթերն Յունիոն» համակարգով գումարներ փոխանցել Մեծ Բրիտանիա և Ռումինիա: Քանի որ այդ համակարգով թույլատրվել է գումար փոխանցել միայն ԱՄՆ դոլարի տեսքով, նրանց մոտ եղած ՀՀ դրամը փոխարկել են տարադրամի, այնուհետև լրացրել և ստորագրել են համապատասխան փաստաթղթեր, որից հետո գումարը փոխանցվել էՔ Ըստ լրացված հայտարարագրերի՝ նրանք բնակվել են «Ամրոց» հյուրանոցում, ընդ որում Կատալին Իոնուտ Ապետրի Ֆուրդույը օգտվել է 077-34-63-42 հեռախոսահամարիցՔ Բացի այդ, 2008 թվականի օգոստոսի 23-ին բանկում իրեն մոտեցել է մի արտասահմանցի երիտասարդ, որը ցանկություն է հայտնել «Վեսթերն Յունիոն» համակարգով 2100 եվրո փոխանցել Ռումինիա՝ Նիկոլաե ԴումայինՔ Ինքը բացատրել է, որ այդ համակարգով գումարը կարելի է փոխանցել միայն ԱՄՆ դոլարի տեսքով, որից հետո նա տարադրամը փոխարկել է 934500 դրամի, այնուհետև փոխանցում կատարելու համար այդ գումարով գնել է 2940.14 ԱՄՆ դոլորՔ Գործարք կատարելու համար ներկայացրել է Ադի Իոան Բլազայի տվյալներով Ռումինիայի քաղաքացու անձնագիր, լրացրել և ստորագրել է համապատասխան փաստաթղթեր, որից հետո գումարը փոխանցվել էՔ Բացի այդ, 2008 թվականի օգոստոսի 23-ին բանկում իրեն մոտեցել է մի արտասահմանցի երիտասարդ, անգլերեն լեզվով ցանկություն է հայտնել գնել 10.000 եվրոՔ Ինքը չի առարկել, քանի որ այդ գումարը չի գերազանցել ՀՀ Կենտրոնական բանկի կողմից նշված սահմանաչափը 20 միլիոն ՀՀ դրամըՔ Ինքը խնդրել է ներկայացնել անձնագիրը և գումարըՔ Երիտասարդը ներկայացրել է Դանիել Ֆլորին Ֆեռառուի տվյալներով Ռումինիայի քաղաքացու անձնագիրը, տվել է 10.000 եվրոյին համարժեք 4.490.000 ՀՀ դրամ գումարՔ Ինքը կազմել է արտարժույթի վաճառքի անդորրագիր, իսկ երիտասարդը ստորագրել է այն և վերցնելով գնված 10.000 եվրոն՝ հեռացել է:

Վկա՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ մասնավոր փոխանցումների խմբի մասնագետ Լիանա Սամվելի Մնացականյանի նախաքննական ցուցմունքով այն մասին, որ 2008 թվականի օգոստոսի 21-ին բանկում իրեն մոտեցել է արտասահմանցի մի երիտասարդ և դժվարությամբ խոսելով ռուսերեն լեզվով՝ ցանկություն է հայտնել 1000 ԱՄՆ դոլար փոխանցել Ռումինիա Գաբրիելա Օանա Ռուսուի տվյալներովՔ Ինքը խնդրել է ներկայացնել անձնագիրը և համարժեք գումարըՔ Երիտասարդը ներկայացրել է Ադի Իոան Բլազայի տվյալներով Ռումինիայի քաղաքացու անձնագիր, որպես բնակության հասցե նշել է «Եվրոպա» հյուրանոցը, իսկ որպես հեռախոսահամար 077-675024 բջջային համարըՔ Ինքը կազմել է փոխանցման ձևաթուղթը, երիտասարդը ստորագրել է այն և հեռացել է:

Վկա՝ «Պրոմեթեյ բանկ» ՍՊ ընկերության «Տիգրան Մեծ» մասնաճյուղի օպերատոր Մարինե Խաչիկի Խաչատրյանի նախաքննական ցուցմունքով այն մասին, որ 2008 թվականի օգոստոսի 25-ին բանկում իրեն է մոտեցել արտասահմանցի մի երիտասարդ, ցանկություն է հայտնել Կորինա Դաբիջայի տվյալներով 933 ԱՄՆ դոլար փոխանցել ՌումինիաՔ Ինքը խնդրել է ներկայացնել անձնագիրը և համարժեք գումարըՔ Երիտասարդը ներկայացրել է Ադի Իոան Բլազայի տվյալներով Ռումինիայի քաղաքացու անձնագիր, որպես բնակության հասցե նշել է «Եվրոպա» հյուրանոցը, իսկ որպես հեռախոսահամար 077-67-50-24 բջջային համարըՔ Ինքը կազմել է փոխանցման ձևաթուղթը, երիտասարդը ստորագրել է այն և հեռացել է:

Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի կողմից «Երևան» հյուրանոցում վարձակալված սենյակում հայտնաբերված զոդոնով 25.200 եվրոյով և 4.040.000 դրամովՔ

Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի կողմից «Երևան» հյուրանոցում վարձակալված սենյակում հայտնաբերված՝ Ադի Իոան Բլազայի կողմից օգտագործված թվով 10 հատ 4921828820858654, 4539780131720210, 4543133694831129, 4921827079829333,

4921819117976325, 4917541158941309, 4539794497475210, 4539785385530710, 4659010479966058, 4921827133063457 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով՝ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության բանկոմատներից հայտնաբերված՝ Ադի Իոան Բլազայի կողմից օգտագործված 4539795171235200, 4539795163445072, 4539792456667504, 4462720158230025, 4539798585547020, 4921819624425816, 4658582470799002, 4539785202342604, 4659010372044102, 4462744688362116, 4921818442551829, 4921819282764738 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով՝ «Ամելիք բանկ» ՓԲ ընկերության բանկոմատներից հայտնաբերված՝ Ադի Իոան Բլազայի կողմից օգտագործված 6759676150760830, 675940382431080393, 6759682125713250, 45397916514221600, 4658582059989008, 4539781060081111, 675940132821223941, 4921816532421119, 4462740000316517, 4921819624863719, 4917315146734252, 4547423202356347, 4547421101271138, 4921817090417317 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով՝ «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲ ընկերության բանկոմատից հայտնաբերված Ադի Իոան Բլազայի կողմից օգտագործված՝ 4539793226028415 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով՝

2008 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրությամբ առգրավված և զննված «Վեսթերն Յունիոն» համակարգով դրամային փոխանցում կատարելու 25.08.2008 թվականի դիմումով և անդորրագրով, ըստ որի Ադի Իոան Բլազան «Պրոմեթեյ բանկ» ՍՊ ընկերությունից նշված օրը Կորինա Դաբիջայի անվամբ Ռումինիա է փոխանցել 933 ԱՄՆ դոլար գումար՝

2008 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրությամբ առգրավված և զննված արտարժույթի առքի ու վաճառքի AAA 002374 և AAA 002375 համարների 23.08.2008 թվականի անդորրագրերով, ըստ որոնց՝ Ադի Իոան Բլազան «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում 2100 եվրոն փոխարկել է 934.500 դրամով, իսկ հետո 898.212 դրամը փոխարկել է 2940.14 ԱՄՆ դոլարով՝

2008 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրությամբ առգրավված և զննված «Վեսթերն Յունիոն» համակարգով դրամային փոխանցում կատարելու 23.08.2008 թվականի դիմումով և անդորրագրով, ըստ որի Ադի Իոան Բլազան «Ամերիաբանկ» ՍՊ ընկերությունից նշված օրը Նիկոլայե Դումայի անվամբ Ռումինիա է փոխանցել 2940.14 ԱՄՆ դոլար՝

2008 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրությամբ առգրավված և զննված արտարժույթի փոխանակման 8082100375337 համարի 21.08.2008 թվականի անդորրագրով, ըստ որի՝ Ադի Իոան Բլազան «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ «Տիգրան Մեծ» մասնաձյուղում 1.317.120 դրամը փոխարկել է 2.940 եվրոյի՝

2008 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրությամբ առգրավված և զննված «Վեսթերն Յունիոն» համակարգով դրամային փոխանցում կատարելու 21.08.2008 թվականի արտարժույթի մուտքի օրդերով և անդորրագրով, ըստ որի՝ Ադի Իոան Բլազան «Ինելկոբանկ» ՓԲ ընկերության «Աբովյան-18» մասնաձյուղից նշված օրն Անա Դումային անվամբ Ռումինիա է փոխանցել 1000 ԱՄՆ դոլար՝ Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի կողմից օգտագործվող 353510029036580 գործարանային համարով «NOKIA 6300» մոդելի հեռախոսով, որի մեջ մուտքագրված են Ադի Իոան Բլազայի, Օլիվեր Ռադուկու Մարիանի և Դանիել Ֆլորին Ֆեռառույի կողմից օգտագործվող, համապատասխանաբար 077675024, 077672911 և 0040751244454 հեռախոսահամարները «BlArme», «Rad Arm» և «Ferary» անունների տակ, վերջինիս նախկին կնոջից ստացված SMS-հաղորդագրություններով:

Օլիվեր Ռադուկու Մարիանի և Դանիել Ֆլորին Ֆեռառուին 27.08.2008 թվականին բերման ենթարկելու արձանագրությամբ՝ Օլիվեր Ռադուկու Մարիանի և Դանիել Ֆլորին Ֆեռառուի

նկատմամբ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 10.04.2009 թվականին կայացված մեղադրական դատավճռով:

Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի նկատմամբ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 12.10.2009 թվականին կայացված մեղադրական դատավճռով:

Ադի Իոան Բլագայի տվյալներով 21.08.2008 թվականի Երևան-Վիեննա-Բուխարեստ չվերթի ավիատոմսով:

ՀՀ ոստիկանության Ինտերպոլի ԱԿԲ-ից 17.10.2008 թվականին ստացված N33/A4610 CF3/318/5/2008 գրությամբ Ռումինիայի Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյի 13.10.2008 թվականի 1796815/08/BCR նամակով այն մասին, որ Մարիուս Լուպուն, Կոռնել Կոնստանտին Ստենգաչուն, Օլիվեր Ռադուկու Մարիանը, Դանիել Ֆլորին Ֆեռառուն, Ադի Իոան Բլագան, Դրագոշ Իոնուտ Բոտեգատուն անցել են այդ երկրի քրեական հաշվառումներով կեղծ բանկային քարտերով բանկոմատներից գողություններ կատարելու համար, ընդ որում Մարիուս Լուպուն, Կոռնել Կոնստանտին Ստենգաչուն և Օլիվեր Ռադուկու Մարիանը հանդիսացել են տարբեր հանցավոր խմբերի պարագլուխներ: Մարիուս Լուպուն 2003 թվականից ընտանիքի անդամների հետ կազմակերպել է հանցավոր խումբ, որը կատարել է հանցագործություններ Ռումինիայում, Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Գերմանիայում, իսկ Դրագոշ Իոնուտ Բոտեգատուն և Անդրեյ-Պետրոնել Բուրսուկն օգտագործել են որպես «զենք»: Օլիվեր Ռադուկու Մարիանը հայտնի է կեղծ բանկային քարտերով Մեծ Բրիտանիայում, Նիդերլանդներում, Իտալիայում, Իսրայելում, Մարոկկոյում, Ֆրանսիայում գողություններ կատարելու համար, հավաքագրել է տարբեր լմարդկանց Բաքաու քաղաքից, օգտագործել է որպես միջոց բանկոմատներից գումարներ գողանալու համար, այդ եղանակով օգտագործել է նաև Դանիել Ֆլորին Ֆեռառուին, անձամբ զբաղվել է հյուրանոցային համարների ամրագրմամբ և ավտոմեքենաների վարձակալությամբ այն քաղաքներում, որտեղ նախապատրաստվել են հանցագործությունները: Կոռնել Կոնստանտին Ստենգաչուն եղբոր հետ կազմակերպել է մեկ այլ հանցավոր խումբ և հանդիսացել է դրա պարագլուխը, առաջինն է եղել, որ սկսել է հանցավոր գործունեությունը Հայաստանում, իր նախաձեռնությամբ են այնտեղ մեկնել Օլիվեր Ռադուկու Մարիանը, Ադի Իոան Բլագան և Դանիել Ֆլորին Ֆեռառուն:

ՀՀ ոստիկանության Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյից ստացված 25.10.2008 թվականի N 33/A816q-CF3/318/5/2008 գրությամբ այն մասին, որ համաձայն Մեծ Բրիտանիայի Ինտերպոլի ԱԿԲ-ից ստացված տեղեկատվության, Մարիուս Լուպուն, Օլիվեր Ռադուկու Մարիանը և Ադի Իոան Բլագան, անցնում են ոստիկանության քրեական հաշվառումներով, Մարիուս Լուպուն դատապարտվել է 2 անգամ ոստիկանությանը դիմադրելու և խարդախության համար, Օլիվեր Ռադուկու Մարիանը դատապարտվել է 2 անգամ և Ադի Իոան Բլագան դատապարտվել է 1 անգամ խարդախություն կատարելու համար:

«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերությունից N Ե-22-1748 գրությամբ ստացված, նշված բանկի բանկոմատներում կատարված գործարքների փաստաթղթային հավելվածներով:

«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերությունից N Ե-22-1748 գրությամբ ստացված լազերային սկավառակով, որտեղ զետեղված են նշված բանկի բանկոմատների լուսանկարահանումները Օլիվեր Ռադուկու Մարիանի, Դանիել Ֆլորին Ֆեռառուի, Ադի Իոան Բլագայի և Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի կողմից կատարված և ֆիքսված գողության հանցադեպերով:

«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերությունից N Ե-22-1766 գրությամբ ստացված լազերային սկավառակով, որտեղ զետեղված են նշված բանկի բանկոմատների լուսանկարահանումները Օլիվեր

Ուադուկու Մարիանի, Դանիել Ֆլորին Ֆեռառուի, Ադի Իոան Բլազայի և Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի կողմից կատարված և ֆիքսված գողության հանցադեպերով՝ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերությունից N Ե22-1766 գրությամբ ստացված, նշված բանկի բանկոմատներում կատարված գործարքների փաստաթղթային հավելվածներով՝ «Արմենիան քարդ» ՓԲ ընկերությունից N 115-08 գրությամբ ստացված ՀՀ-ում գործող բանկերի բանկոմատներում կատարված գործարքների ցանկով՝ «Արմենիան քարդ» ՓԲ ընկերությունից N 117-08 գրությամբ ստացված լազերային սկավառակով, որտեղ զետեղված են «Անելիք բանկ» ՓԲ ընկերության բանկոմատների լուսանկարահանումները Ադի Իոան Բլազայի և Դանիել Ֆլորին Ֆեռառուի կողմից կատարված և ֆիքսված գողության հանցադեպերով՝ «Անելիք բանկ» ՓԲ ընկերությունից ստացված, 2008 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին նշված բանկի բանկոմատներում կատարված գործարքների կապակցությամբ ստացված հետզանձումային պահանջների ցանկով և լազերային սկավառակով, որտեղ զետեղված են այդ գործարքների լուսանկարահանումները Ադի Իոան Բլազայի և Դանիել Ֆլորին Ֆեռառուի պատկերներով՝ «Կոնվերս բանկ» ՓԲ ընկերությունից ստացված, 2008 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին նշված բանկի բանկոմատներում կատարված գործարքների կապակցությամբ ստացված հետզանձումային պահանջների ցանկով՝ 05.12.2008 թվականի արձանագրությամբ առգրավված 2 լազերային սկավառակներով, որտեղ զետեղված են «HSBC» ՓԲ ընկերության բանկոմատների տեսագրությունները Ադի Իոան Բլազայի կողմից կատարված և ֆիքսված գողության հանցադեպերով՝ 05.12.2008թ. արձանագրությամբ առգրավված, 2008 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին «HSBC» բանկի բանկոմատներում կատարված գործարքների կապակցությամբ ստացված հետզանձումային պահանջների ցանկով՝ 2008 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության բանկոմատներում կատարված գործարքների կապակցությամբ ստացված հետզանձումային պահանջների ցանկով և լազերային սկավառակով, որտեղ զետեղված են նշված գործարքների լուսանկարահանումները, կատարված այդ բանկի բանկոմատների կողմից՝ 2008 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին «ԱԿԲԱ-Կրեդիտ Ակրիկոլ» ՓԲ ընկերության բանկոմատներում կատարված գործարքների կապակցությամբ ստացված հետզանձումային պահանջների ցանկով և լազերային սկավառակով, որտեղ զետեղված են այդ գործարքների լուսանկարահանումները, կատարված նշված բանկի բանկոմատների կողմից՝ 13.10.2008 թվականի N 132/08 գրությամբ «Արմենիան» քարդ» ՓԲ ընկերությունից ստացված լազերային սկավառակով, որտեղ զետեղված են «Արցախբանկ» ՓԲ ընկերության Տիգրան Մեծ 3/6 հասցեում տեղակայված բանկոմատի լուսանկարահանումները Ադի Իոան Բլազայի կողմից կատարված և ֆիքսված գողության հանցադեպերով՝ 13.10.2008թ. N 132/08 գրությամբ «Արմենիան» քարդ» ՓԲ-ից ստացված այն գործարքների ցանկը, որոնց կապակցությամբ «Արցախբանկ» ՓԲ ընկերությանը հետզանձումային պահանջներ են ներկայացվել արտերկրից, «Արցախբանկ» ՓԲ ընկերության Տիգրան Մեծ 3/6 հասցեում տեղակայված բանկոմատում կատարված վերոհիշյալ գործարքների թղթային հավելվածը՝ 11.09.2008, 11.12.2008, 17.12.2008, 30.03.2009 թվականների գնումային արձանագրություններով Կատալին Իոնուտ Ապետրի Ֆուրդույին լուսանկարով մեղադրյալ Ադի Իոան Բլազային ձանաչման ներկայացնելու մասին 22.02.2011 թվականի արձանագրությամբ: Մարիուս Լուպուին լուսանկարով մեղադրյալ Ադի Իոան Բլազային

Ճանաչման ներկայացնելու մասին 22.02.2011 թվականի արձանագրությամբ:

Իոնուտ Մարիան Ստենգաչուի լուսանկարով մեղադրյալ Ադի Իոան Բլագային ճանաչման ներկայացնելու մասին 22.02.2011 թվականի արձանագրությամբ:

Միհայ Ֆաուրին լուսանկարով մեղադրյալ Ադի Իոան Բլագային ճանաչման ներկայացնելու մասին 22.02.2011 թվականի արձանագրությամբ:

Քննչական փորձարարություն կատարելու 23.02.2011 թվականի արձանագրությամբ այն մասին, որ մեղադրյալ Ադի Իոան Բլագան մատնացույց է արել «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ «Տիգրան Մեծ» մասնաձյուղը, որտեղ ՀՀ տեսքով գողոնը Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի հանձնարարությամբ փոխարկել է եվրոյով, ինչպես նաև «Լևոն Թրավել» ՍՊԸ գրասենյակը, որտեղ գնել է Երևան-Վիեննա-Բուխարեստ 21.08.2008 թվականի չվերթի ավիատոմսը: Մատնադրոշմային և համակարգչատեխնիկական համալիր փորձաքննության թիվ 08-1166 եզրակացությամբ այն մասին, որ «Երևան» հյուրանոցում Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի կողմից վարձակալած սենյակում հայտնաբերված 10 հատ պլաստիկ քարտերը, ինչպես նաև «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ և «Անելիք Բանկ» ՓԲԸ բանկոմատներում հայտնաբերված 72 հատ պլաստիկ քարտերը պիտանի են օգտագործման համար որպես բանկային քարտեր, դրանց վրա առկա տպագրական գրառումները մասամբ կամ ամբողջությամբ չեն համապատասխանում մագնիսական շերտի վրա գրառված տեղեկություններին, չեն համապատասխանում սահմանված նմուշներին և կեղված են մագնիսական շերտի վերագրառման եղանակով՝ «Երևան» հյուրանոցում Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի կողմից վարձակալած սենյակում հայտնաբերված 10 հատ պլաստիկ քարտերը հանդիսանում են 4921828820858654, 4539780131720210, 4543133694831129, 4921827079829333, 4921819117976325, 4917541158941309, 4539794497475210, 4539785385530710, 4659010479966058, 4921827133063457 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները՝ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ բանկոմատներում հայտնաբերված 43 հատ պլաստիկ քարտերը հանդիսանում են 4659110018040009, 4539781872620049, 4659220064134000, 4658590570260031, 4659010042649017, 4539795171235200, 4659220064140015, 4539795163445072, 4539792456667504, 4462720158230025, 4539798585547020, 4539785053052443, 4921819624425816, 4539798712295006, 4539780119427135, 4539787073568317, 4539780094272126, 4658580360158008, 4658580079088009, 4659110342684001, 4539782217901029, 4659110306750004, 4658582470799002, 4539785202342604, 4659230065122003, 4659010372044102, 4539796178764085, 4539789040892309, 4539789698637139, 4539789726440100, 4539786140228269, 4921818096628535, 4539781881625104, 4659010309891104, 4539795898757205, 4539789482002235, 4462744688362116, 4917487527255007, 4921818442551829, 4917546309575583, 4917545392918346, 4917542394107853, 4921819282764738 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները՝ «Անելիք Բանկ» ՓԲԸ բանկոմատներում հայտնաբերված 29 հատ պլաստիկ քարտերը հանդիսանում են 4921816400394356, 6759676150760830, 6759683118544785, 6759647262169467, 4974927305836718, 4658580125043016, 4921817252767061, 6759675435674832, 675940341802153858, 675940382431080393, 6759675748121166, 6767104913517124, 4921817883253911, 6759686129207441, 6767096815236623, 6759682125713250, 4539791651421600, 4658580413680008, 4658582059989008, 4539781060081111, 675940132821223941, 4921816532421119, 4462740000316517, 4921819624863719, 4917315146734252, 4547423202356347, 6759692146113612, 4547421101271138, 6759684276494607 համարների բանկային

քարտերի կեղծ կրկնօրինակները՝

Համակարգչատեխնիկական փորձաքննության թիվ 08-1472 եզրակացությամբ այն մասին, որ «Ակբա-Կրեդիտ Ազրիկոլ բանկ» ՓԲ ընկերության բանկոմատից հայտնաբերված 4539793226028415 համարի պլաստիկ քարտը և «Անելիք բանկ» ՓԲ ընկերության բանկոմատից հայտնաբերված 4921817090417317 համարի պլաստիկ քարտը պիտանի են օգտագործման համար որպես բանկային քարտեր, դրանց վրա առկա տպագրական գրառումները մասամբ կամ ամբողջությամբ չեն համապատասխանում մագնիսական շերտի վրա գրառված տեղեկություններին, չեն համապատասխանում սահմանված նմուշներին և կեղծված են մագնիսական շերտի վերագրառման եղանակով՝ 2008 թվականի հուլիս-հոկտեմբեր ժամանակահատվածում «Զվարթնոց» օդանավակայանով ՀՀ մուտք գործած և մեկնած Ռումինիայի քաղաքացիների ցանկով, որտեղ նշված է, որ Կոռնել Կոնստանտին Ստենգաչուն և Ադի Իոան Բլազան ժամանել են ՀՀ նույն 18.08.2008 թվականի թիվ 965 չվերթով և կես րոպեի տարբերությամբ ժամը 00:50-ին հատել են սահմանային հսկողության գոտին՝ Օլիվեր Ռադուկու Մարիանը ՀՀ է ժամանել միայն 20.08.2008 թվականին և սահմանային հսկողությունն է անցել ժամը 23:06-ին՝

«Եվրոպա» հյուրանոցից ստացված գրությամբ այն մասին, որ Ադի Իոան Բլազան և Կոռնել Կոնստանտին Ստենգաչուն 2008 թվականի օգոստոսի 17-ից մինչև 18-ն ընկած ժամանակահատվածում բնակվել են նշված հյուրանոցի թիվ 215 սենյակում, Օլիվեր Ռադուկու Մարիանը 2008 թվականի օգոստոսի 20-ից մինչև 22-ը բնակվել է նույն հյուրանոցի թիվ 115 սենյակում, իսկ օգոստոսի 22-ից մինչև 28-ը թիվ 314 սենյակում, որտեղ օգոստոսի 24-ից բնակվել է նաև Ռումինիայի քաղաքացի Դանիել Ֆլորին Ֆեռառուն՝

«Էրեբունի» հյուրանոցից ստացված հաշվառման քարտերով այն մասին, որ Ադի Իոան Բլազան և Կոռնել Կոնստանտին Ստենգաչուն 2008 թվականի օգոստոսի 18-ից մինչև 20-ն ընկած ժամանակահատվածում բնակվել են նշված հյուրանոցի թիվ 705 սենյակում՝

«Կոնգրես» հյուրանոցից ստացված 08.09.2008 թվականի գրությամբ այն մասին, որ Ռումինիայի քաղաքացիներ Մարիուս Լուպուս և Կոռնել Կոնստանտին Ստենգաչուն բնակվել են այնտեղ 2008 թվականի օգոստոսի 22-ից մինչև 27-ը՝

«Ղ-Տելեկոմ» ՓԲ թնկերությունից ստացված Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի կողմից օգտագործվող 077-675035 հեռախոսահամարից, Օլիվեր Ռադուկու Մարիանի կողմից օգտագործվող 077-672911 հեռախոսահամարից, Դանիել Ֆլորին Ֆեռառուի կողմից օգտագործվող 077783691 հեռախոսահամարից, Ադի Իոան Բլազայի կողմից օգտագործվող 077-675024 հեռախոսահամարից, Մարիուս Լուպուի կողմից օգտագործվող 077-737116 հեռախոսահամարից կայացած ելքային ու մուտքային զանգերի վերծանումներով:

Ղատարանը, հետազոտելով քրեական գործով ձեռք բերված ապացույցները և զննատեղում դրանց վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ գործի լուծման համար բավարարողական տեսանկյունից, հանգում է այն հետևության, որ ամբաստանյալ Ադի Իոան Բլազան կատարած հանցավոր արարքումներում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 3-րդ մասի 1-ի ու 2-րդ կետերով իրեն մասնակի մեղավոր ճանաչելով նպատակ է հետապնդում մեղմացնելու իր կողմից կատարած արարքները և նրա ցուցմունքներն այն մասին, որ ինքը Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի ճնշման ներքո է կատարել իրեն վերագրված բոլոր հանցագործությունները և մեղավոր է միայն «Վեսթերն Յունիոնի» համակարգի միջոցով Ռումինիա հարազատներին 2940 ԱՄՆ դոլարի չափով փոխանցված գումարի հափշտակության մեջ, իսկ

մնացած գողոնը գողացել ու հանձնել է Կոռնել Կոնստանտին Ստենգաչուին՝ Ինչ վերաբերվում է Կորինա Դաբիժայի տվյալներով «Վեսթերն Յունիոնի» համակարգի միջոցով փոխանցված 933 ԱՄՆ դոլարի, ապա այն փոխանցել է Ստենգաչուի հանձնարարությամբ վերջինիս կնոջը՝ Այդ գումարն իրեն Երևանում տվել է Կոռնելը, միասին գնացել են փոխանցման կետ, նա տվել է իր անձնագիրը և Կորինա Դաբիժայի տվյալները և ցուցում է տվել գումարը այդ անվամբ նրա կնոջը՝ Հայաստանում գտնվելու ընթացքում անգամ նույնիսկ ցանկացել է դիմել իրավապահ մարմիններին և հայտնել ամբողջ իրողությունը, սակայն լինելով օտարերկրացի և գտնվելով Ստենգաչուի և վերջինիս ընկերների ճնշման և հսկողության ներքո, չի կարողացել դիմել այդ քայլին՝ Հայաստանում աշխատելով նրանց համար, նկատել է, որ վերջիններս իրենից որոշ հանգամանքներ թաքուն են պահել, խաբել են իրեն: Ստենգաչուն հանցավոր գործողությունն իրականացնելու նպատակով իրենից վերցրել է անձնագիրը և ստիպել, որպեսզի ինքը կատարի նրա թելադրած բոլոր վտանգավոր արաքները՝ Միաժամանակ իրենից վերցրել է բոլոր գողոնը, որպեսզի ինքը, չունենալով գումար, չկարողանա փախուստի դիմել և հեռանալ Հայաստանից, արժանահավատ չէ՝ նպատակ է հետապնդում մեղմացնելու իր կողմից կատարած հանցանքները և նրա ցուցմունքները հերքվում են քրեական գործով ձեռք բերված ու դատարանում հետազոտված դատապարտյալներ Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի, Դանիել Ֆլորին Ֆեռառուի, վկաներ Քրիստինա Մարտիրոսյանի, Հայկուհի Մարտիրոսյանի, Լիանա Մնացականյանի, Մարինե Խաչատրյանի ցուցմունքներով, ինչպես նաև վերոհիշյալ ապացույցներով:

Դատարանի իրավական վերլուծությունները.

Այսպիսով, ընդհանուր կարգով սահմանված դատաքննությամբ հետազոտված ապացույցների հիման վրա դատարանն ապացուցված է համարում, որ ամբաստանյալ Ադի Իոան Բլազան կազմակերպված խմբի կազմում կատարել է առանձնապես խոշոր չափերով գույքի գաղտնի հափշտակություն՝ գողություն, ինչպես նաև մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտները օրինականացրել է՝ որպիսի արարքների համար նա պետք է պատասխանատվության ենթարկվի ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով: ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատժի չափը և տեսակը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով:

Ուսումնասիրելով ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, ամբաստանյալ Ադի Իոան Բլազայի նկատմամբ, նրա կատարած հանցագործություններից յուրաքանչյուրի համար պատիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում հանցագործության բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, հանցավորի անձը, այն, որ նա նախկինում դատված է եղել: Որպես ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք դատարանը հաշվի է առնում հանցագործության մեջ առանձնապես ակտիվ դերը, իսկ նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ դատարանը չի արժանագրում: Ամբաստանյալ Ադի Իոան Բլազան իր կատարած՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված յուրաքանչյուր հանցագործության համար ենթակա է

պատժի ազատագրկման ձևով:

Ամբաստանյալ Ադի Իոան Բլազայի նկատմամբ պատիժ նշանակելիս, դատարանը գտնում է, որ պետք է կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 66 հոդվածի 4-րդ մասը և յուրաքանչյուր հանցագործության համար առանձին պատիժ նշանակելով, վերջնական պատիժ պետք է նշանակել պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով:

Քննարկելով քաղաքացիական հայցերի հատուցման հարցերը՝ դատարանը գտնում է, որ քաղաքացիական հայցվորներ՝ «ՎՏԲ-Հայաստան բանկ», «Անելիք Բանկ», «Եյ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան», «Արցախբանկ» և «Ակբա-Կրեդիտ-Ազրիկոլ բանկ» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից ներկայացված քաղաքացիական հայցերը պետք է թողնել առանց քննության՝ և տուժողներին, քաղաքացիական հայցվորներին պետք է իրավունք վերապահել քաղաքացիական դատավարության կարգով քաղաքացիական հայց ներկայացնել դատարան:

Գործով գույքային վնասի հատուցման այլ պահանջներ չեն ներկայացվել:

Դատարանը քննարկելով ամբաստանյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցի հարցը, գտնում է, որ ամբաստանյալ Ադի Իոան Բլազայի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը, պետք է թողնել անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Եզրափակիչ մաս.

Դեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 357-360 հոդվածներով, դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց՝

Ադի Իոան Բլազային մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով և նրան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով դատապարտել ազատագրկման 6 /վեց/ տարի ժամկետով՝ ամբողջ գույքի բռնագրավումով, որը չի կարող գերազանցել հանցագործությամբ հասցված վնասի և հանցավոր ճանապարհով ձեռք բերված օգուտի չափը, ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով՝ ազատագրկման 5 /հինգ/ տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66 հոդվածի 4-րդ մասի կիրառմամբ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով 6 /վեց/ տարի ազատագրկմանը գումարել ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով 5 /հինգ/ տարի ազատագրկումից 3 /երեք/ տարի ազատագրկումը և վերջնական պատիժ նշանակել՝ ազատագրկում՝ 9 /ինը/ տարի ժամկետով՝ ամբողջ գույքի բռնագրավումով, որը չի կարող գերազանցել հանցագործությամբ հասցված վնասի և հանցավոր ճանապարհով ձեռք բերված

Ադի Իոան Բլազայի պատժի սկիզբը հաշվել 25.05.2010 թվականից, խափանման միջոցը՝ կալանավորումը, թողնել անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Քաղաքացիական հայցերը թողնել առանց քննության: Տուժողներին, քաղաքացիական հայցվորներին իրավունք վերապահել քաղաքացիական դատավարության կարգով քաղաքացիական հայց ներկայացնել դատարան:

Սույն դատավճիռը վերաքննության կարգով կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ հրապարակման պահից մեկ ամսվա ընթացքում:

	ՂԱՏԱՎՈՐ՝ Ա. ԲԵԿԹԱՇՅԱՆ
Ղատական ակտի ամսաթիվը:	28-10-2011
Այլ նշումներ:	
Գործը հանձնվել է գրասենյակ:	25-11-2011
Էջերի քանակ:	344, 301, 234, 298, 313, 205, 214, 313
Գործին կից նյութերը:	
Այլ նշումներ:	
Գործը ուղարկվել է:	06-12-2011
Էջերի քանակը:	349, 301, 234, 298, 313, 205, 214, 313, 123
Գործին կից նյութերը:	
Ուր(ղատարան):	Քրեական և զինվորական վերաք.
Ուր:	
Ելքի գրության համարը:	Ե-33687
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	09-12-2011
Ամսաթիվ:	06-04-2012
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	12-04-2012
Այլ նշումներ:	
Գործը հանձնվել է գրասենյակ:	25-04-2012
Էջերի քանակ:	349, 301, 234, 298, 313, 205, 214, 313, 123, 104, 134
Գործին կից նյութերը:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	25-04-2012
Էջերի քանակը:	349, 301, 234, 298, 313, 205, 214, 313, 123, 104, 134
Գործին կից նյութերը:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	31-05-2012
Ներկայացվել է դիմում միջնորդություն:	Կատարողական թերթը պարզաբանելու մասին
Ղատավոր	
Ղատարանի անվանում:	Կենտրոն և Նորք-Մարաշ
Ղատավորի անուն:	Արշակ Վարդանյան
Նշանակվել է ղատական նիստ:	11-06-2012

Միջնորդության ընթացքը:
Որոշումը:

Մերժվել է
ԵԿԴ/0088/01/11

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կատարողական թերթի պարզաբանման վերաբերյալ դիմումը քննության առնելու մասին

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը, նախագահությամբ՝ դատավոր Արշակ Վարդանյանի, քարտուղարությամբ՝ Ժենյա Ավետիսյանի, մասնակցությամբ՝ դիմումատու՝ ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության Երևան քաղաքի դատախազության հայցերով և քրեական գործերով բռնագանձումների բաժնի հարկադիր կատարող Սերգեյ Սիմոնյանի, ՀՀ գլխավոր դատախազության դատախազ Գրիգոր Տիգրանյանի, 2012թ. հունիսի 18-ին դռնբաց դատական նիստում, քննության առնելով Ադի Իոան Բլագայի վերաբերյալ տրված կատարողական թերթը պարզաբանելու վերաբերյալ դիմումը,

Պ Ա Ր Ջ Ե Ց՝

Թիվ ԵԿԴ0088/01/11 քրեական գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը, 2011թ. հոկտեմբերի 28-ի դատավճռով Ադի Իոան Բլագային մեղավոր է ճանաչել նրանում, որ վերջինս կազմակերպված խմբի (այդ թվում՝ Կոռնել Կոնստանտին Ռոմիկայի Ստենգաչուի մասնակցությամբ) կազմում կատարել է առանձնապես խոշոր չափերով գույքի գաղտնի հափշտակություն՝ գողություն, ինչպես նաև մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելու մեջ և ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով դատապարտել է ազատազրկման 6 /վեց/ տարի ժամկետով՝ ամբողջ գույքի բռնագրավումով, որը չի կարող գերազանցել հանցագործությամբ հասցված վնասի և հանցավոր ճանապարհով ձեռք բերված օգուտի չափը, ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով՝ ազատազրկման 5 /հինգ/ տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառմամբ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով 6 /վեց/ տարի ազատազրկմանը գումարելով ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով 5 /հինգ/ տարի ազատազրկումից 3 /երեք/ տարի ազատազրկումը՝ Ղատարանը նրա նկատմամբ վերջնական պատիժ է նշանակել ազատազրկում՝ 9 /ինը/ տարի ժամկետով՝ ամբողջ գույքի բռնագրավումով, որը չի կարող գերազանցել հանցագործությամբ հասցված վնասի և հանցավոր ճանապարհով ձեռք բերված օգուտի չափը:

Նույն դատավճռով դատարանը քաղաքացիական հայցերը թողել է առանց քննության՝ տուժողներին և քաղաքացիական հայցվորներին իրավունք վերապահվելով քաղաքացիական դատավարության կարգով քաղաքացիական հայց ներկայացնել դատարան: Տվյալ քրեական գործով արգելանքի տակ գույք, այդ թվում՝ դրամական միջոցներ չեն եղել, իրեղեն ապացույցներ՝ ևս, հետևաբար՝ Ղատարանը դրանց տնօրինմանը չի անդրադարձել: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2012թ. հունվարի 25-ի որոշմամբ վերոնշյալ դատավճիռը թողել է նույնը, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանը 2012թ. մարտի 28-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձրել է: Ղատարան ակտն օրինական ուժի մեջ է մտել 2012թ. մարտի 28-ին և սահմանված կարգով ուղարկվել կատարման:

Նույն օրը, ժամը 15:41-ից մինչև 15:43-ն ընկած ժամանակահատվածում, <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ն Էջմիածին քաղաքում տեղակայված բանկոմատից 4539793462995145, 4539798642316013 և 4658590095868003 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով հափշտակել է ընդհանուր առմամբ 250.000 դրամ, ընդ որում 100.000-ական դրամ հափշտակել է 4539793462995145 և 4539798642316013 համարների քարտերի և 50.000 դրամ 4658590095868003 համարի քարտի կրկնօրինակներով:

Նույն օրը, <<Կոնվերս բանկ>> ՓԲԸ-ն Էջմիածին քաղաքի Մաշտոցի փողոցում տեղադրված N 10 բանկոմատից 4539794497475210 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով հափշտակել է 100.000 դրամ:

Նույն օրը, ժամը 16:05-ից մինչև 16:11-ն ընկած ժամանակահատվածում, <<ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ բանկ>> ՓԲԸ-ն Էջմիածին քաղաքում տեղակայված բանկոմատից, օգտագործելով 4921818558219211, 6759686894011069, 4658591057395001, 4539780131720210, 676740292621105175, 4921818838653619, 4658591039780007, 4462782064102136, 4547421104957618, 675940291251329006, 4539795107268226 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, հափշտակել է ընդհանուր առմամբ 600.000 դրամ կանխիկ գումար, ընդ որում 100.000-ական դրամ հափշտակել է 4658591057395001, 4539780131720210, 4921818838653619, 4658591039780007, 4462782064102136, 4539795107268226 համարների քարտերի կրկնօրինակներով:

Նույն օրը, ժամը 16:18-ից մինչև 16:26-ն ընկած ժամանակահատվածում, օգտագործելով 4539794447228214, 676740292621105175, 6759686894011069, 675940291251329006, 6767095412068389, 4921816809529628, 4658590681886005, 4539795163445072, 4659210180217003, 4539791882079334, 4547422004940076, 4539797889942069, 4539796777407201, 4539798274432013, 4658590055759010, 4539795663592175 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, <<Անելիք Բանկ>> ՓԲԸ-ն էջմիածին քաղաքում տեղակայված բանկոմատից հափշտակել ընդհանուր առմամբ 400.000 դրամ կանխիկ գումար, ընդ որում 100.000-ական դրամ հափշտակել է 4539794447228214, 675940291251329006, 6767095412068389, 4539795663592175 համարների քարտերի կրկնօրինակներով:

Նույն օրը, ժամը 17:01-ից մինչև 17:04-ն ընկած ժամանակահատվածում, 4539785385530710, 4539791264470218, 4539794189245137, 4658590054965006 և 4659020577492006 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ն Երևանի Կիևյան 19 հասցեում տեղակայված բանկոմատից հափշտակել է ընդհանուր առմամբ 500.000 դրամ, ընդ որում 100.000-ական դրամ հափշտակել է յուրաքանչյուր քարտի կրկնօրինակով:

Նույն օրը, ժամը 17:42-ից մինչև 17:47-ն ընկած ժամանակահատվածում, օգտագործելով 4658590309247002, 4659210206379001, 4539794693169203 և 4539793794904203 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները <<HSBC բանկ-Հայաստան>> ՓԲԸ-ն Երևանում տեղակայված A832 բանկոմատից հափշտակել է ընդհանուր առմամբ 400.000 դրամ կանխիկ գումար, ընդ որում 100.000-ական դրամ հափշտակել է չուրաքանչյուր վերոհիշյալ քարտի կրկնօրինակով:

25.08.2008թ., ժամը 02:27-ից մինչև 02:32-ն ընկած ժամանակահատվածում, Ղանիել Ֆլորին Ֆեռառուն, օգտագործելով 5434604173828215, 4921828426411882, 4493527031093733, 4539781649958023 և 4116320005649491 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ն Կիևյան 19 հասցեում տեղակայված բանկոմատից փորձել է ստանալ 531.000 դրամ, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով կարողացել է հափշտակել ընդամենը 181.000 դրամ կանխիկ գումար, ընդ որում 150.000 դրամը հափշտակել է 4493527031093733 համարի քարտի կրկնօրինակով, իսկ 31.000 դրամը 4116320005649491 համարի քարտի կրկնօրինակով:

Նույն օրը, ժամը 09:35-ից մինչև 09:53-ն ընկած ժամանակահատվածում, Ադի Իոան Բլազան, օգտագործելով 4539794497475210, 4539780131720210, 4539785385530710, 4539787144806407, 4659010479966058, 4917541158941309, 4921828820858654, 4921819117976325, 4921827133063457, 4462726565089813 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները <<HSBC բանկ-Հայաստան>> ՓԲԸ-ն Երևանում տեղակայված A829 բանկոմատից հափշտակել է ընդհանուր առմամբ 1.000.000 դրամ կանխիկ գումար, ընդ որում:100.000-ական դրամ հափշտակել է վերոհիշյալ յուրաքանչյուր քարտի կրկնօրինակով:

Նույն օրը, ժամը 11:29-ից մինչև 11:31-ն ընկած ժամանակահատվածում, օգտագործելով 4539795171235200, 4921817935084637, 4567263131576028, 4921816974124841, 4921818558219211 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ն Երևանի Մաշտոցի 10 հասցեում տեղակայված բանկոմատից փորձել է հափշտակել 500.000 դրամ կանխիկ գումար, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով դա չի հաջողվել:

Նույն օրը, ժամը 12:10-ից մինչև 12:19-ն ընկած ժամանակահատվածում, Ղանիել Ֆլորին Ֆեռառուն վերահսկել է <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ն էջմիածին քաղաքում

տեղակայված բանկոմատի հարակից տարածքը, իսկ հանցակից Ադի Իոան Բլազան, օգտագործելով 4462782064102136, 4462720158230025, 4539798468814034, 4539795163445072, 675940291251329006, 4543132389648426, 6767095412068389, 4659210180217003 և 4659210206379001 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, փորձել է ստանալ 650.000 դրամ, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով կարողացել է հափշտակել ընդամենը 350.000 դրամ կանխիկ գումար, ընդ որում 100.000-ական դրամ հափշտակել է 4539798468814034 և 4543132389648426 համարների քարտերի կրկնօրինակներով և 150.000 դրամ 4659210206379001 համարի քարտի կրկնօրինակով: Նույն օրը, ժամը 11:29-ին, Ղանիել Ֆլորին Ֆեռառուն <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ն Երևանի Մաշտոցի 10 հասցեում տեղակայված բանկոմատից 4539781780864044 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով հափշտակել է 10.000 դրամ: Նույն օրը, ժամը 12:43-ից մինչև 12:50-ն ընկած ժամանակահատվածում, Ադի Իոան Բլազան, օգտագործելով 6759686894011069, 4658591039780007, 4539794189245137, 4539795663592175, 4921818838653619, 4539795107268226, 4539791264470218, 4658590054965006 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, <<Անելիք Բանկ>> ՓԲԸ-ն Էջմիածին քաղաքում տեղակայված բանկոմատից հափշտակել է ընդհանուր առմամբ 300.000 դրամ կանխիկ գումար, ընդ որում 150.000-ական դրամ հափշտակել է 4658591039780007 և 4539791264470218 համարների քարտերի կրկնօրինակներով, իսկ հանցակից Ղանիել Ֆլորին Ֆեռառուն վերահսկել է հարակից տարածքը: Նույն օրը, ժամը 12:58-ից մինչև 12:59-ն ընկած ժամանակահատվածում, Ղանիել Ֆլորին Ֆեռառուն վերահսկել է <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ն Երևանի Արգիշտի 7 հասցեում տեղակայված բանկոմատի հարակից տարածքը, իսկ Ադի Իոան Բլազան 4539793794904203 և 4921818838653619 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով հափշտակել է ընդհանուր առմամբ 110.000 դրամ, ընդ որում 100.000 դրամը հափշտակել է 4539793794904203 համարի քարտի կրկնօրինակով և 10.000 դրամը 4921818838653619 համարի քարտի կրկնօրինակով: Նույն օրը, ժամը 23:24-ին, Ադի Իոան Բլազան, օգտագործելով 4917484284977501 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակը, <<HSBC բանկ-Հայաստան>> ՓԲԸ-ն Երևանում տեղակայված A829 բանկոմատից հափշտակել է 50.000 դրամ կանխիկ գումար: 26.08.2008թ., ժամը 00:25-ից մինչև 00:46-ն ընկած ժամանակահատվածում, Ադի Իոան Բլազան, օգտագործելով 4917547435475185, 4547422007408279, 4929458100886001, 6767104721464832, 4921827642680320, 4658590112583007, 4539798585547020, 4177270020151476, 676740290241307916, 4917318453984163, 4917314006983869, 4543133694831129, 4921818549182932, 6759674863345528, 4462721563214737, 4539796771579120, 4462619844501734, 4917496839098005, 4659210011140010, 4547424009178553, 4462783338203692, 4547427022160342, 4921817879760515 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ն Էջմիածին քաղաքում տեղակայված բանկոմատից փորձել է ստանալ 2.935.000 դրամ, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով կարողացել է հափշտակել ընդամենը 650.000 դրամ կանխիկ գումար, ընդ որում 50.000 դրամ հափշտակել է 4921827642680320 համարի քարտի կրկնօրինակով, 150.000-ական դրամ 4658590112583007 և 4543133694831129 համարների քարտերի կրկնօրինակներով, 100.000-ականը դրամ էլքազրել է 4462619844501734, 4921817879760515, 4177270020151476 համարների քարտերի կրկնօրինակներով: Նույն օրը, ժամը 00:52-ից մինչև 01:00-ն ընկած ժամանակահատվածում, օգտագործելով 4539796315341201,

4921827079829333, 675940477291714899, 4539796609591065, 4539797063690161, 4917544389274847 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներն, <<Անելիք Բանկ>> ՓԲԸ-ն էջմիածին քաղաքում տեղակայված բանկոմատից հափշտակել է ընդհանուր առմամբ 600.000 դրամ կանխիկ գումար, յուրաքանչյուր քարտի կրկնօրինակով հափշտակել է 100.000-ական դրամ:

Նույն օրը, 4917484284977501 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով <<Կոնվերս Բանկ>> ՓԲԸ-ն ընկերության Երևանի Բագրատունյաց փողոցում տեղադրված N 15 բանկոմատից հափշտակել է 140.000 դրամ:

Նույն օրը, ժամը 01:25-ից մինչև 01:30-ն ընկած ժամանակահատվածում, օգտագործելով 4539795831386138, 4659210081347008, 4658591084090005, 4921819908089916, 4539796069237050, 4917544168378777, 4658590080678003, 4929458100886001 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, <<ՎՏԲ-Հայաստան Բանկ>> ՓԲԸ-ն Երևանի Գ.Նժդեհի 8 հասցեում տեղակայված բանկոմատից փորձել է ստանալ 1.050.000 դրամ, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով կարողացել է հափշտակել ընդամենը 250.000 դրամ կանխիկ գումար, ընդ որում 50.000-ական դրամ հափշտակել է 4539795831386138 ու 4917544168378777 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով և 150.000 դրամ 4658591084090005 համարի քարտի կրկնօրինակով:

Նույն օրը, ժամը 09:49-ից մինչև 09:50-ն ընկած ժամանակահատվածում, օգտագործելով 4539794693169203 և 4543133694831129 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, <<HSBC Բանկ-Հայաստան>> ՓԲԸ-ն Երևանում տեղակայված A829 բանկոմատից հափշտակել է ընդհանուր առմամբ 250.000 դրամ կանխիկ գումար, ընդ որում 150.000 ՀՀ դրամ հափշտակել է 4539794693169203 քարտի կրկնօրինակով և 100.000 դրամ 4543133694831129 համարի քարտի կրկնօրինակով:

Նույն օրը, ժամը 9:55-ից մինչև 10:05-ն ընկած ժամանակահատվածում, 4539797063690161, 4658591084090005, 4921827133063457 և 4539780131720210 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով <<ՎՏԲ-Հայաստան Բանկ>> ՓԲԸ-ն ընկերության Երևանի Խանջյանի փողոցում տեղակայված բանկոմատից հափշտակել է ընդհանուր առմամբ 500.000 դրամ, ընդ որում 150.000-ական դրամ հափշտակել է 4539797063690161 և 4658591084090005 համարների քարտերի կրկնօրինակներով և 100.000-ական դրամ 4921827133063457 և 4539780131720210 համարների քարտերի կրկնօրինակներով:

Նույն օրը, ժամը 10:21-ից մինչև 10:23-ն ընկած ժամանակահատվածում, օգտագործելով 4659010479966058 և 4917541158941309 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, <<HSBC Բանկ-Հայաստան>> ՓԲԸ-ն Երևանում տեղակայված A829 բանկոմատից հափշտակել է ընդհանուր առմամբ 200.000 դրամ կանխիկ գումար, ընդ որում 100.000-ական դրամ հափշտակել է յուրաքանչյուր վերոհիշյալ քարտի կրկնօրինակով:

Նույն օրը, ժամը 10:31-ից մինչև 10:32-ն ընկած ժամանակահատվածում, օգտագործելով 4539794497475210 և 4921828820858654 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, <<HSBC Բանկ-Հայաստան>> ՓԲԸ-ն Երևանում տեղակայված A818 բանկոմատից հափշտակել է ընդհանուր առմամբ 200.000 դրամ կանխիկ գումար, ընդ որում 100.000-ական դրամ հափշտակել է յուրաքանչյուր վերոհիշյալ քարտի կրկնօրինակով:

Նույն օրը, ժամը 10:51-ից մինչև 10:55-ն ընկած ժամանակահատվածում, օգտագործելով 4462726565089813, 4658591057395001, 4539785385530710, 4547423009302213, 6767094284734269, 675940472241248502, 4921819117976325 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, <<ՎՏԲ-

Հայաստան բանկ>> ՓԲԸ-ն Երևանի Կիևյան 19 հասցեում տեղակայված բանկոմատից փորձել է ստանալ 700.000 դրամ, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով կարողացել է հափշտակել ընդամենը 300.000 դրամ կանխիկ գումար, ընդ որում 100.000-ական դրամ հափշտակել է 4462726565089813, 4539785385530710, 4921819117976325 համարների քարտերի կրկնօրինակներով:

Նույն օրը, ժամը 12:01-ից մինչև 12:04-ն ընկած ժամանակահատվածում, 4539793794904203, 4539798468814034 և 4658590054965006 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ն էջմիածին քաղաքում տեղակայված բանկոմատից հափշտակել է ընդհանուր առմամբ 275.000 դրամ, ընդ որում 150.000 դրամ հափշտակել է 4539793794904203 համարի քարտի կրկնօրինակով, 100.000 դրամ 4539798468814034 համարի քարտի կրկնօրինակով և 25.000 դրամ 4658590054965006 համարի քարտի կրկնօրինակով:

Նույն օրը, ժամը 12:24-ից մինչև 13:00-ն ընկած ժամանակահատվածում, Ադի Իրան Բլազան, օգտագործելով 4547425103666856, 4659020577492006, 4658591039780007, 4658590095868003, 4659210206379001, 4543132389648426, 4921818838653619, 4921817935084637, 4462619844501734, 4659210011140010, 4658590112583007, 6759674712752635, 4539798074224107, 4658590080678003, 4921827642680320, 4539795831386138, 4177270020151476, 675940477291714899, 4539796609591065, 4921817879760515 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, <<Անելիք Բանկ>> ՓԲԸ-ն էջմիածին քաղաքում տեղակայված բանկոմատից հափշտակել է ընդհանուր առմամբ 480.000 դրամ կանխիկ գումար, ընդ որում 150.000 դրամ հափշտակել է 4658591039780007 համարի քարտի կրկնօրինակով, 100.000-ական դրամ հափշտակել է 4543132389648426, 4462619844501734 համարների քարտերի կրկնօրինակներով, 50.000 դրամ 4539798074224107 համարի քարտի կրկնօրինակով, 40.000-ական դրամ 4539795831386138 և 4539796609591065 համարների քարտերի կրկնօրինակներով, իսկ հանցակից Ղանիել Ֆլորին Ֆեռառուն վերահսկել է հարակից տարածքը:

Նույն օրը, ժամը 14:08-ից մինչև 14:14-ն ընկած ժամանակահատվածում, Ադի Իրան Բլազան, օգտագործելով 4658590112583007, 4658590095868003, 4921819794793217, 4659210206379001 և 4658590080678003 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ն Երևանի Արգիշտի 7 հասցեում տեղակայված բանկոմատից փորձել է ստանալ 201.000 դրամ, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով հափշտակել է ընդամենը 60.000 դրամ կանխիկ գումար 20.000 դրամը 4658590112583007 համարի բանկային քարտի կրկնօրինակով, 40.000 դրամն էլ 4658590095868003 համարի բանկային քարտի կրկնօրինակով, իսկ հանցակից Ղանիել Ֆլորին Ֆեռառուն վերահսկել է մոտակա տարածքը:

Նույն օրը, ժամը 23:56-ին, Ադի Իրան Բլազան <<HSBC բանկ-Հայաստան>> ՓԲԸ-ն Երևանում տեղակայված A842 բանկոմատից 4921817090417317 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով հափշտակել է 100.000 դրամ:

27.08.2008թ., ժամը 0:06-ից մինչև 0:08-ն ընկած ժամանակահատվածում, 4659010861715022 և 4543132624196322 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով <<HSBC բանկ-Հայաստան>> ՓԲԸ-ն Երևանում տեղակայված A843 բանկոմատից հափշտակել է ընդհանուր առմամբ 200.000 դրամ, յուրաքանչյուր քարտով 100.000-ական դրամ:

Նույն օրը, ժամը 00:15-ից մինչև 00:45-ն ընկած ժամանակահատվածում, Ադի Իրան Բլազան և Ղանիել Ֆլորին Ֆեռառուն հաջորդաբար օգտագործելով 4659103125013118, 4921817090417317, 4659010861715022, 4462729220452525,

4543132624196322, 4462785124725077, 6759676149981737, 4917540161451132, 4917542163056356, 4917545311217226, 4547421202368908, 4921819401055513, 67594005000007986, 6759686411824739, 4921816758437815, 4539783272066021, 4539789261668164, 4658590904274005, 4539782987449019, 4659011029246025, 4462785388693151, 6759673235921719, 6304992260610611, 4917542469109701, 4659010994513039, 4917316264735238, 4917545388692756, 4658582258650005, 4539782257863030, 4539782331328174 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, փորձել են <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ն Երևանի Գ.Նժդեհի 8 հասցեում տեղակայված բանկոմատից ստանալ 1.581.000 դրամ, սակայն իրենց կամքից անկախ հանգամանքներով հափշտակել են ընդամենը 426.000 << դրամ կանխիկ գումար, որից 66.000 դրամը Ղանիել Ֆլորին Ֆեռառուն հափշտակել է 4543132624196322 համարի քարտի կրկնօրինակով, 10.000-ական դրամ Ադի Իոան Բլազան հափշտակել է 4547421202368908 և 4921816758437815 համարների քարտերի կրկնօրինակներով, 145.000 դրամ 4539782987449019 համարի քարտի կրկնօրինակով, 25.000 դրամ 4917316264735238 համարի քարտի կրկնօրինակով և 170.000 դրամ 4539782257863030 համարի քարտի կրկնօրինակով:

Նույն օրը, ժամը 4:05-ից մինչև 4:07-ն ընկած ժամանակահատվածում, Ադի Իոան Բլազան 4539785385530710, 4921819117976325 և 4659010861715022 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով <<HSBC բանկ-Հայաստան>> ՓԲԸ-ն Երևանում տեղակայված A843 բանկոմատից հափշտակել է ընդհանուր առմամբ 350.000 դրամ, ընդ որում 100.000-ական դրամ հափշտակել է 4539785385530710 և 4921819117976325 համարների բանկային քարտերի կրկնօրինակներով և 150.000 դրամ 4659010861715022 համարի քարտի կրկնօրինակով:

Նույն օրը, ժամը 4:07-ից մինչև 4:13-ն ընկած ժամանակահատվածում, Ադի Իոան Բլազան 4921828820858654, 4659010479966058, 4917541158941309, 4539780131720210, 4921827133063457, 4539794497475210, 4543133694831129 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով <<HSBC բանկ-Հայաստան>> ՓԲԸ-ն Երևանում տեղակայված A843 բանկոմատից հափշտակել է ընդհանուր առմամբ 650.000 դրամ, ընդ որում 100.000-ական դրամ հափշտակել է 4921828820858654, 4659010479966058, 4539780131720210, 4921827133063457, 4539794497475210, 4543133694831129 համարների քարտերի կրկնօրինակներով և 50.000 դրամ 4917541158941309 համարի քարտի կրկնօրինակով:

Նույն օրը, ժամը 4:15-ին, Ղանիել Ֆլորին Ֆեռառուն 4543132624196322 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով <<HSBC բանկ-Հայաստան>> ՓԲԸ-ն Երևանում տեղակայված A842 բանկոմատից հափշտակել է 100.000 դրամ:

Նույն օրը, ժամը 4:18-ից մինչև 4:23-ն ընկած ժամանակահատվածում, Ադի Իոան Բլազան 4539793794904203, 4539798468814034, 4659210011140010 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով <<HSBC բանկ-Հայաստան>> ՓԲԸ-ն Երևանում տեղակայված A842 բանկոմատից հափշտակել է ընդհանուր առմամբ 300.000 դրամ, ընդ որում 100.000-ական դրամ հափշտակել է յուրաքանչյուր քարտով:

Նույն օրը, ժամը 04:31-ից մինչև 04:37-ն ընկած ժամանակահատվածում, Ադի Իոան Բլազան և Ղանիել Ֆլորին Ֆեռառուն հաջորդաբար օգտագործել են 4539793794904203, 4539798074224107, 4539795831386138, 4658590095868003, 4543132389648426, 4539796609591065, 4658591039780007 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները և «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ն Երևանի Գ.Նժդեհի 8 հասցեում տեղակայված բանկոմատից փորձել են ստանալ 810.000 դրամ, սակայն իրենց կամքից անկախ հանգամանքներով Ղանիել

Ֆեռառուին հաջողվել է հափշտակել ընդամենը 160.000 դրամ, ընդ որում 60.000 դրամը հափշտակել 4543132389648426 համարի քարտի կրկնօրինակով և 100.000 դրամը 4658591039780007 համարի քարտի կրկնօրինակով:

Իրավապահ մարմինների կողմից հանցակիցներին 27.08.2008թ. վնասագերծելուց հետո, Կոռնել Կոնստանտին Ստենգաչուն 28.08.2008թ., ժամը 02:20-ին, օգտագործելով 675940090771390880, 4539794801554239 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ն Երևանի Կոյունի 6 հասցեում տեղակայված բանկոմատից փորձել է ստանալ 11.000 դրամ կանխիկ գումար, սակայն դա նրան չի հաջողվել՝ իր կամքից անկախ հանգամանքներով:

Մի քանի ժամ անց, ժամը 06:26-ից մինչև 6:29-ն ընկած ժամանակապատվածում, Կոռնել Կոնստանտին Ստենգաչուն, օգտագործելով 4659010861715022, 4462787101837008, 6759676149981737, 5434604173828215, 4539797084663106, 4539798100625012 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ն Գորիս քաղաքում տեղակայված բանկոմատից փորձել է ստանալ 600.000 դրամ, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով կարողացել է հափշտակել ընդամենը 300.000 դրամ կանխիկ գումար, ընդ որում 100.000-ական դրամ հափշտակել է 4462787101837008, 4539797084663106 ու 4539798100625012 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով:

Դրա հետ մեկտեղ, Կոռնել Կոնստանտին Ստենգաչուն հանցակիցներին ցուցում է տվել բանկոմատներից << դրամի տեսքով գողացված գումարը փոխարկել արտարժույթի, իսկ վերջիններս, տեղյակ լինելով այդ գումարի ծագման աղբյուրի հանցավոր բնույթի վերաբերյալ, ձեռնամուխ են եղել այդ եղանակով հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելուն, որի արդյունքում առանձնապես խոշոր չափերով՝ 10.131.720 դրամ գումարը փոխարկվել է 22.540 եվրո արտարժույթի:

Այսպես. Ադի Իոան Բլազան 25.08.2008թ. <<Արդշինինվեստբանկ>> ՓԲԸ-ն Երևանի <<Տիգրան Մեծ>> մասնաճյուղում 1.317.120 դրամ գումարն իր անձնագրային տվյալներով փոխարկել է 2.940 եվրոյի, որից 1.000 ԱՄՆ դոլարը նույն օրը <Ինեկոբանկ>> ՓԲԸ-ն <<Արմյան-18>> մասնաճյուղից <<Վեսթերն Յունիոն>> համակարգով փոխանցել է Ռումինիա՝ Դումային: Այնուհետև, տարբերություն կազմող գումարը՝ 2.100 եվրոն, <<Ամերիաբանկ>> ՓԲԸ-ն Երևանի Վ.Սարգսյան 2 հասցում տեղակայված մասնաճյուղում փոխարկել է 898.212 դրամին համարժեք 2.940 ԱՄՆ դոլար գումարի, որը նույն մասնաճյուղից, նույն օրը <<Վեսթերն Յունիոն>> համակարգով փոխանցել է Ռումինիա՝ Նիկոլայե Դումային:

Նույն օրը, Ադի Իոան Բլազան, <<Պրոմեթեյ բանկ>> ՍՊԸ-ն մասնաճյուղից 933 ԱՄՆ դոլար գումարն իր անձնագրային տվյալներով <<Վեսթերն Յունիոն>> համակարգով փոխանցել է Ռումինիա՝ Կորինա Դաբիժային-

Նույն օրը, Մարիուս Լուպուն <<Արդշինինվեստբանկ>> ՓԲԸ-ն Երևանի <<Տիգրան Մեծ>> մասնաճյուղում 2.250.000 դրամ գումարն իր անձնագրային տվյալներով փոխարկել է 5.000 եվրոյի:

Նույն օրը, Դանիել Ֆլորին Ֆեռառուն <<Արդշինինվեստբանկ>> ՓԲԸ-ն Երևանի <<Էրեբունի>> մասնաճյուղում 2.074.600 դրամ գումարն իր անձնագրային տվյալներով փոխարկել է 4.600 եվրոյի: Այնուհետև, 26.08.2008թ., <<Ամերիաբանկ>> ՓԲԸ-ն Երևանի Վ.Սարգսյան 2 հասցում տեղակայված մասնաճյուղում 4.490.000 դրամ գումարը փոխարկել է 10.000 եվրոյի:

Երբ 27.08.2008թ. Մարիուս Լուպուն և Ադի Իոան Բլազան լքել են Հայաստանը, իսկ նույն օրը երեկոյան իրավապահ մարմինները վնասագերծել են նրանց հանցակիցներ Օլիվեր Ռադուկու Մարիանին և Դանիել Ֆլորին Ֆեռառուն, այդ ժամանակ, Կոռնել

Կոնստանտին Ստենգաչուն, 28.08.2008թ., ժամը 02:20-ին, օգտագործելով 675940090771390880, 4539794801554239 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ն Երևանի Կորյունի 6 հասցեում տեղակայված բանկոմատից փորձել է ստանալ 11.000 դրամ կանխիկ գումար, սակայն դա նրան չի հաջողվել՝ իր կամքից անկախ հանգամանքներով:

Մի քանի ժամ անց, 06:26-ից մինչև 6:29-ն ընկած ժամանակապատվածում, Կոռնել Կոնստանտին Ստենգաչուն, օգտագործելով 4659010861715022, 4462787101837008, 6759676149981737, 5434604173828215, 4539797084663106, 4539798100625012 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ն Գորիս քաղաքում տեղակայված բանկոմատից փորձել է ստանալ 600.000 դրամ, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով կարողացել է հափշտակել միայն 300.000 դրամ կանխիկ գումար, ընդ որում 100.000-ական դրամ ստացել է 4462787101837008, 4539797084663106 ու 4539798100625012 համարների քարտերով:

2/. Վերաքննիչ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը. Վերաքննիչ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում, ներքոհիշյալ հիմնավորումներով:

Բողոքաբերն իր վերաքննիչ բողոքում նշել է, որ դատավճիռը կայացվել է հաշվի չառնելով գործի նյութերի բոլոր իրեղեն ապացույցները: Դատարանը նշել է, որ ինքն նախկինում եղել է դատապարտված, սակայն բոլոր նյութերում, գործի իրեղեն ապացույցներում չկա ոչ մի ապացույց դրա մասին: Դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ ինքը հանցագործությունը կատարել է ստիպողաբար և ոչ մի կապ չի ունեցել գողացված գումարների հետ:

Հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ ինքը փորձ է կատարել ետ քաշվել և գալուց 2 օր հետո հեռանալ ՀՀ-ից, մասնակի խոստովանել է մեղավորությունը, համագործակցել է հետաքննության ժամանակ, պատասխանել է բոլոր հարցերին:

Ըստ բողոքաբերի իր նկատմամբ պետք է կիրառվի ՀՀ քրեական օրենսգրքի 64 հոդվածը:

Վերոգրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրում է ամբողջովին չեղյալ հայտարարել 28.10.2011թ. դատավճիռը և նշանակել որքան հնարավոր է մեղմ պատիժ:

3/. Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Վերաքննիչ բողոքում նշված հիմքերի ու հիմնավորումների սահմաններում վերլուծելով գործի նյութերը, լսելով պաշտպանի կողմից իր վերաքննիչ բողոքի հիմնավորումները, ամբաստանյալի բացատրությունը, մեղադրողի պատասխանը, ստուգելով քրեական գործով ձեռք բերված ապացույցները, ապացույցների ձեռքբերման աղբյուրները, քրեական գործով ձեռք բերված յուրաքանչյուր ապացույց ստուգելով թույլատրելիության, վերաբերելիության, ապացույցների ողջ համակցությունը՝ քրեական գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը գտավ, որ ամբաստանյալի վերաքննիչ բողոքը պետք է մերժել, Դատարանի 28.10.2011թ. դատավճիռը՝ քրեական գործով ըստ մեղադրանքի Ադի Իօան Բլազայի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 177 հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, թողնելով օրինական ուժի մեջ՝ հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ քրեական օրենսգրքի 3 հոդվածի համաձայն՝ քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին

հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը ապացույցները գնահատում են իրենց ներքին համոզմամբ, նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեական դատավարությունում ոչ մի ապացույց նախապես հաստատված ապացույցի ուժ չունի: Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը չպետք է կանխակալ մոտեցում ցուցաբերեն ապացույցներին, չպետք է դրանց որոշ մասին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տան՝ մինչև դրանց հետազոտումը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 124 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապացուցումը գործի օրինական, հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ բացահայտելու նպատակով ապացույցներ հավաքելը, ստուգելը և գնահատելն է:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126 հոդվածի համաձայն՝ գործով հավաքված ապացույցները ենթակա են բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման՝ ձեռք բերված ապացույցի վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ձեռքբերման աղբյուրներն ստուգելու միջոցով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127 հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107 հոդվածի համաձայն՝ միայն ապացույցների հիման վրա են հաստատվում՝

1/ դեպքը և հանգամանքները/կատարման ժամանակը, տեղը, եղանակը և այլն/.

2/ կասկածյալի և մեղադրյալի առնչությունը դեպքին.

3/ հանցագործության՝ քրեական օրենքով նախատեսված հատկանիշները.

4/ անձի մեղավորությունը քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելու մեջ.

5/ քրեական օրենքով նախատեսված պատասխանատվությունը մեղմացնող կամ խստացնող հանգամանքները.

6/ այն հանգամանքները, որոնցով դատավարության մասնակիցը կամ քրեական դատավարությանը մասնակցող այլ անձը հիմնավորում է իր պահանջները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

Քրեադատավարական ապացուցման տարրեր հանդիսացող ապացույցների ստուգման, գնահատման, ապացուցման ենթակա հանգամանքների վերաբերյալ՝ ՀՀ քրեադատավարական օրենսդրության վերը նշված հիմնարար իրավադրույթների պահանջների համատեքստում, քննության առնելով քրեական գործով ձեռք բերված ապացույցների համակցությունը, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը գտնում է, որ ամբաստանյալի պատճառաբանություններն անհիմն են, նպատակ են հետապնդում թեթևացնել մեղքը և խուսափել խիստ պատժից, վերջինիս կողմից՝

ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 177 հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հանցանքները հաստատված են, իսկ պատճառաբանությունները հերքված քրեական գործով պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում ձեռք բերված և ընդհանուր իրավասության

դատարանում հետազոտված հետևյալ ապացույցներով.
Ամբաստանյալն առաջադրված մեղադրանքներում իրեն մեղավոր է ճանաչել մասնակիորեն և ցուցմունք տվել այն մասին, որ ինքը միմիայն Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի ճնշման ներքո է կատարել իրեն վերագրված բոլոր հանցագործությունները և մեղավոր է միայն <<Վեսթերն Յունիոն>> համակարգի միջոցով Ռումինիա հարազատներին 2940 ԱՄՆ դոլարի չափով փոխանցված գումարի հափշտակության մեջ, իսկ մնացած գողոնը գողացել ու հանձնել է Կոռնել Կոնստանտին Ստենգաչուին: Ինչ վերաբերում է Կորինա Դաբիժայի տվյալներով <<Վեսթերն Յունիոն>> համակարգի միջոցով փոխանցված 933 ԱՄՆ դոլարին, ապա այն փոխանցել է Ստենգաչուի հանձնարարությամբ, վերջինիս կնոջը: Այդ գումարն իրեն Երևանում տվել է Կոռնելը, միասին գնացել են փոխանցման կետ, նա տվել է իր անձնագիրը և Կորինա Դաբիժայի տվյալները և ցուցում տվել գումարն այդ անվամբ նրա կնոջը: Հայաստանում գտնվելու ընթացքում, անգամ նույնիսկ ցանկացել է դիմել իրավապահ մարմիններին և հայտնել ամբողջ իրողությունը, սակայն լինելով օտարերկրացի և գտնվելով Ստենգաչուի և վերջինիս ընկերների ճնշման և հսկողության ներքո, չի կարողացել դիմել այդ քայլին: Հայաստանում աշխատելով նրանց համար՝ նկատել է, որ վերջիններս իրենից որոշ հանգամանքներ թաքուն են պահել, խաբել են իրեն: Ստենգաչուն, հանցավոր գործողությունն իրականացնելու նպատակով, իրենից վերցրել է անձնագիրը և ստիպել, որպեսզի ինքը կատարի նրա թելադրած բոլոր վտանգավոր արարքները: Միաժամանակ, իրենից վերցրել է բոլոր գողոնը, որպեսզի ինքը, չուներնալով գումար, չկարողանա փախուստի դիմել և հեռանալ Հայաստանից:

2008թ. ամռանը, Մեծ Բրիտանիայի Լոնդոն քաղաքում, մի սենյակ է վարձակալել Միհայ Ֆաուրի տանը: Դա մի քանի սենյականոց տուն է եղել: Երկու կամ երեք շաբաթ անց, այդ տուն է եկել Կոռնել Ստենգաչուն, ուրիշ սենյակ է վարձակալել: Մի քանի օրից ծանոթացել է և Կոռնել Ստենգաչուն առաջարկել է լինել նրա վարորդն: Ինքն ասել է, որ աշխատելու պատճառով մշտական վարորդ լինել չի կարող, սակայն հանգստյան օրերին կարող է վարել նրա ավտոմեքենան: Երկուշաբթիից մինչև ուրբաթ, ինքն օրինական կերպով աշխատել է որպես սալիկապատող Լոնդոն քաղաքում, իսկ հանգստյան օրերին ազատ է եղել: Մի քանի օր անց, Ստենգաչուն այդ տուն է բերել Քիշտրուլյա անունով անձից վերցված պլաստմասե մի սարք՝ էլեկտրոնային պարունակությամբ: Միհայ Ֆաուրի հետ կանչել և ցույց են տվել այդ սարքն, իրեն հարցրել են, թե արդյոք գիտի, թե դա ինչ է: Ինքը բացասական պատասխան է տվել և նրանք ասել են, որ այդ պլաստմասե սարքը բավականին թանկ արժե և օգտագործվում է փող աշխատելու նպատակով: Մի շաբաթ օր, Կոռնելն իրեն տվել է մի հասցե և խնդրել այնտեղ տանել, ինքը վերջինիս <<Ֆոլկսվագեն պասսատ>> մակնիշի ավտոմեքենայով Ստենգաչուին և Միհայ Ֆաուրին տարել է պահանջված վայրը: Վերջիններս վերցրել են այդ պլաստմասե սարքերը, գնացել և ամրացրել են մի բանկոմատի վրա, հետ գալուց ասել են, որ դրանց հետևից պետք է վերադառնան Երեկոյան: Այդ ժամանակահատվածում շրջել են քաղաքով և ինքը նրանցից հարցրել է, թե ինչպես են գումար հանելու այդ սարքն ամրացնելուց հետո, քանի որ դրա մասին ոչինչ չի իմացել: Նրանք ասել են, որ այդքան հարցեր չտա և մեքենան վարի: Վերադառնալուց նրանք հանել են այդ սարքերը բանկոմատից և միասին գնացել են տուն: Դրանից հետո, նրանք երկուսով գնացել են այդ սարքերի տիրոջ հետ հանդիպման, ավելի ուշ ինքն իմացել է, որ վերջինիս անունը Քիշտրուլյա է: Երբ վերադարձել են տուն առանց այդ սարքերի, նրանց խոսակցությունից հասկացել է, որ դրանք չեն աշխատել և պետք է կրկին փորձել: Մի քանի օր հետո, նույն տուն տեղափոխվել է ապրելու Կոռնել Ստենգաչուի եղբայրը Բոդոն: Մեկ կամ երկու շաբաթ անց, Կոռնել Ստենգաչուն Միհայ Ֆաուրի հետ նորից բերել են այդ սարքերը և ցուցում են տվել ավտոմեքենայով նրանց նշած

հասցե տանել: Երբ տեղ են հասել, նրանք կրկին այդ սարքերն ամրացրել են բանկոմատին: Վերադարձել են տուն, հետո երկուսով նորից գնացել են արդյունքները տեսնելու, իսկ վերադառնալուց ասել են, որ ինչ-որ խնդիրների պատճառով այդ սարքը չի աշխատել: Ինքն ասել է, որ դա իր խնդիրը չէ, քանի որ ինքը տարել է նրանց ցանկացած վայրն, իրեն տվել են մի 20-30 ֆունտ ստերլինգ 2-3 շաբաթվա համար: Ըստ նրանց ցանկության, վարել է այդ ավտոմեքենան, բայց միայն աշխատանքից ազատ լինելու ժամանակ: Մի կիրակի Կոռնելի եղբորը՝ Բոդոյին, ավտոմեքենայով տարել է քաղաք, որտեղ ինքը 100-120 եվրոյով <<Դուչե Գաբանա>> ֆիրմայի արտադրության ժամացույց է գնել և տուն են վերադարձել մի 2-3 ժամից: Տանը Ստենգաչուն եկել է իր սենյակ և ցանկացել է տեսնել ժամացույցը, պահանջել է այն տալ իրեն: Ինքը հրաժարվել է, այդ ժամանակ Կոռնելն իրեն մի քանի անգամ հարվածել է և խլել է ժամացույցը: Միհայ Ֆաուրն եկել է իր սենյակ ու ասել է Ստենգաչուին, որ իրեն հանգիստ թողնի ու չծեծի, որ ինքը հանկարծ ոստիկանություն չկանչի, քանի որ տանը բազմաթիվ ափսոսանքներ են եղել, ինչի մասին ինքը ոչինչ չի իմացել: Այդ ժամանակ Ստենգաչուն և Ֆաուրը սկսել են վիճաբանել, գործը համարյա հասել է ծեծկռտուքի, ինքը հասկացել է, որ նրանք ցանկացել են կիսել ինչ-որ քարտեր կամ դրանց տեղեկություններն: Այդ ժամանակ էլ առաջին անգամ է լսել, որ զբաղվել են բանկային քարտերով: Ինքը չի տեսել, բայց իմացել է, որ նրանք կիսել են այդ քարտերն ու դրանց տեղեկությունները և Միհայ Ֆաուրը տնից հեռացել է:

Միհայ Ֆաուրի գնալուց անմիջապես հետո, Ստենգաչուն եկել է իր մոտ և ասել է, որ դա այլևս չի կրկնվի, որ ամեն ինչ նորմալ է լինելու, պետք չէ ոստիկանություն կանչել: Այնուհետև ասել է, որ մեքենայով իրեն տանի Լոնդոնի կենտրոն, երբ տեղ են հասել, Կոռնել Ստենգաչուն հանդիպել է մի մարդու հետ: Որոշ ժամանակ հետո, արդեն Հայաստանում ինքն իմացել է, որ այդ մարդու անունը Մարիուս Լուպու է: Ստենգաչուն մոտ մեկ ժամ խոսել է Մարիուս Լուպուի հետ, վերջինս նրան հայտնել է, որ այդ քարտերը հնարավոր է օգտագործել Հայաստանում: Այդ տեղեկատվության համար, իր իմանալով, Ստենգաչուն Մարիուս Լուպուին տվել է փող կամ քարտեր: Հետո Կոռնելը մոտեցել է իրեն, ցույց է տվել մոտ 200 մետր հեռավորության վրա գտնվող Հայաստանի դեսպանատունը և ասել է, որ եթե նրա հետ գնա Հայաստան, ապա կտեսնի, թե ինչ է կատարվել, որ նա Հայաստանից պետք է փողեր վերցնի: Ինքը ստույգ չի իմացել, թե ումից և ինչպես: Ինքը համաձայնվել է, ասել է, որ կմտածի, Ստենգաչուն ասել է, որ պետք է շտապ պատասխանել, որ դա գեղեցիկ երկիր է: Առանց որևիցե մանրամասնություններ իմանալու, ինքը համաձայնվել է, որից հետո միասին գնացել են դեսպանատուն, ստացել են վիզա, Կոռնելն ասել է, որ կհոգա ձանապարհածախսը: Հայաստան գալուց մի օր առաջ, ցանկացել է Կոռնելի հետ խոսել, նրա սենյակ մտնելուց թակել է դուռը և այն բացվել է, Ստենգաչուն եղբոր հետ ինչ-որ քարտ գրելու սարքի և համակարգչի միջոցով քարտեր են պատրաստել: Դա տեղ է մի քանի վարկյան, իրեն ասել են, որ դուրս գա սենյակից: Ինքը դուրս է եկել ու պատրաստել է ձամպրուկը: Հայաստան գալուց առաջ, գիշերը, Կոռնելը բոլոր քարտերն առանց իրեն տեղյակ պահելու տեղադրել է իր ձամպրուկի մեջ: Գնացել են օդանավակայան, ինքը չի իմացել ձամպրուկի մեջ պահված քարտերի մասին: Լոնդոնից մեկնել են Հայաստան, Երևանի օդանավակայանում Կոռնելն իրեն ասել է, որ ինքնուրույն գնա և ստանա ուղեբեռը և ձամպրուկը վերցնելուց հետո անմիջապես դուրս գա օդանավակայանից: Ինքը հետաքրքրվել է այդ պատճառով, հասկացել է, որ ինչ-որ բան նորմալ չէ: Կոռնելը ասել է, որ ինքը հետո կտեսնի, թե ինչ է դրվել ձամպրուկի մեջ, որ չվախենա: Երևանի օդանավակայանից վերցրել են տաքսի և Կոռնելը խնդրել է վարորդին իրենց տանել մի հյուրանոց: Հասել են <<Եվրոպա>> հյուրանոց, այնտեղ ինքը ձամպրուկը տվել է Կոռնելին, բացելուց տեսել է գուլպայի մեջ

թաքցված բազմաթիվ քարտեր: Ինքը հարցրել է, թե ինչու են դրանք դրվել իր ճամպուրակի մեջ, նա ասել է, որ լռի և այդքան հարցեր չտա, կատարի նրա ցուցումները և ոչ մի խնդիր չի ունենա, որից հետո Ստենգաչուն, վերցնելով մոտ 10 հատ քարտ, առաջարկել է դուրս գալ քաղաք: Հասել են Երևանի կենտրոն, նա ասել է, որ բանկոմատոս նկատելուց իրեն քարտեր կտա և ինքը պետք է բանկոմատոսից գումար հանի: Ինքն ասել է, որ ցանկություն չունի դրանով զբաղվելու, Կոռնելը սկսել է սպառնալ իրեն և Ռումինիայում գտնվող հարազատներին՝ մորը և 7 տարեկան քրոջն, ասել է, որ եթե չգնա գումարներ հանելու, ապա մեծ պրոբլեմներ կունենա: Ինքը վերցրել է քարտերը, մոտեցել է բանկոմատին և կատարել է գործարք: Ստենգաչուն գտնվել է իրենից 10 մետր հեռավորության վրա, երբ վերջացնելուց մոտեցել է նրան, Կոռնելն ասել է, որ քարտերը և գումարը հանձնի ու գնա նրա հետևից: Վերադարձել են հյուրանոց, այդ ժամանակ Կոռնելը կրկին սպառնացել է իրեն, այլ քարտեր է վերցրել և սկսել է բացատրել, թե ինչ պետք է անել: Ամեն քարտի վրա գրված է եղել PIN-ծածկագիրը, նա բացատրել է մանրամասնությունները, ասել է, որ քարտը պետք է մտցնել բանկոմատի մեջ, իսկ բանկոմատից փողը ստանալուց հետո այն պետք է ծալել և արանքը դնել օգտագործված քարտը հաշվարկ կատարելու համար: Ինքն այլընտրանք չի ունեցել, շարունակել է գումարներ հանել Կոռնելի համար ու վերջացնելուց ասել է, որ ցանկություն չունի դրանով զբաղվելու և ուզում է վերադառնալ: Նա ասել է, որ հանգիստ լինի, որ ուշադիր է լինելու իր հանդեպ և ոչինչ չի պատահի: Ինքն կրկին հրաժարվել է այդ գործից, Կոռնելն ասել է, որ եթե ցանկություն ունի Ռումինիա վերադառնալու, ապա պետք է դա անի, նորից սպառնացել է մորը և քրոջը, նշելով, որ նրանք Ռումինիայում պրոբլեմներ կունենան, իսկ ինքն՝ այստեղ: Կոռնելն ասել է, որ իր վրա արդեն գումար է ծախսել ու փախչելու դեպքում իրեն յուրաքանչյուր վայրում կգտնի: Ինքն էլ իր ընտանիքի համար վախենալով՝ ստիպված համաձայնվել է՝ իմանալով, որ Կոռնելը վտանգավոր գնչու է: Ոստիկանություն չի դիմել, քանի որ Կոռնելն ասել է, որ նրան ավելի շուտ կհավատան, որովհետև ինքն արդեն մի օր գողություն է արել, իսկ նրա ձեռքով ոչինչ չի կատարվել: Հաջորդ օրն ինքը լսել է նրա և Լոնդոնում գտնվող ինչ-որ մարդու միջև հեռախոսազրույցը: Այդ անձնավորությունն եղել է <<Ռադուն>> Օլիվեր Ռադունկու Մարիանը, որի հետ ինքը ծանոթ չի եղել և որին Ստենգաչուն կանչել է Հայաստան: Իրենց Հայաստան գալուց երկու օր անց, Օլիվերը նույնպես ժամանել է Հայաստան: Մինչև Օլիվերի ժամանելը, Ստենգաչուն վարձակալել է մի ուրիշ սենյակ <<Էրեբունի>> հյուրանոցում, իսկ Օլիվերը Հայաստան ժամանելուց հետո տեղավորվել է <<Եվրոպա>> հյուրանոցում: Այդ ժամանակ, Ստենգաչուի հետ միասին գնացել են մի ավտոմեքենա վարձակալելու: Վարձակալել են <<ԲՄՎ Z3>> մոդելի ավտոմեքենա, որով շրջել են քաղաքով բանկոմատներ գտնելու նպատակով, որպեսզի ինքը գումարներ հանի Ստենգաչուի համար: Կոռնելը գնչուական լեզվով խոսացել է ինչ-որ մեկի հետ Լոնդոն քաղաքում, իր կարծիքով, Մարիուս Լուպուի հետ և վերցրել է Կատալին անունով մի անձնավորության հեռախոսահամար, որն իրենցից առաջ է ժամանել Հայաստան: Կոռնելը զանգահարել է Կատալինին, պայմանավորվել են հանդիպել, որպեսզի վերջինս տեղեկություններ տրամադրի բանկոմատների տեղակայման մասին: Իր հասկանալով, Կատալինն աշխատել է Մարիուս Լուպուի համար, իրենք հանդիպել են Կատալինի հետ, Կոռնել Ստենգաչուն ասել է վերջինիս, որ իր հետ առաջ անցնելով ցույց տա բանկոմատները, իսկ նա հետևից է գալու: Կոռնելն իրեն տվել է քարտեր և ցուցում է տվել գումարներ հանել մատնացույց արած բանկոմատներից: Երբ ինքը բանկոմատից գումար է հանել, Կոռնելը շատ մոտ է կանգնել, որ հանկարծ չկարողանա փախչել, գործարքը վերջացնելուց մոտեցել ու վերցրել է գումարը և քարտերը: Կոռնելն իրենց համար գնել է հայկական Սիմ-քարտեր և ցուցում է տվել գործարքը վերջացնելուց զանգահարել նրան ու հայտնել գործարքի արդյունքների մասին,

որից հետո ինքը հեռախոսով հայտնել է, թե ինքը որ ուղղությամբ գնա գումարը փոխանցելու համար: Երբ վերադարձել են հյուրանոց, սկսել է իրեն ստուգել պարզելու համար, թե գումար գողացել է նրանից, թե ոչ: Նա պահանջել է հագուստը հանել, անգամ պայուսակն է ստուգել: Այդ ժամանակ ինքը հասկացել է, որ ինչ-որ բան լավ չէ: Կոռնելն իր անձնագիրն առաջին իսկ օրն է վերցրել, բայց քանի որ պետավտոտեսուչները մի քանի անգամ կանգնեցրել են իրենց ավտոմեքենան, նա վերադարձրել է իր անձնագիրը: Ինքն ասել է, որ այլևս ցանկություն չունի այդպես աշխատելու և հայտնել է վերադառնալու ցանկության մասին, սակայն Կոռնելն ասել է, որ մինչև բոլոր քարտերը չսպառվեն, մինչև իր առաքելությունը չվերջացնի չի վերադառնա: Նա սպառնացել է, որ իրեն կվնասի, որ մարդ կուղարկի Ռուսիան մորը կամ քրոջը վնասելու, ինքը դրանից շատ է վախեցել: Երբ Օլիվերն եկել է, իրեն ասել է, որ հանցանք լինի, որ ոչինչ չի պատահի և Կոռնելի ցուցումները կատարելու հարցում նա իրեն կօգնի: Ինքը չի իմացել, թե նրանք ինչ հարաբերությունների մեջ են եղել Ստենգաչունի հետ, տեղյակ է եղել, որ ընկերներ են: Նույն կամ հաջորդ օրն, Երևանից ավտոմեքենայով քարտեզի օգնությամբ ուղևորվել են դեպի Սևան, որտեղ Կոռնելն իրեն տվել է քարտեր և ցուցում է տվել մոտենալ բանկոմատին, գումար հանել ու վերադառնալ փողերով հանդերձ: Գործարքը վերջացնելուց հետո, մոտեցել է նրան, տվել է գումարը, Կոռնելը Օլիվերի հետ նույնպես գնացել են գումար հանելու: Վերադարձել են Երևան, տարբեր բանկոմատների մոտ կանգնելով, Կոռնելը իրեն ստիպել է գումարներ հանել:

Երբ վերադարձել են հյուրանոց, նա իրեն ամբողջությամբ ստուգել և հարցրել է, թե իր մոտ գումար ունի, ինքը բացասական է պատասխանել: Իրականում ինքն իր հետ Մեծ Բրիտանիայից մոտ 3000 եվրո գումար է բերել, մտածելով, որ մեկնել է ձամփորդելու, բայց տեսնելով իր մոտ գումար փնտրելու Կոռնելի փորձերն, ինքը հաջորդ օրը մենակ գնացել է մոտակա <<Վեսթերն Յունիոն>> համակարգի կետ, զանգահարել է մորն և իր անձնական գումարից 1000 ԱՄՆ դոլարը փոխանցել է վերջինիս՝ Ռուսիան: Սկզբից ցանկացել է ամբողջ գումարն ուղարկել, սակայն հետո որոշել է մի մասը պահել, ցանկանալով մի կերպ ավիատոմս գնել ու մեկնել Հայաստանից, որից հետո ճանապարհին մտել է մի ավիագործակալություն, մոտ 200 եվրոյով գնել է Երևան-Բուխարեստ չվերթի ավիատոմս Ռուսիան փախչելու համար: Տոմսը գնելուց հետո, Ռուսիան է ուղարկել նաև իրեն պատկանող մնացած գումարը, քանի որ Կոռնել Ստենգաչուն իրեն անընդհատ ստուգել է և ինքը վախեցել է, որ նա այն կգտնի և կվերցնի: Ավիատոմսը գնելու հաջորդ օրը, Կոռնել Ստենգաչուն ստուգել է իր հագուստն ու ձամպրուկը և դրա մեջ գտել է ավիատոմսը: Այդ ժամանակ Օլիվերն իրենց մոտ է եղել, Կոռնելը գտել և պատռել է ավիատոմսը, հետո ցանկացել է իրեն ծեծել, սակայն Օլիվերը բաժանել է իրենց և համոզել իրեն չզնայ Հայաստանից: Ինքն էլ խոստացել է մնալ, Կոռնելն իրենից նորից վերցրել է անձնագիրը և ասել է, որ այն երբեք չի վերադարձնի, քանի որ ինքը փորձել է փախչել: Տեսնելով, որ այլևս ոչինչ անել չի կարող, ստիպված շարունակել է աշխատել Կոռնելի համար: Կոռնելի սպառնալիքները կրկնվել են ամեն օր:

Դրանից հետո, իրենք <<Էրեբունի>> հյուրանոցից տեղափոխվել են <<Կոնգրես>> հյուրանոց: Օգոստոսի 25-ին Հայաստան է ժամանել Դանիել Ֆեռառուն և իր ենթադրելով, ձամպրուկի մեջ բերել է քարտերի խմբաքանակ նրա ու Օլիվերի համար: Իր կարծիքով, Դանիելին Հայաստան է հրավիրել Օլիվերը, քանի որ նա բնակվել է վերջինիս հյուրանոցային համարում, սակայն որևիցե պայմանավորվածություն հեռախոսով այդ մասին չի լսել: Գրեթե միաժամանակ Հայաստան է ժամանել նաև Մարիուս Լուպուն: Վերջինիս գալուց առաջ, Օլիվերը և Ստենգաչուն հանդիպել են Կատալինի հետ և նրանից վերցրել են բոլոր քարտերը, քանի որ Հայաստան էր ժամանելու Մարիուս Լուպուն: Ինքը այդ

հանդիպմանը չի մասնակցել: Իր իմանալով, Կատալինը Մարիուս Լուպուին ամբողջ գողոնը չէր ուղարկել և վախենում էր հանդիպել Կոռնելի ու Օլիվերի հետ, սակայն հեռախոսագրույցի ընթացքում Ստենգաչուն Կատալինին վստահեցրել է, որ Մարիուս Լուպուի հետ կապված նրան ոչինչ չի անի, քանի որ վերջինիս հետ նույնպես պրոբլեմներ ունի: Դրանից հետո, Կոռնելը և Օլիվերը հանդիպել են Կատալինի հետ և քարտերը վերցրել, որից հետո վերջինս փախչել է Հայաստանից՝ վախենալով, որ կարող է բռնվել Մարիուս Լուպուի կողմից: Մարիուսի քարտերը սկզբից տարել են Օլիվերի մոտ <<Եվրոպա>> հյուրանոց, որտեղ նա բնակվել է Դանիել Ֆլորին Ֆեռառուի հետ:

Մարիուս Լուպուն ժամանել է <<Կոնգրես>> հյուրանոց: Ինքը բնակվել է Կոռնել Ստենգաչուի հետ նույն սենյակում, իսկ Մարիուսն տեղավորվել է առանձին սենյակում: Նույն օրը Կոռնելը և Օլիվերը <<Եվրոպա>> հյուրանոցից քարտերը, դրանք դրված են եղել սև գուլպայի մեջ, բերել ու հանձնել են Մարիուսին, որոնք մյուս քարտերի հետ դրել են չիրկիզվող պահարանի մեջ, բայց առանձին: Այդ ընթացքում մի օր, ինքն ու Կոռնել Ստենգաչուն զննացել են քաղաք, մի տարադրամի փոխանակման կետի առջև նա կանգնեցրել է ավտոմեքենան, իրեն տվել է ՀՀ դրամ և ասել է, որ մտնի ներս ու դրամը փոխանակի եվրոյով, նշելով, որ սպասելու է դրսում: Ինքը վախեցել է, սակայն չկարողանալով ոչինչ անել, մտել և դրամով զննել է մի քանի հազար եվրո, ստույգ գումարը չի հիշում, նույն կետում մի քանի անգամ տարադրամ է փոխանակել: Գումարը փոխելուց հետո, Կոռնելը իրեն տարել է <<Վեսթերն Յունիոն>> համակարգի մի կետի մոտ, դրա դիմաց տվել է 1000 ԱՄՆ դոլար և ցուցում է տվել այդ գումարն ուղարկել նրա կնոջը, տվել է ստացողի տվյալները Կորինա Դաբիժա: Ինքը հարցրել է, թե ինչպես դա անի, Ստենգաչուն ասել է, որ հարցեր չտա և կատարի պահանջը: Ստենգաչուի քարտերի օգտագործման արդյունքում, <<Կոնգրես>> հյուրանոցի իրենց համարի չիրկիզվող պահարանում արդեն բավականին գումար է հավաքվել, բայց Կոռնելն ասել է, որ իր աշխատանքը դեռ չի վերջացել, պետք է Մարիուս Լուպուին պատկանող քարտերով էլ գողություն անել: Իր և Մարիուս Լուպուի միջև որևէ պայմանավորվածություն չի եղել, վերջինիս անձամբ չի ճանաչել, այդ ժամանակ է առաջին անգամ հանդիպել նրա հետ: Նա Կոռնել Ստենգաչուի ընկերն է եղել, երկուսով են գրուցել քարտերով փող գողանալու մասին: Թե ինչ պայմանավորվածություն են նրանք ունեցել, ինքը չի իմացել, բայց <<Կոնգրես>> հյուրանոցի սենյակում իրեն մոտեցրել է Կոռնել Ստենգաչուն և պահանջել է, որ Մարիուս Լուպուի քարտերով գումար հափշտակի: Ինքն սկզբից հրաժարվել է, հայտնել է տուն վերադառնալու իր ցանկության մասին, այդ ժամանակ Կոռնելը հարձակվել ու սկսել է ոտքերով և ձեռքերով իրեն ծեծել, ասելով, որ հրաժարվելու դեպքում պրոբլեմներ է ունենալու Ռումինիայում, սպառնացել է իր մորը և քրոջը: Վախենալով նրանից, ինքը ստիպված համաձայնվել է: Երբ իրենք երկուսով են եղել իրենց հյուրանոցային սենյակում, Կոռնելն ցուցում է տվել Մարիուսի քարտերով հափշտակված գումարների խոշոր մասը աննկատ թաքցնել և դնել նրա քարտերով հափշտակված գումարների հետ: Դրա համար իրեն փոխանցել է մի փոքր պայուսակ և ցուցում է տվել նրա և Մարիուսի քարտերը պահել տարբեր բաժիններում: Բացի դրանից, Կոռնելն ունեցել է քարտեր, որոնց միջոցով արդեն գումար գողանալ հնարավոր չի եղել: Ստենգաչուն ցուցում է տվել դրանք կրկին փորձարկել և փող ստանալու դեպքում դնել նրա բաժնի մեջ, իսկ անհաջող փորձի դեպքում դնել Մարիուսի քարտերի հետ: Վերջինիս հարցին, թե ինչու նրա քարտերով գումարներ չի հաջողվել ելքագրել, Կոռնելը ցուցում է տվել պատասխանել, որ Կատալինն արդեն ամբողջ գումարը հանել է: Ինքն ասել է, որ չի կարող դա անել, բայց Կոռնելը պատասխանել է, որ հրաժարվելու դեպքում ավելի շատ ծեծ է ստանալու, նա կարող է Մարիուսին ասել, որ ինքը խաբել է վերջինիս: Երբ ինքը հետաքրքրվել է այդ վարքագծի

պատճառներով, Կոռնելն ասել է, որ դեմքի սպին Մարիուսն է թողել ավելի փոքր գումարի համար և առաջարկել է պատկերացնել, թե վերջինս ինչ կարող է անել, եթե իմանա, որ ինքը նրան խաբել է: Նա կատարել է այդ ցուցումները: Մարիուս Լուպուս տեսնելով, որ նրա քարտերով գումար չի հաջողվել ելքագրել, իրեն հարցրել է, թե ինչու դրանք չեն գործել: Ինքը պատասխանել է, որ չգիտի: Ի վերջո նա որոշել է Հայաստանից գնալ, իսկ Կոռնել Ստենգաչուն որոշ գումար է վճարել այդ քարտերի դիմաց, դրա մասին նրանք պայմանավորվել են գնչուական լեզվով, իր ենթադրելով Կոռնելը Մարիուսին տվել է 10-15 հազար եվրո: Երբ վերադարձել են «Կոնգրես» հյուրանոց, Մարիուս Լուպուս ասել է, որ իրեն գումար վճարել չի կարող, որովհետև քարտերով փող ստանալ չի հաջողվել: Քանի որ Մարիուսի քարտերը «լավը» չեն եղել, իրեն ասել են, որ Կատալիինն պետք է բռնել: Ինքն ասել է, որ վերջինիս հետախույզ չի պատասխանում, երևի գնացել է: Այդ ժամանակ Կոռնելը իրեն ծեծել է և ասել է, որ եթե Կատալիինն չբերի «Կոնգրես» հյուրանոց, ապա նորից է իրեն ծեծելու:

Երեկոյան մի քանի ժամից հյուրանոց են եկել մարմնավաճառներ, որոնց վճարել են Մարիուսը և Կոռնելը, այդ մարմնավաճառներից մեկին ուղարկել են իր սենյակ որպես վարձատրություն: Մարիուս Լուպուս որոշել է գնալ Հայաստանից, բոլոր քարտերը թողել է Կոռնել Ստենգաչուի մոտ և վերջինս դրանք դրել է հյուրանոցային համարում գտնվող չիրկիզվող պահարանի մեջ: Դրանից հետո Մարիուս Լուպուս մեկնել է Հայաստանից, ինքը նույնպես ունեցել է ավիատոմս Երևան-Լոնդոն հետադարձ չվերթների համար, սակայն Կոռնելն իրեն թույլ չի տվել մեկնել, չնայած իր բազմաթիվ խնդրանքների: Կոռնելը վերցրել է իր անձնագիրն, ասել է, որ իրեն չի թողնի գնալ, որովհետև ինքը գործը դեռ չի ավարտել, որից հետո գնացել է իրենց թռիչքի օրերը հետաձգելու: Այլընտրանք չունենալով՝ ինքը ևս 2-3 օր նրա հետ գնացել է բանկոմատներից գումարներ գողանալու, վերջին օրերին Կոռնելը անընդհատ գիշերցերեկ անհանգստացրել է իրեն, անգամ առավոտյան ժամը 4-ին արթնացրել է և ուղարկել է գողություն կատարելու: Վերջապես օգոստոսի 27-ին, Կոռնելն իրեն թույլատրել է մեկնել Հայաստանից՝ ասելով, որ մնացած քարտերով անձամբ կգբաղվի: Գնալուց առաջ, իրեն տվել է 2.000 եվրո և ասել է այդ գումարը փոխանցել եղբորը Բողոյին, ասելով, որ եթե փորձի փախչել այդ փողերի հետ կամ ծախսել դրանք, ապա բազմաթիվ պրոբլեմներ կունենա, որ ոչ մի տեղ չի կարող փախչել նրանից: Դրանից հետո, ինքը վերադարձել է Մեծ Բրիտանիա, 2.000 եվրոն տվել է Բողոյին, մի օր անց վերջինս մտել է իր սենյակ ու ասել է, որ Քիշտրույան ցանկություն է հայտնել իրեն հանդիպելու: Քիշտրույան գրույցի ժամանակ առաջարկել է վերադառնալ Հայաստան և Կալու անունով նրա մարդկանցից մեկի հսկողության ներքո աշխատել անմիջապես նրա համար: Ինքը համաձայնվել է, Քիշտրույան իր համար գնել է ավիատոմս դեպի Երևան: Երբ Քիշտրույան գնացել է, ինքը գնացել է այդ ավիագործակալություն և պահանջել է վերադարձնել ավիատոմսի գումարը, քանի որ իր գրպանում ընդհանրապես փող չի ունեցել: Վերադարձել է տուն, վերցրել է ձամպրուկները, տեղափոխվել է բնակվելու այլ բնակարան և այդ օրվանից այդ խմբից որևէ մեկի հետ չի հանդիպել:

Ղատապարտյալ Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի ցուցմունքով այն մասին, որ Ադի Իոան Բլազան սեփական շահերից ելնելով ցուցմունքներում իրողությունը մի փոքր չափազանցացրել է: Ինքը Հայաստանում երբևիցե չի ծեծել Ադի Իոան Բլազային, չի ստիպել գողությամբ զբաղվել, քանի որ մարդուն կարելի է 10 անգամ ստիպել փող գողանալ, բայց ոչ 340 անգամ: Եթե ինքը նրան անընդհատ ծեծեր, ապա Բլազան կմեռներ, կամ դրան ականատեսներ կլինեին, դա կլսեին հյուրանոցում: Բլազան Հայաստանում առաջին անգամը չէ, որ իր հետ մասնակցել է գողության: Իրենք միասին գողություններ են կատարել նաև Իտալիայում, Վենետիկում և Պադուայայում 2008թ. ապրիլ ամսին: Միակ բանը, ինչ Բլազան Երևանում «ստիպված» է

արել, դա ամեն օր թեթևաբարո կանանց հետ հյուրանոցում ժամանակ անցկացնելն է եղել: Նա իր հետ միասին հափշտակել է բանկային քարտերի տվյալները Լոնդոնում, միասին տիրանալով դրանց, որոշել են գալ Հայաստան, քանի որ Մարիուս Լուպուից ստացել են տեղեկություն, որ Հայաստանում բրիտանական բանկերի քարտերով հնարավոր է բանկոմատներից գումար հափշտակել: Իհարկե, Բլազան Լոնդոնում վախեցել է իրենից, բայց Հայաստանի տարածքում ինքը նրան ոչ մի անգամ չի հարվածել: Մի անգամ նման զրույց եղել է, կասկածանք ունենալով, ինքը որոշել է ստուգել Բլազայի ճամպուկը և դրա մեջ հայտնաբերել է 300.000 դրամ: Կանչել է, շատ հանգիստ զրուցել են, ինքը հիմար չէ, որ Հայաստանի հյուրանոցում ինչ-որ մեկին ծեծեր, դա կարող էր անել Լոնդոնում կամ Ռումինիայում: Իր սխալն այն է եղել, որ Բլազայի խաբեությունը բացահայտելուց հետո վերջինիս կատարած ծառայությունների համար հասանելիք գումարը չի տվել և չեն բաժանվել: Իր կարծիքով, խաբեության բացահայտման ժամանակ Բլազան վախեցել է իրենից, քանի որ ասել է, որ ոչ մի փող չի ուզում: Ինքն ասել է, որ պետք չէ ոչինչ միմյանցից թաքցնել, որ եթե այդպես շարունակեն, ապա կբռնվեն: Բլազան ազատ է տեղաշարժվել, ինչ ուզեցել ծեռք է բերել, անգամ կոստյում է գնել, նույնիսկ փող է ուղարկել տուն հարազատներին:

Իհարկե, Բլազան իր մեղքով է այստեղ հայտնվել, դրա պատճառն այն է եղել, որ Բլազան Ֆաուրի լավ ընկերն էր: Ինքը Բլազայի հետ ծանոթ չի եղել, քանի որ Մարոկկոյից նոր էր եկել Լոնդոն: Հանդիպելով Բլազային՝ ինքը Ֆաուրից հարցրել է, թե ով է այդ երեխան, վերջինս Բլազային ներկայացրել է որպես կեղծ բանկային քարտերով գողություններ կատարող անձնավորություն, առաջարկել է նրան ներգրավել գողության կատարման մեջ և մի փոքր գումար տալ: Իր սեփական փորձից ելնելով կարող է ասել, որ Լոնդոնում ազգությամբ ռումինացի գրեթե բոլոր երիտասարդները դրանով են զբաղվել կամ բանկային քարտերի տեղեկություններն են գողացել, կամ բանկոմատներից գողությամբ են զբաղվել: Դրանով Լոնդոնում կարող է նույնիսկ 3 տարեկան երեխան զբաղվել, բանկոմատին փակցնելով համապատասխան սարք: Ինքը նման սարքեր չի ունեցել, Ֆաուրի միջոցով մի տղայից ծեռք է բերել այդ սարքերը, Բլազայի հետ ծանոթանալուց հետո սկսել են միասին գողությամբ զբաղվել: Մեկ-երկու շաբաթվա ընթացքում, իրենք բանկային քարտերի տեղեկություններ են հափշտակել, ինքն ու Ֆաուրը փակցրել են այդ սարքը բանկոմատին, իսկ Ադի Իրան Բլազան ժամանակ անց այդ սարքը բերել է և տվել է իրենց: Իհարկե, այն բերելն ավելի վտանգավոր է եղել, դրա համար իրենք Բլազային են ուղարկել, օգտագործել են նրան: Բանկային քարտերի վրա գրամված տվյալները հափշտակելուց հետո, վերադարձել են տուն և դրանց օգտագործմամբ կեղծ քարտեր են պատրաստել: Այդ կրեդիտային քարտերի PIN-ծածկագրերը ծեռք է բերել Միհայ Ֆաուրը, Բլազան այդ գործում ոչ մի լուրջ դերակատարում չի ունեցել, նրան ուղարկել են տարբեր մանր գործերով: Այդ երկու շաբաթվա ընթացքում, Մեծ Բրիտանիայում մոտ 200 բանկային քարտերի տվյալներ է հաջողվել ստանալ: Քանի որ այդ ամենն արել են Լոնդոնում, պատրաստված քարտերով պետք է գումարներ հափշտակեին և դրա համար երկիր են որոնել: Լոնդոնում ինքը հանդիպել է Մարիուս Լուպուին, նրա հետ անցյալում ծանոթ են եղել, վերջինս իր երեսը վնասել էր ծեծկռտուքի ժամանակ: Ինքը հարցրել է, թե որտեղ է հնարավոր կեղծ բանկային քարտերով գումար հափշտակել, Լուպուն ասել է, որ ինչ-որ մեկին ուղարկել է Հայաստան, երբ տեղեկանա արդյունքների մասին և նրա տղաները գնան Հայաստան, ինքը նույնպես կարող է այնտեղ գնալ: Ինքը հարցրել է, թե ինչ է անհրաժեշտ ուղևորության համար, Լուպուն հայտնել է վիզա ստանալու անհրաժեշտության մասին, բացատրել է մանրամասնությունները: Մարիուս Լուպուն ասել է, որ կողմնակի անձանց այդ տեղեկությունները չհայտնի, որպեսզի նրա եղբոր և <<Քիշտրույա>>-ի հետ պորբլեմներ չլինեն: Իր կարծիքով,

վերջիններս հարազատներ են: Սովորաբար, երբ հայտնաբերվել է մի երկիր, որտեղ հնարավոր է եղել բանկոմատներից կեղծ քարտերով գումարներ հափշտակել, այնտեղ առաջնահերթ գողության գնացել են հայտնաբերողները: Բայց քանի որ Մարիուս Լուպուն, ժամանակին վնասելով իր երեսը, պարտք է եղել իրեն, մեղքի զգացումից ելնելով փորձել է լավություն անել: Ինքը խոստացել է այդ տեղեկությունը ոչ մեկին չասել: Որոշելով մեկնել Հայաստան, ինքը գնացել է տուն, Միհայ Ֆաուրին և բուրժին հարցրել է, թե ով է ցանկանում իր հետ գնալ: Ադի Իոան Բլազան իր և Ֆաուրի հետ նույն բնակարանում է ապրել Լոնդոնում: Բնավորությամբ վախկոտ լինելով, Ֆաուրը հրաժարվել է, ասելով, որ Հայաստանը հետխորհրդային երկիր է, նախընտրել է գնալ Իտալիա, իսկ Բլազան համաձայնվել է ուղեկցել իրեն: Ինքն ու Ֆաուրը կիսել են պատրաստված քարտերը, իր կողմից Ֆաուրին և Բլազային տվել է որոշ քանակությամբ քարտեր, քանի որ իր հետ գողություն կատարած անձանց նույնպես պետք է բաժին հասներ: Ադի Իոան Բլազան շատ քիչ քարտեր ուներ, որևիցե պայմանավորվածություն այն մասին, թե ինչպես կիսել գողոնը, նախապես չի եղել, բնական է, որ դրա գերակշիռ մասը մոտ 80 տոկոսը պետք է իրենը լիներ, քանի որ քարտերը պատկանել են իրեն: Դրանից հետո Բլազայի հետ գնացել են Լոնդոնում Հայաստանի դեսպանատուն, միասին դիմել են վիզա ստանալու համար, մի քանի օրից դեսպանատնից վերցրել են անձնագրերը վիզաներով: Ինքն այժմ չգիտի, թե Բլազան ուզեցել է Հայաստան գալ, թե եկել է այստեղ իրենից վախենալով: Ամեն ինչ հնարավոր է, քանի որ Լոնդոնում մի անգամ ինքն ուժեղ հարվածել է նրան, երբ վերջինս սկզբից համաձայնվել է փոխանակել նրա գնած <<Դուլչե Գաբանա>> ժամացույցն իրեն պատկանող <<Պոլիս>> ժամացույցի հետ, իսկ հետո, մտնելով Միհայ Ֆաուրի սենյակ, վերադարձել և հրաժարվել է փոխանակումից: Ինքը մտածել է, որ դրա նախածեռնողը Միհայ Ֆաուրն է եղել, պարզաբանել է նրա հետ այդ հարցը և երբ վերջինս հրաժարվել է դրանից, մի անգամ հարվածել է Ադի Իոան Բլազային, որպեսզի իրենց միջև կռիվ չգցի: Հայաստան գալուց, ինքն ուղեկցի կարիք չի ունեցել, իր քարտերը ոչ մեկին չէր վստահի, իսկ Բլազային վստահել է, որովհետև նա երիտասարդ էր և նման չէր խուլիգանի: Հայաստան գալուց կեղծ բանկային քարտերը թաքցվել են Ադի Իոան Բլազայի ուղեբեռում, նա այդ մասին իմացել է: Քանի որ ինքն է ղեկավարել Բլազայի գործողությունները, բնական է, դա անձամբ չէր անելու, ամբողջ վտանգը հասնելու էր Բլազային, իրենք այդպես են պայմանավորվել Լոնդոնում: Երևանի օդանավակայանում ուղեբեռը ստուգել են և ինքը մտածել է, որ դա վերջն է, սակայն ոչինչ չեն նկատել: Այդպես եկել են Երևան, քանի որ առավոտյան ժամը 6-ին են ժամանել, որոշել են ստուգել, թե բանկոմատներից ինչքան գումար է կարելի հանել: Ադի Իոան Բլազան վերցրել մի 4-5 քարտ, գտել է մի քանի բանկոմատ, որտեղից գումար է հանել և վերադարձել է հյուրանոց, գումարի չափը չի տպավորվել իր հիշողության մեջ: Իր հիշելով, այդ երեկո ինքը Բլազային ասել է, որ փորձի թեթևաբարո աղջիկներ գտնել և բերել հյուրանոց, Ադի Իոան Բլազան եկել է 2-3 աղջիկների հետ, բայց վերջիններիս չեն թողել մտնել հյուրանոց: Իհարկե, ինքը հետևել է Ադի Իոան Բլազային, նա իր հսկողության տակ է եղել: Օրը 2-3 անգամ դուրս են եկել քաղաք գողություն կատարելու, ինքը Բլազային միանգամից մի 15-20 քարտ է տվել, վերջինս մոտեցել է բանկոմատների մոտ, իսկ ինքը նրան սպասել է: Այն քարտերով, որոնց միջոցով առավոտյան հաջողվել է գումար հափշտակել, փորձել են Լոնդոնի ժամով կեսգիշերից հետո նորից գողություն կատարել, քանի որ դրանք օրեկան լինիտ են ունեցել: Ինքն իրոք պարբերաբար ստուգել է Բլազայի հազուստը և ուղեբեռը, քանի որ մի անգամ Բլազան սպասվածից քիչ գումար է հանձնել: Դա իր մեջ կասկած է հարուցել, ստուգելով ուղեբեռը, գուլպաների մեջ պահած 300.000 դրամ է հայտնաբերել: Կորցնելով Բլազայի հանդեպ վստահությունը՝ բարկացել և հարցրել է, թե ինչու է այդպիսի բան

արել, որ ինքը մինչ այդ հոգացել է նրա բոլոր կարիքները: Բլազան պատասխանել է, որ ինչ-որ հարսանիքի նվերի համար գումար է պահել: Ինչ վերաբերում է նրան, թե ինքն իբր արգելել է Բլազային մեկնել Հայաստանից և պատռել է Երևան-Բուխարեստ չվերթի վերջինիս ավտատոմսը, ապա նման դեպք չի եղել: Ադի Իոան Բլազան հափշտակված գումարները բերել և տվել է իրեն, իսկ ինքը դրանք պահել է սենյակում: Ղա տևել է մի 4 օր, մինչև Օլիվեր Ռադուկու Մարիանը ժամանել է Հայաստան, ինչը որևիցե կապ չի ունեցել իր կամ Բլազայի հետ: Օլիվերն իր համար չի եկել Հայաստան, ինքը վերջինիս կարիքը չի ունեցել, քանի որ իր հետ է եղել Ադի Իոան Բլազան: Օլիվերն եկել է սեփական քարտերով և սեփական նախաձեռնությամբ, մի անգամ Բլազային է առաջարկել դրանցով գումար հափշտակել և Բլազան դրան չի համաձայնվել: Օլիվեր Ռադուկու Մարիանը սեփական քարտերով է գողություն կատարել, դրանց միջոցով շատ քիչ գումար է հաջողվել հափշտակել, քանի որ գերմանական բանկերի քարտեր են եղել: Օլիվերը կանչել է Հայաստան Ղանիել Ֆլորին Ֆեռառուին, որի հետ ինքը որևիցե առնչություն չի ունեցել, դա Օլիվերի մարդն է եղել: Քանի որ Օլիվերի քարտերով չի հաջողվել մեծ գումար հափշտակել, նա գումարից շատ նեղն է եղել, մի անգամ գումար է ուզել և ինքը 700.000 դրամ է տվել: Մի օր Օլիվերն եկել է իր մոտ «Էրեբունի» հյուրանոց և իր ճամպրուկի մեջ տեսնելով 22 միլիոն դրամ, հարցրել է, թե արդյոք չի վախենում այդ գումարները պահել, առաջարկել է փոխարկել: Իմանալով, նա Մարոկկոյում տարադրամի փոխանակմամբ է զբաղվել, ինքը ասել է, որ վերջնի այդ գումարը և փոխանակի տարադրամով: Այդ օրը նա մի 20.000 եվրո է փոխարկել և բերել իրեն, թե որտեղ, ինքը չի իմացել, նրա հետ չի եղել: Իր կարծիքով, ոչ մի հանցագործություն այդ առումով չեն կատարել, որովհետև Եվրոպայում կարելի է փոխարկել ցանկացած չափի գումար:

Հետո Հայաստան է ժամանել Մարիուս Լուպուն սեփական կեղծ քարտերով, երևի Օլիվերի հետ էր գրուցել և տեղեկացել, որ իրենց հաջողվել է բավականին մեծ գումար հափշտակել, որ Ադին <<Բլոնդո>>-ն բախտավոր տղա է: Հայաստան ժամանելուց հետո, Մարիուս Լուպուն մի քանի անգամ իրեն խնդրել է միջնորդել, որ Ադին նրա համար էլ գումար հափշտակի: Բայց Ադին չի համաձայնվել, որովհետև զնչուներին չէր սիրում: Բլազան Մարիուս Լուպուն Լոնդոնում չի ձանաչել, մի գուցե մի անգամ տեսել է իր հետ և ինքը պատմել է, թե ինչ հանգամանքներում է Լուպուն իր երեսը վնասել:

Այնուհետև Հայաստան անսպասելի եկել է Ղանիել Ֆլորին Ֆեռառուին, որի համար Օլիվերի մայրն է ավիատոմս: Նա սկսել է փող հափշտակել Օլիվերի <<Ռադու>>-ի և Մարիուս Լուպուի համար: Շատ անգամ Օլիվեր Ռադուկու Մարիանը և Ղանիել Ֆլորին Ֆեռառուն գողություն կատարելու համար վերցրել են նաև Բլազային, միասին փող հափշտակելուց հետո վերադարձել են, Օլիվերը Ֆեռառուի հետ օգտագործված քարտերը տվել է Մարիուս Լուպուին: Նրանք շատ քիչ քարտեր են ունեցել մի 30-40 հատ, իսկ Ադի Իոան Բլազան հափշտակված փողը տվել է իրեն: Իր հիշելով, մի օր ոստիկանությունը նկատել է Ղանիելին և Օլիվերին բանկոմատի մոտ, դա օգոստոսի 25-ին կամ 26-ին է եղել: Նրանք վախեցած վերադարձել են հյուրանոց և ասել, որ նրանց ոստիկանությունն է նկատել: Ինքը հարցրել է, թե այդ դեպքում ինչու են Օլիվերի կողմից շահագործվող մեքենայով եկել հյուրանոց: Մարիուս Լուպուն իր և Բլազայի հետ ոչ մի գործնական կապ չի ունեցել, նա եկել է սեփական քարտերով, նրանից առաջ Հայաստանում գործել են <<Քիշտրուլյա>>-ի և Մարիուս Լուպուի եղբոր մարդիք: Ինքը նրանց չի ձանաչել, Հայաստանում նրանց պատահական է տեսել, իմացել է, որ Բաքաու քաղաքից են: Անունները չեն տպավորվել իր հիշողության մեջ, երեխաներ են եղել, իսկ ինքն երեխաների հետ աշխատել է չչվիվել: Հավանաբար նրանք վախեցել են, որ ինքը կարող է գումարները խլել, քանի որ հաճախ է

այդպես վարվել: Մարիուսն անձամբ է գումարներ հափշտակել բանկոմատներից և անձամբ է գողոնը փոխարկել տարադրամով, հետո քարտերի ինչ-որ մաս տվել է Օլիվերին և Ղանիել Ֆեռառուին, քանի որ նրանք գումար գրեթե չեն ունեցել, սոված են եղել, բոլորիս ինչ-որ ծառայություններ են մատուցել գումարի դիմաց:

Գումարներ գողանալով, Մարիուսը որոշել է օգոստոսի 26-ի առավոտյան գնալ Հայաստանից և մեկնել է ինքնաթիռով: Նույն օրն, ինքը Բլագային ասել է, որ տեղափոխվի այլ հյուրանոց, որովհետև ոստիկանների է նկատել հյուրանոցում և մտածել է, որ Բլագային կարող են ձանաչել, քանի որ բանկոմատներից հիմնականում նա է գումար հափշտակել: Բլագան տեղափոխվել է այլ հյուրանոց իր մոտ մնացած բոլոր քարտերով հանդերձ, դրանց միջոցով արդեն գրեթե չի ստացվել գումարներ ստանալ բանկոմատներից: Նույն օրը կամ առավոտյան մի օր առաջ Ադի Իրան Բլագան ավիատոմս է գնել, իսկ առավոտյան մեկնել է Հայաստանից, ինքը վերջինիս նորմալ է ձանաչարհել, փաթաթվել են եղբայրների պես: Իր հիշելով, Բլագային մեկնելուց առաջ մի 2 հազար եվրո է տվել, իմանալով, որ վերջինս փող է ուղարկել հարազատներին Ռուսիայի, ավիատոմս է գնել: Բլագայի գնալու օրը, ժամը 10-ին, Օլիվեր Ռադուկու Մարիանը մենակ եկել է իր մոտ, ինքը պատրաստվել է նույնպես փոխել հյուրանոցը: Օլիվերն իրեն առաջարկել է միասին սենյակ վարձակալել <<Երևան>> հյուրանոցում, քանի որ այն բարձրակարգ է և այնտեղ սեյֆեր կան: Ինքը համաձայնվել է, քանի որ այնտեղ աշխատում էր մի աղջիկ, որն իրեն դուր է եկել: Օլիվերի հետ կիսովի այդ սենյակն են վերցրել, իր հիշելով սեյֆում դրվել են միայն իր փողերը, մի 10 քարտ և մոտ 1 միլիոն դրամի չափի գումար, որոնք Բլագան բերել է իրեն մեկնելուց առաջ: Այդ օրն Օլիվեր Ռադուկու Մարիանը և Ղանիել Ֆլորին Ֆեռառուն մոտ մի 10000 եվրո են փոխարկել: Օլիվերն ինչ-որ բնակարան է վարձել Երևանում, որովհետև ուզեցել է այստեղ ընտանիքը բերել, նրա կնոջ եղբայրը Ղանիել Ֆեռառուն մտերիմ ընկերն է եղել: Այդ վարձակալած բնակարանից վերադարձել է իր մոտ հյուրանոց, որտեղ ամբողջ օրը մենակ է գտնվել եղել, հյուրանոցի սրճարանում է ժամանակ անցկացրել, հյուսիս և սուրճ է խմել: Ժամը 17-ի սահմաններում Ֆեռառուն և Օլիվերն են եկել, ինքը մի աղջկա հետ պետք է հանդիպեր հյուրանոցի մոտ: Ինքը փոխել է հագուստը ժամադրման համար, վերցրել է մոտ մեկ շաբաթ առաջ Հայաստանում 250.000 դրամով գնած <<Վերտու>> հեռախոսը, մի 200 ֆունտ ստերլինգ և մոտ 100.000 դրամ, որ շատ փող չծախսի: Երբ գնացել է այդ աղջկա հետ հանդիպելու, տեսել է, թե ինչպես են բռնել Օլիվեր Ռադուկու Մարիանին, իսկ Ղանիել Ֆլորին Ֆեռառուին հաջողվել է փախչել: Ինքը Ղանիելի հեռախոսահամարը չի ունեցել, նա Օլիվերի մարդն է եղել և ինքը նրան մինչ այդ չի ձանաչել: Այդ ժամանակ իրեն զանգահարել է վերոհիշյալ աղջիկն, ինքը տեսել է, որ հյուրանոցի մոտ ԱՄԾ աշխատակիցներ են և այնտեղ գնալ չի կարելի: Չանգահարել է Օլիվերին և հարցրել է, թե ինչու են նրան բռնել, վերջինս ասել է, որ անձնագրի հետ կապված խնդրի պատճառով: Օլիվերը խնդրել է Ղանիելի միջոցով անձնագիրը <<Եվրոպա>> հյուրանոցից բերել, բայց ինքը Ղանիելի հեռախոսահամարը չի իմացել: Ինքը հարցրել է Ղանիելի հեռախոսահամարը, բայց երբ զանգահարել է, վերջինս չի պատասխանել: Իմանալով, որ նա բնակվել է <<Եվրոպա>> հյուրանոցում, գնացել է այնտեղ և վերցրել է Օլիվերի անձնագրի պատճեն, իրեն այն տվել են սպասարարի աշխատակիցները: <<Եվրոպա>> հյուրանոցի աստիճաններով իջնելուց տեսել է Ղանիել Ֆեռառուին, որն իջնում էր Օլիվերի հետ և նրա ձամպրուկը ձեռքին: Ինքը հարցրել է, թե ինչու չի պատասխանել զանգին, Ղանիելը պատասխանել է, որ որոշել է գնալ: Ինքը հարցրել է, թե որտեղ է Օլիվերի անձնագիրը, Ղանիելն ասել է, որ նրա մոտ է: Ինքը վախեցել է անձամբ գնալ և անձնագիրը փոխանցել Օլիվերին, ասել է Ղանիելին, որ տանի և Օլիվերին հանձնի անձնագիրն: Այդ ընթացքում մի տաքսի է կանգնեցրել, Ղանիելն ասել է, որ անձնագիրը ոչ մի տեղ չի տանի, առաջարկել է

գնալ այնտեղից: Ճանապարհին ինքը կանգնեցրել է տաքսին և ասել է, որ մի քանի քարտ պետք է պահի, երբ դուրս է եկել քարտերը պահելու, շրջվելուց տեսել է, որ տաքսին Դանիել Ֆեռառուի հետ գնացել է: Ինքը կրկին գանգահարել է Օլիվերին, ասել է, որ պատճենը բերել չի կարող և իմացել է, որ Դանիելն անձնագրով արդեն եկել է հյուրանոց: Ինքը հարցրել է Օլիվերին, թե ինչ է պատահել, նա խորհուրդ է տվել փախչել, ասելով, որ վիճակը լավ չէ: Հասկանալով վիճակի լրջությունը, որոշել է փախչել Հայաստանից, իր մոտ եղել է միայն անձը հաստատող քարտն, անձնագիրը մնացել է հյուրանոցային համարում: Ինքը չի իմացել, որ այդ քարտով չի կարող մեկնել, դիմել է ծանոթներից մեկին, որն <<Էրեբունի>> հյուրանոցում զբաղվել է անվտանգության ապահովմամբ, խնդրել է մի տաքսի գտնել իր համար երկրից մեկնելու համար: Ծանոթը մի տաքսի է ուղարկել, որով ինքը գնացել է դեպի սահման և հետ է վերադարձել, քանի որ, հասնելով Գորիս, հասկացել է, որ ձեռքին եղած փաստաթղթով չի կարող անցնել սահմանը: Որոշել է հետ վերադառնալ, հասնելով Երևան, տեղավորվել է այն հյուրանոցում, որտեղ Բլագան է մնացել վերջին օրը: Ձևագահարել է ռումինական դեսպանատուն, ասել է, որ մեղավոր չէ, իր ընկերները բռնվել են: Դեսպանատնից իրեն ասել են, որ կարող է առավոտյան ժամը 10-ին գալ գրույցի, հաջորդ օրը դրա ընթացքում յուրովի է բացատրել է իրավիճակն, ասել է, որ անմեղ է, խնդրել է իրեն մի անձնագիր տալ Հայաստանից մեկնելու համար: Դեսպանատնից դուրս գալուց, նկատել է դրա դիմաց կանգնած մի ոստիկանական ավտոմեքենա, հասկացել է, որ արդեն սկսել են հետևել դեսպանատանը: Որոշել է դեսպանատնից դուրս չգալ մինչև փաստաբան գտնելը: Մի շաբաթվա ընթացքում իրեն գտել են փաստաբան, դրանից հետո միայն դուրս է եկել դեսպանատնից, դեսպանի անձնական ավտոմեքենայի մեջ կամավոր եկել է << ԱՍԾ շենքի կենտրոնական մուտքի մոտ, որտեղ իրեն դիմավորել են, այնուհետև մեղադրանք են առաջադրել և կալանավորել:

Հարցաքնության ժամանակ իր փաստաբանների խորհրդով հրաժարվել է ցուցմունքներ տալուց և միայն վերջերս է հասկացել, որ սխալ է վարվել: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բռնվել է Ադի Իոան Բլագան, հասկացել է, որ գործը փակելու հնարավորություն չկա: Ադի Իոան Բլագայի ցուցմունքների մեծ մասը համապատասխանել է իրականությանը, բացի այն հատվածից, որ ինքը նրան Հայաստանում ծեծել է և ստիպել է փող գողանալ բանկոմատներից: Վերջինիս իրոք ինքն է բերել Հայաստան և շատ է զղջացել, որ այդ իրավիճակի մեջ է գցել Բլագային:

Ինչ վերաբերում է Բլագայի կողմից Կորինա Դաբիժային փոխանցված 1000 ԱՄՆ դոլարին, ապա ինքը դրա հետ որևիցե առնչություն չի ունեցել, այդ գումարը Բլագային չի տվել: Իր իմանալով, Բլագան պարտք է եղել Միհայ Ֆաուրին 1000 դոլար և այդ գումարը փոխանցել է վերջինիս կնոջը Կորինա Դաբիժային: Իր ցուցմունքները դատապարտյալ Կոռնել Կոնստանտին Ստենգաչուն պնդել է նաև Ադի Իոան Բլագայի հետ առերես հարցաքնության ժամանակ:

Դատապարտյալ Դանիել Ֆլորին Ֆեռառուի ցուցմունքով այն մասին, որ բնակվելով Մեծ Բրիտանիայի Լոնդոն քաղաքում, աշխատել է շինարարությունում որպես բանվոր, մտերիմ է եղել համերկրացու Ռումինիայի քաղաքացի Օլիվեր Ռադուկու Մարիանի հետ, ժամանակին աշխատել է վերջինիս հոր հետ: Ծանոթ է եղել նաև մյուս համերկրացու Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի հետ, լսել է, որ վերջինս կեղծ բանկային քարտերով օգտագործմամբ զբաղվել է գողություններով, սակայն մինչև Հայաստան ժամանելը որևիցե գործնական կապ չեն պաշտպանել: 23.08.2008թ. ինքը ժամանել է Հայաստան Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի իրավերով << դրամի տեսքով գողոնն արտարժույթի փոխարկելու համար, վերջինս խոստացել է հատուցել ավիատոմսի արժեքն Երևան ժամանելուց հետո: Ավիատոմս գնելու համար գումարն ինքը պարտքով վերցրել է Օլիվեր Ռադուկու Մարիանի մորից, ժամանելով Երևան,

<<Եվրոպա>> հյուրանոցում բնակվել է Օլիվերի հետ նույն սենյակում: Վերջինիս և Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի պայմանավորվածության մանրամասնություններով չի հետաքրքրվել, սակայն լսել է, որ Օլիվերը պարտավորվել է ինչ-որ գումար տեղափոխել Լոնդոն:

Ինքը Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի համար գնել է մոտավորապես 20.000 եվրո, այդ գումարի 5 տոկոսը որպես վարձատրություն ստանալու պայմանով: Երևանի <<Կոնգրես>> հյուրանոցում Կոռնել Կոնստանտին Ստենգաչուն իրեն ծանոթացրել է Ադի Իոան Բլազայի հետ, մինչ այդ Լոնդոն քաղաքում չեն հանդիպել և ծանոթացել են միայն Հայաստանում: Վերջինիս հետ գնացել են քաղաքով շրջելու, ինքը վարել է վարձակալված ավտոմեքենան, նախապես չի իմացել Բլազայի դերակատարման մասին, այդ մասին տեղեկացել է ընթացքում: Բլազան աշխատել է Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի համար, եղել է վերջինիս խմբից և կեղծ բանկային քարտերով գումարներ է ստացել բանկոմատներից և հանձնել է Կոռնելին: Հաջորդ անգամ քաղաքում շրջելուց, Ադի Իոան Բլազան խնդրել է օժանդակել և օգնել գումարները բանկոմատներից ստանալու գործում, ինքը չի մերժել: Բլազան տվել է իրեն <<top up>>, <<Virginia>> և <<Orange>> կազմակերպությունների թողարկած հեռախոսային քարտերի երկու տրցակ, քարտերի վրա նշված են եղել PIN-ծածկագրերն: Ինքն այդ քարտերով որոշ գումարներ է ստացել բանկոմատներից: Այնուհետև, վախենալով հետևանքներից, հաջորդ անգամ քաղաքում շրջելուց, ինքը հրաժարվել է անմիջականորեն գողություն կատարելուց, վերադարձրել է քարտերը և գողացված գումարը Բլազային, որը բարկացել է, դրանից հետո ինքը միայն ավտոմեքենան է վարել: Այդպես քաղաք են դուրս եկել շրջելու 3-4 անգամ: Թե ընկերը Օլիվեր Ռադուկու Մարիանի ինչքանով է մտերիմ եղել Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի, Ադի Իոան Բլազայի և Մարիուս Լուպուի հետ, ինքը չի իմացել, նրանց միջև պայմանավորվածության մանրամասնություններով չի հետաքրքրվել, սակայն լսել է, որ Օլիվերը պարտավորվել է ինչ-որ գումար տեղափոխել Լոնդոն:

Վկա, <<Արդշինինվեստբանկ>> ՓԲԸ-ն <<Տիգրան Մեծ>> մասնաձյուղի գանձապահ Հայկուհի Մարտիրոսյանի ցուցմունքով այն մասին, որ 20.08.2008թ. բանկում իրեն է մոտեցել արտասահմանցի մի երիտասարդ և անզլերեն լեզվով ցանկություն է հայտնել գնել 4000 ԱՄՆ դոլար: Ինքը խնդրել է ներկայացնել անձնագիրը և համարժեք գումարն: Երիտասարդը ներկայացրել է Դրագոշ Իոնութ Բոտեզատուի տվյալներով Ռումինիայի քաղաքացու անձնագիր: Ինքը կազմել է արտարժույթի վաճառքի անդորրագիր, երիտասարդը ստորագրել է այն և վերցնելով փոխարկված գումարը՝ հեռացել է: 21.08.2008թ. բանկում իրեն է մոտեցել արտասահմանցի մեկ այլ երիտասարդ, խոսելով անզլերեն՝ ցանկություն է հայտնել գնել 2940 եվրո: Կարգի համաձայն, ինքը խնդրել է ներկայացնել անձնագիրը և համարժեք գումարն: Երիտասարդը ներկայացրել է Ադի Իոան Բլազայի տվյալներով Ռումինիայի քաղաքացու անձնագիր: Ինքը կազմել է արտարժույթի վաճառքի անդորրագիր, երիտասարդը ստորագրել է այն և վերցնելով փոխարկված գումարը՝ հեռացել է: 25.08.2008թ. բանկում իրեն է մոտեցել մի արտասահմանցի տղամարդ, անզլերեն լեզվով ցանկություն է հայտնել գնել 5000 եվրո: Ինքը խնդրել է ներկայացնել անձնագիրը և համարժեք գումարը: Տղամարդը ներկայացրել է Մարիուս Լուպուի տվյալներով Ռումինիայի քաղաքացու անձնագիր: Կազմվել է արտարժույթի վաճառքի անդորրագիր, տղամարդը ստորագրել է այն և վերցնելով փոխարկված գումարը՝ հեռացել է:

Վկա, <<Ամերիաբանկ>> ՓԲԸ-ն վճարային համակարգերի բաժնի գանձապահ Քրիստինա Մարտիրոսյանի նախաքննական ցուցմունքով այն մասին, որ 2008թ. օգոստոսին, հաճախ <<Ամերիաբանկ>> ՓԲԸ-ն վարչական շենք են եկել երկու արտասահմանցի երիտասարդներ, որոնք ըստ գործարքների

ժամանակ ներկայացված անձնագրերի, հանդիսացել են Ռուսիայի քաղաքացիներ Դրագոշ Իոնուտ Բոտեգատուն և Կատալին Իոնուտ Ապետրի Ֆուրդույը: Գրեթե միշտ նրանք միասին են եղել և իր մոտ նույնիսկ տպավորություն է ստեղծվել, որ նրանք եղբայրներ են: Նրանք մոտեցել են իրեն, ցանկություն են հայտնել <<Վեսթերն Յունիոն>> համակարգով գումարներ փոխանցել Մեծ Բրիտանիա և Ռուսիայի: Քանի որ այդ համակարգով թույլատրվել է գումար փոխանցել միայն ԱՄՆ դոլարի տեսքով, նրանք մոտ եղած << դրամը փոխարկել են տարադրամի, այնուհետև լրացրել և ստորագրել են համապատասխան փաստաթղթեր, որից հետո գումարը փոխանցվել է: Ըստ լրացված հայտարարագրերի՝ նրանք բնակվել են <<Ամրոց>> հյուրանոցում, ընդ որում Կատալին Իոնուտ Ապետրի Ֆուրդույը օգտվել է 077-34-63-42 հեռախոսահամարից: Բացի այդ, 23.08.2008թ. բանկում իրեն մոտեցել է մի արտասահմանցի երիտասարդ, որը ցանկություն է հայտնել <<Վեսթերն Յունիոն>> համակարգով 2100 եվրո փոխանցել Ռուսիայի՝ Նիկոլաե Դումային: Ինքը բացատրել է, որ այդ համակարգով գումարը կարելի է փոխանցել միայն ԱՄՆ դոլարի տեսքով, որից հետո նա տարադրամը փոխարկել է 934500 դրամի, այնուհետև փոխանցում կատարելու համար այդ գումարով գնել է 2940.14 ԱՄՆ դոլոր: Գործարք կատարելու համար ներկայացրել է Ադի Իոան Բլազայի տվյալներով Ռուսիայի քաղաքացու անձնագիր, լրացրել և ստորագրել է համապատասխան փաստաթղթեր, որից հետո գումարը փոխանցվել է: Բացի այդ, նույն օրը բանկում իրեն մոտեցել է մի արտասահմանցի երիտասարդ, անգլերեն լեզվով ցանկություն է հայտնել գնել 10.000 եվրո: Ինքը չի առարկել, քանի որ այդ գումարը չի գերազանցել << Կենտրոնական բանկի կողմից նշված սահմանաչափը 20 միլիոն դրամ: Ինքը խնդրել է ներկայացնել անձնագիրը և գումարն: Երիտասարդը ներկայացրել է Դանիել Ֆլորին Ֆեռառուի տվյալներով Ռուսիայի քաղաքացու անձնագիրը, տվել է 10.000 եվրոյին համարժեք 4.490.000 դրամ գումար: Ինքը կազմել է արտարժույթի վաճառքի անդորրագիր, իսկ երիտասարդը ստորագրել է այն և վերցնելով գոված 10.000 եվրոն՝ հեռացել է:

Վկա, <<Ինեկոբանկ>> ՓԲԸ մասնավոր փոխանցումների խմբի մասնագետ Լիանա Մնացականյանի նախաքննական ցուցմունքով այն մասին, որ 21.08.2008թ. բանկում իրեն մոտեցել է արտասահմանցի մի երիտասարդ և դժվարությամբ խոսելով ռուսերեն լեզվով՝ ցանկություն է հայտնել 1000 ԱՄՆ դոլար փոխանցել Ռուսիայի Գաբրիելա Օանա Ռուսուի տվյալներով: Ինքը խնդրել է ներկայացնել անձնագիրը և համարժեք գումարը: Երիտասարդը ներկայացրել է Ադի Իոան Բլազայի տվյալներով Ռուսիայի քաղաքացու անձնագիր, որպես բնակության հասցե նշել է <<Եվրոպա>> հյուրանոցը, իսկ որպես հեռախոսահամար 077-675024 բջջային համարը: Ինքը կազմել է փոխանցման ձևաթուղթը, երիտասարդը ստորագրել է այն և հեռացել է:

Վկա, <<Պրոմեթեյ բանկ>> ՍՊԸ-ն <<Տիգրան Մեծ>> մասնաճյուղի օպերատոր Մարինե Խաչատրյանի նախաքննական ցուցմունքով այն մասին, որ 25.08.2008թ. բանկում իրեն է մոտեցել արտասահմանցի մի երիտասարդ, ցանկություն է հայտնել Կորինա Դաբիջայի տվյալներով 933 ԱՄՆ դոլար փոխանցել Ռուսիայի: Ինքը խնդրել է ներկայացնել անձնագիրը և համարժեք գումարն: Երիտասարդը ներկայացրել է Ադի Իոան Բլազայի տվյալներով Ռուսիայի քաղաքացու անձնագիր, որպես բնակության հասցե նշել է <<Եվրոպա>> հյուրանոցը, իսկ որպես հեռախոսահամար 077-67-50-24 բջջային համարն: Ինքը կազմել է փոխանցման ձևաթուղթը, երիտասարդը ստորագրել է այն և հեռացել է:

Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի կողմից <<Երևան>> հյուրանոցում վարձակալված սենյակում հայտնաբերված գողոնով 25.200 եվրոյով և 4.040.000 դրամով:

Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի կողմից <<Երևան>> հյուրանոցում վարձակալված սենյակում հայտնաբերված, Ադի Իոան

Բլազայի կողմից օգտագործված թվով 10 հատ 4921828820858654, 4539780131720210, 4543133694831129, 4921827079829333, 4921819117976325, 4917541158941309, 4539794497475210, 4539785385530710, 4659010479966058, 4921827133063457 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով:
<<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ն բանկոմատներից հայտնաբերված, Ադի Իոան Բլազայի կողմից օգտագործված 4539795171235200, 4539795163445072, 4539792456667504, 4462720158230025, 4539798585547020, 4921819624425816, 4658582470799002, 4539785202342604, 4659010372044102, 4462744688362116, 4921818442551829, 4921819282764738 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով:
<<Անելիք բանկ>> ՓԲԸ-ն բանկոմատներից հայտնաբերված, Ադի Իոան Բլազայի կողմից օգտագործված 6759676150760830, 675940382431080393, 6759682125713250, 4539791651421600, 4658582059989008, 4539781060081111, 675940132821223941, 4921816532421119, 4462740000316517, 4921819624863719, 4917315146734252, 4547423202356347, 4547421101271138, 4921817090417317 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով:
<<ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ-ն բանկոմատից հայտնաբերված, Ադի Իոան Բլազայի կողմից օգտագործված, 4539793226028415 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով: 11.12.2008թ. արձանագրությամբ առգրավված և զննված <<Վեսթերն Յունիոն>> համակարգով դրամային փոխանցում կատարելու 25.08.2008թ. դիմումով և անդորրագրով, ըստ որի Ադի Իոան Բլազան <<Պրոմեթեյ բանկ>> ՍՊԸ-ից նշված օրը Կորինա Դաբիջայի անվամբ Ռումինիա է փոխանցել 933 ԱՄՆ դոլար զումար: 11.12.2008թ. արձանագրությամբ առգրավված և զննված արտարժույթի առքի ու վաճառքի AAA 002374 և AAA 002375 համարների 23.08.2008թ. անդորրագրերով, ըստ որոնց՝ Ադի Իոան Բլազան <<Ամերիաբանկ>> ՓԲԸ-ում 2100 եվրոն փոխարկել է 934.500 դրամով, իսկ հետո 898.212 դրամը փոխարկել է 2940.14 ԱՄՆ դոլարով:
11.12.2008թ. արձանագրությամբ առգրավված և զննված <<Վեսթերն Յունիոն>> համակարգով դրամային փոխանցում կատարելու 23.08.2008թ. դիմումով և անդորրագրով, ըստ որի Ադի Իոան Բլազան <<Ամերիաբանկ>> ՍՊԸ-ից նշված օրը Նիկոլայե Դումայի անվամբ Ռումինիա է փոխանցել 2940.14 ԱՄՆ դոլար:
11.12.2008թ. արձանագրությամբ առգրավված և զննված արտարժույթի փոխանակման 8082100375337 համարի 21.08.2008թ. անդորրագրով, ըստ որի՝ Ադի Իոան Բլազան <<Արդշինիմեստբանկ>> ՓԲԸ <<Տիգրան Մեծ>> մասնաձյուղում 1.317.120 դրամը փոխարկել է 2.940 եվրոյի:
11.12.2008թ. արձանագրությամբ առգրավված և զննված <<Վեսթերն Յունիոն>> համակարգով դրամային փոխանցում կատարելու 21.08.2008թ. արտարժույթի մուտքի օրդերով և անդորրագրով, ըստ որի՝ Ադի Իոան Բլազան <<Ինեկոբանկ>> ՓԲԸ-ն <<Աբովյան-18>> մասնաձյուղից նշված օրն Անա Դումային անվամբ Ռումինիա է փոխանցել 1000 ԱՄՆ դոլար:
Կռնել Կոնստանտին Ստենգաչուի կողմից օգտագործվող 353510029036580 գործարանային համարով <<NOKIA 6300>> մոդելի հեռախոսով, որի մեջ մուտքագրված են Ադի Իոան Բլազայի, Օլիվեր Ռադուկու Մարիանի և Դանիել Ֆլորին Ֆեռառուլի կողմից օգտագործվող, համապատասխանաբար 077675024, 077672911 և 0040751244454 հեռախոսահամարները <<BlArme>>, <<Rad Arm>> և <<Ferary>> անունների տակ, վերջինիս նախկին կնոջից ստացված SMS-հաղորդագրություններով:
Օլիվեր Ռադուկու Մարիանի և Դանիել Ֆլորին Ֆեռառուլին 27.08.2008թ. բերման ենթարկելու արձանագրությամբ:
Օլիվեր Ռադուկու Մարիանի և Դանիել Ֆլորին Ֆեռառուլի նկատմամբ Դատարանի կողմից 10.04.2009թ. կայացված

մեղադրական դատավճռով:

Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի նկատմամբ Դատարանի կողմից 12.10.2009թ. կայացված մեղադրական դատավճռով:

Ադի Իոան Բլագայի տվյալներով 21.08.2008թ. Երևան-Վիեննա-Բուխարեստ չվերթի ավիատոմսով:

ՀՀ ոստիկանության Ինտերպոլի ԱԿԲ-ից 17.10.2008թ. ստացված N33/A4610 CF3/318/5/2008 գրությամբ, Ռումինիայի Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյի 13.10.2008թ. 1796815/08/BCR նամակով այն նասին, որ Մարիուս Լուպուն, Կոռնել Կոնստանտին Ստենգաչուն, Օլիվեր Ռադուկու Մարիանը, Դանիել Ֆլորին Ֆեռառուն, Ադի Իոան Բլագան, Դրագոշ Իոնուտ Բոտեզատուն անցել են այդ երկրի քրեական հաշվառումներով կեղծ բանկային քարտերով բանկոմատներից գողություններ կատարելու համար, ընդ որում Մարիուս Լուպուն, Կոռնել Կոնստանտին Ստենգաչուն և Օլիվեր Ռադուկու Մարիանը հանդիսացել են տարբեր հանցավոր խմբերի պարագլուխներ: Մարիուս Լուպուն 2003թ.-ից ընտանիքի անդամների հետ կազմակերպել է հանցավոր խումբ, որը կատարել է հանցագործություններ Ռումինիայում, Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Գերմանիայում, իսկ Դրագոշ Իոնուտ Բոտեզատուն և Անդրեյ-Պետրոնել Բուրսուկն օգտագործվել են որպես <<զենք>>: Օլիվեր Ռադուկու Մարիանը հայտնի է կեղծ բանկային քարտերով Մեծ Բրիտանիայում, Նիդերլանդներում, Իտալիայում, Իսրայելում, Մարոկկոյում, Ֆրանսիայում գողություններ կատարելու համար, հավաքագրել է տարբեր լմարդկանց Բաքաու քաղաքից, օգտագործել է որպես միջոց բանկոմատներից գումարներ գողանալու համար, այդ եղանակով օգտագործել է նաև Դանիել Ֆլորին Ֆեռառունին, անձամբ զբաղվել է հյուրանոցային համարների անրագրմամբ և ավտոմեքենաների վարձակալությամբ այն քաղաքներում, որտեղ նախապատրաստվել են հանցագործությունները: Կոռնել Կոնստանտին Ստենգաչուն եղբոր հետ կազմակերպել է մեկ այլ հանցավոր խումբ և հանդիսացել է դրա պարագլուխն, առաջինն է եղել, որ սկսել է հանցավոր գործունեությունը Հայաստանում, իր նախաձեռնությամբ են այնտեղ մեկնել Օլիվեր Ռադուկու Մարիանը, Ադի Իոան Բլագան և Դանիել Ֆլորին Ֆեռառուն:

ՀՀ ոստիկանության Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյից ստացված 25.10.2008թ. N 33/A816գ-CF3/318/5/2008 գրությամբ այն նասին, որ համաձայն Մեծ Բրիտանիայի Ինտերպոլի ԱԿԲ-ից ստացված տեղեկատվության, Մարիուս Լուպուն, Օլիվեր Ռադուկու Մարիանը և Ադի Իոան Բլագան, անցնում են ոստիկանության քրեական հաշվառումներով, Մարիուս Լուպուն դատապարտվել է 2 անգամ ոստիկանությանը դիմադրելու և խարդախության համար, Օլիվեր Ռադուկու Մարիանը դատապարտվել է 2 անգամ:

<<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ից N Ե-22-1748 գրությամբ ստացված, նշված բանկի բանկոմատներում կատարված գործարքների փաստաթղթային հավելվածներով:

Նույն ՓԲԸ-ից N Ե-22-1748 գրությամբ ստացված լազերային սկավառակով, որտեղ զետեղված են նշված բանկի բանկոմատների լուսանկարահանումները Օլիվեր Ռադուկու Մարիանի, Դանիել Ֆլորին Ֆեռառուի, Ադի Իոան Բլագայի և Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի կողմից կատարված և ֆիքսված գողության հանցադեպերով:

Նույն ՓԲԸ-ից N Ե-22-1766 գրությամբ ստացված լազերային սկավառակով, որտեղ զետեղված են նշված բանկի բանկոմատների լուսանկարահանումները Օլիվեր Ռադուկու Մարիանի, Դանիել Ֆլորին Ֆեռառուի, Ադի Իոան Բլագայի և Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի կողմից կատարված և ֆիքսված գողության հանցադեպերով:

Նույն ՓԲԸ-ից N Ե22-1766 գրությամբ ստացված, նշված բանկի բանկոմատներում կատարված գործարքների փաստաթղթային հավելվածներով:

<<Արմենիան քարդ>> ՓԲԸ-ից N 115-08 գրությամբ ստացված <<-

ում գործող բանկերի բանկոմատներում կատարված գործարքների ցանկով:

Նույն ՓԲԸ-ից N 117-08 գրությամբ ստացված լազերային սկավառակով, որտեղ գետեղված են <<Անելիք բանկ>> ՓԲԸ-ն բանկոմատների լուսանկարահանումները Ադի Իոան Բլազայի և Դանիել Ֆլորին Ֆեռառուի կողմից կատարված և ֆիքսված գողության հանցադեպերով:

<<Անելիք բանկ>> ՓԲԸ-ից ստացված, 2008թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին, նշված բանկի բանկոմատներում կատարված գործարքների կապակցությամբ ստացված հետզանձումային պահանջների ցանկով և լազերային սկավառակով, որտեղ գետեղված են այդ գործարքների լուսանկարահանումները Ադի Իոան Բլազայի և Դանիել Ֆլորին Ֆեռառուի պատկերներով:

<<Կոնվերս բանկ>> ՓԲԸ-ից ստացված, 2008թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին նշված բանկի բանկոմատներում կատարված գործարքների կապակցությամբ ստացված հետզանձումային պահանջների ցանկով:

05.12.2008թ. արձանագրությամբ առգրավված 2 լազերային սկավառակներով, որտեղ գետեղված են <<HSBC>> ՓԲԸ-ն ընկերության բանկոմատների տեսագրությունները Ադի Իոան Բլազայի կողմից կատարված և ֆիքսված գողության հանցադեպերով:

05.12.2008թ. արձանագրությամբ առգրավված, 2008թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին <<HSBC>> բանկի բանկոմատներում կատարված գործարքների կապակցությամբ ստացված հետզանձումային պահանջների ցանկով:

2008թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ն բանկոմատներում կատարված գործարքների կապակցությամբ ստացված հետզանձումային պահանջների ցանկով և լազերային սկավառակով, որտեղ գետեղված են նշված գործարքների լուսանկարահանումները, կատարված այդ բանկի բանկոմատների կողմից:

2008թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին <<ԱԿԲԱ-Կրեդիտ Ակրիկոլ>> ՓԲԸ-ն բանկոմատներում կատարված գործարքների կապակցությամբ ստացված հետզանձումային պահանջների ցանկով և լազերային սկավառակով, որտեղ գետեղված են այդ գործարքների լուսանկարահանումները, կատարված նշված բանկի բանկոմատների կողմից:

13.10.2008թ. N 132/08 գրությամբ <<Արմենիան>> քարդ>> ՓԲԸ-ից ստացված լազերային սկավառակով, որտեղ գետեղված են <<Արցախբանկ>> ՓԲԸ-ն ընկերության Տիգրան Մեծ 3/6 հասցեում տեղակայված բանկոմատի լուսանկարահանումները Ադի Իոան Բլազայի կողմից կատարված և ֆիքսված գողության հանցադեպերով:

13.10.2008թ. N 132/08 գրությամբ <<Արմենիան>> քարդ>> ՓԲԸ-ից ստացված այն գործարքների ցանկը, որոնց կապակցությամբ <<Արցախբանկ>> ՓԲԸ-նը հետզանձումային պահանջներ են ներկայացվել արտերկրից, <<Արցախբանկ>> ՓԲԸ-ն Տիգրան Մեծ 3/6 հասցեում տեղակայված բանկոմատում կատարված վերոհիշյալ գործարքների թղթային հավելվածը:

11.09.2008, 11.12.2008, 17.12.2008, 30.03.2009 թվականների զննության արձանագրություններով

Կատալին Իոնուտ Ապետրի Ֆուրդույին լուսանկարով մեղադրյալ Ադի Իոան Բլազային ճանաչման ներկայացնելու մասին 22.02.2011թ. արձանագրությամբ:

Մարիուս Լուպուին լուսանկարով մեղադրյալ Ադի Իոան Բլազային ճանաչման ներկայացնելու մասին 22.02.2011թ. արձանագրությամբ:

Իոնուտ Մարիան Ստենգաչուին լուսանկարով մեղադրյալ Ադի Իոան Բլազային ճանաչման ներկայացնելու մասին 22.02.2011թ. արձանագրությամբ:

արձանագրությամբ:

Միհայ Ֆաուրին լուսանկարով մեղադրյալ Ադի Իոան Բլազային ճանաչման ներկայացնելու մասին 22.02.2011թ. արձանագրությամբ:

Քննչական փորձարարություն կատարելու 23.02.2011թ. արձանագրությամբ այն մասին, որ մեղադրյալ Ադի Իօան Բլազան մատնացույց է արել «<Արդշինինվեստբանկ>> ՓԲԸ-ն «<Տիգրան Մեծ>> մասնաձյուղը, որտեղ ՀՀ տեսքով գողոնը Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի հանձնարարությամբ փոխարկել է եվրոյով, ինչպես նաև «<Լևոն Թրավել>> ՍՊԸ-ն գրասենյակը, որտեղ գնել է Երևան-Վիեննա-Բուխարեստ 21.08.2008թ. չվերթի ավիատոմսը:

Մատնադրոշմային և համակարգչատեխնիկական համալիր փորձաքննության թիվ 08-1166 եզրակացությամբ այն մասին, որ «<Երևան>> հյուրանոցում Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի կողմից վարձակալած սենյակում հայտնաբերված 10 հատ պլաստիկ քարտերը, ինչպես նաև «<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ն և «<Անելիք Բանկ>> ՓԲԸ-ն բանկոմատներում հայտնաբերված 72 հատ պլաստիկ քարտերը պիտանի են օգտագործման համար որպես բանկային քարտեր, դրանց վրա առկա տպագրական գրառումները մասամբ կամ ամբողջությամբ չեն

համապատասխանում մագնիսական շերտի վրա գրառված տեղեկություններին, չեն համապատասխանում սահմանված նմուշներին և կեղված են մագնիսական շերտի վերստառման եղանակով: «<Երևան>> հյուրանոցում Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի կողմից վարձակալած սենյակում հայտնաբերված 10 հատ պլաստիկ քարտերը հանդիսանում են 4921828820858654, 4539780131720210, 4543133694831129, 4921827079829333, 4921819117976325, 4917541158941309, 4539794497475210, 4539785385530710, 4659010479966058, 4921827133063457 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները: «<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ն բանկոմատներում հայտնաբերված 43 հատ պլաստիկ քարտերը հանդիսանում են 4659110018040009, 4539781872620049, 4659220064134000, 4658590570260031, 4659010042649017, 4539795171235200, 4659220064140015, 4539795163445072, 4539792456667504, 4462720158230025, 4539798585547020, 4539785053052443, 4921819624425816, 4539798712295006, 4539780119427135, 4539787073568317, 4539780094272126, 4658580360158008, 4658580079088009, 4659110342684001, 4539782217901029, 4659110306750004, 4658582470799002, 4539785202342604, 4659230065122003, 4659010372044102, 4539796178764085, 4539789040892309, 4539789698637139, 4539789726440100, 4539786140228269, 4921818096628535, 4539781881625104, 4659010309891104, 4539795898757205, 4539789482002235, 4462744688362116, 4917487527255007, 4921818442551829, 4917546309575583, 4917545392918346, 4917542394107853, 4921819282764738

համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները: «<Անելիք Բանկ>> ՓԲԸ-ն բանկոմատներում հայտնաբերված 29 հատ պլաստիկ քարտերը հանդիսանում են 4921816400394356, 6759676150760830, 6759683118544785, 6759647262169467, 4974927305836718, 4658580125043016, 4921817252767061, 6759675435674832, 675940341802153858, 675940382431080393, 6759675748121166, 6767104913517124, 4921817883253911, 6759686129207441, 6767096815236623, 6759682125713250, 4539791651421600, 4658580413680008, 4658582059989008, 4539781060081111, 675940132821223941, 4921816532421119, 4462740000316517, 4921819624863719, 4917315146734252, 4547423202356347, 6759692146113612, 4547421101271138, 6759684276494607 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները:

Համակարգչատեխնիկական փորձաքննության թիվ 08-1472 եզրակացությամբ այն մասին, որ «<Ակբա-Կրեդիտ Ազրիկոլ բանկ>> ՓԲԸ-ն բանկոմատից հայտնաբերված 4539793226028415 համարի պլաստիկ քարտը և «<Անելիք բանկ>> ՓԲԸ-ն բանկոմատից հայտնաբերված 4921817090417317 համարի պլաստիկ քարտը

և «<Անելիք բանկ>> ՓԲԸ-ն բանկոմատից հայտնաբերված 4921817090417317 համարի պլաստիկ քարտը

պիտանի են օգտագործման համար որպես բանկային քարտեր, դրանց վրա առկա տպագրական գրառումները մասամբ կամ ամբողջությամբ չեն համապատասխանում մագնիսական շերտի վրա գրառված տեղեկություններին, չեն համապատասխանում սահմանված նմուշներին և կեղված են մագնիսական շերտի վերագրառման եղանակով:

2008թ. հուլիս-հոկտեմբեր ժամանակահատվածում <<Զվարթնոց>> օդանավակայանով << մուտք գործած և մեկնած Ռումինիայի քաղաքացիների ցանկով, որտեղ նշված է, որ Կոռնել Կոնստանտին Ստենգաչուն և Ադի Իոան Բլագան ժամանել են << նույն 18.08.2008թ. թիվ 965 չվերթով և կես րոպեի տարբերությամբ ժամը 00:50-ին հատել են սահմանային հսկողության գոտին: Օլիվեր Ռադուկու Մարիանը << է ժամանել միայն 20.08.2008թ. և սահմանային հսկողությունն է անցել ժամը 23:06-ին:

<<Եվրոպա>> հյուրանոցից ստացված գրությամբ այն մասին, որ Ադի Իոան Բլագան և Կոռնել Կոնստանտին Ստենգաչուն 2008թ. օգոստոսի 17-ից մինչև 18-ն ընկած ժամանակահատվածում, բնակվել են նշված հյուրանոցի թիվ 215 սենյակում, Օլիվեր Ռադուկու Մարիանը 2008թ. օգոստոսի 20-ից մինչև 22-ը բնակվել է նույն հյուրանոցի թիվ 115 սենյակում, իսկ օգոստոսի 22-ից մինչև 28-ը թիվ 314 սենյակում, որտեղ օգոստոսի 24-ից բնակվել է նաև Ռումինիայի քաղաքացի Ղանիել Ֆլորին Ֆեռառուն:

<<Էրեբունի>> հյուրանոցից ստացված հաշվառման քարտերով այն մասին, որ Ադի Իոան Բլագան և Կոռնել Կոնստանտին Ստենգաչուն 2008թ. օգոստոսի 18-ից մինչև 20-ն ընկած ժամանակահատվածում բնակվել են նշված հյուրանոցի թիվ 705 սենյակում:

<<Կոնգրես>> հյուրանոցից ստացված 08.09.2008թ. գրությամբ այն մասին, որ Ռումինիայի քաղաքացիներ Մարիուս Լուպուն և Կոռնել Կոնստանտին Ստենգաչուն բնակվել են այնտեղ 2008թ. օգոստոսի 22-ից մինչև 27-ը:

<<Ղ-Տելեկոմ>> ՓԲԸ-ից ստացված Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի կողմից օգտագործվող 077-675035 հեռախոսահամարից, Օլիվեր Ռադուկու Մարիանի կողմից օգտագործվող 077-672911 հեռախոսահամարից, Ղանիել Ֆլորին Ֆեռառուի կողմից օգտագործվող 077783691 հեռախոսահամարից, Ադի Իոան Բլագայի կողմից օգտագործվող 077-675024 հեռախոսահամարից, Մարիուս Լուպուի կողմից օգտագործվող 077-737116 հեռախոսահամարից կայացած ելքային ու մուտքային զանգերի վերծանումներով:

Ղատարանը, << քրեադատավարական օրենսդրության պահանջների պահպանմամբ վերլուծելով և գնահատելով ամբաստանյալի նախաքննական և ընդհանուր իրավասության դատարանում տրված ցուցմունքները, համադրելով դրանք քրեական գործի դատական քննությամբ ձեռք բերված և հետազոտված ապացույցների հետ, գնահատելով դրանք վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, իրենց համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված ներքին համոզմամբ, իրավացիորեն գտել է, որ ամբաստանյալ Ադի Իոան Բլագայի մեղավորությունը << քրեական օրենսգրքի 190 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 177 հոդվածի 3-րդ մասի 1-ի ու 2-րդ կետերի հատկանիշներով նախատեսված հանցանքներ կատարելու մեջ ապացուցված է, որի համար նա ենթակա է քրեական պատասխանատվության և պատժի, ուստի Ղատարանը ճիշտ է կիրառել քրեական օրենքը, այդ փաստական հանգամանքները համապատասխանում են ամբաստանյալի՝ << քրեական օրենսգրքի վերջը նշված հոդվածներով նախատեսված հանցանքների հատկանիշներին, որոնք հիմնավորվում են քրեական գործով ձեռք բերված վերոհիշյալ ապացույցներով:

Ըստ << ոստիկանության Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյից ստացված 25.10.2008թ. N 33/A816գ-CF3/318/5/2008

գրության, համաձայն որի Մեծ Բրիտանիայի Ինտերպոլի ԱԿԲ-ից ստացված տեղեկատվության, Մարիուս Լուպուն, Օլիվեր Ռադուկու Մարիանը և Ադի Իոան Բլազան, անցնում են ոստիկանության քրեական հաշվառումներով, Մարիուս Լուպուն դատապարտվել է 2 անգամ ոստիկանությանը դիմադրելու և խարդախության համար, Օլիվեր Ռադուկու Մարիանը դատապարտվել է 2 անգամ և Ադի Իոան Բլազան դատապարտվել է 1 անգամ խարդախություն կատարելու համար: Սակայն ամբաստանյալը պնդում է, որ նախկինում դատված չի եղել, նշված տեղեկանքում ամրագրված է, որ ինքը նախկինում դատված չի եղել և Դատարանի հետևությունը դատվածության վերաբերյալ զուտ թարգմանության սխալի արդյունք է:

ՀՀ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ որպես ամբաստանյալ Ադի Իոան Բլազայի անձը բնութագրող հատկանիշ չպետք է հաշվի առնվի նախկինում դատված լինելու հանգամանքը՝ նկատի ունենալով, որ դրա վերաբերյալ քրեական գործով ձեռք չեն բերվել բավարար ապացույցներ:

Դատարանը հանգել է այն հետևության, որ ամբաստանյալը իրեն մասնակի մեղավոր ճանաչելով նպատակ է հետապնդում մեղմացնելու իր կողմից կատարած արարքները և նրա ցուցմունքներն այն մասին, որ ինքը Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի ճնշման ներքո է կատարել իրեն վերագրված բոլոր հանցագործությունները և մեղավոր է միայն «Վեսթերն Յունիոն» համակարգի միջոցով Ռումինիա հարագատներին 2940 ԱՄՆ դոլարի չափով փոխանցված գումարի հափշտակության մեջ, իսկ մնացած գողոնը գողացել ու հանձնել է Կոռնել Կոնստանտին Ստենգաչուին: Ինչ վերաբերում է Կորինա Դաբիժայի տվյալներով «Վեսթերն Յունիոն» համակարգի միջոցով փոխանցված 933 ԱՄՆ դոլարի, ապա այն փոխանցել է Ստենգաչուի հանձնարարությամբ վերջինիս կնոջն: Այդ գումարն իրեն Երևանում տվել է Կոռնելը, միասին գնացել են փոխանցման կետ, նա տվել է իր անձնագիրը և Կորինա Դաբիժայի տվյալները և ցուցում է տվել գումարը այդ անվամբ նրա կնոջը: Հայաստանում գտնվելու ընթացքում անգամ նույնիսկ ցանկացել է դիմել իրավապահ մարմիններին և հայտնել ամբողջ իրողությունը, սակայն լինելով օտարերկրացի և գտնվելով Ստենգաչուի և վերջինիս ընկերների ճնշման և հսկողության ներքո, չի կարողացել դիմել այդ քայլին: Հայաստանում աշխատելով նրանց համար, նկատել է, որ վերջիններս իրենից որոշ հանգամանքներ թաքուն են պահել, խաբել են իրեն: Ստենգաչուն հանցավոր գործողությունն իրականացնելու նպատակով իրենից վերցրել են անձնագիրը և ստիպել, որպեսզի ինքը կատարի նրա թելադրած բոլոր վտանգավոր արարքները: Միաժամանակ իրենից վերցրել է բոլոր գողոնը, որպեսզի ինքը, չունենալով գումար, չկարողանա փախուստի դիմել և հեռանալ Հայաստանից, արժանահավատ չեն՝ նպատակ են հետապնդում մեղմացնելու իր կողմից կատարած հանցանքները և նրա ցուցմունքները հերքվում են քրեական գործով ձեռք բերված ու դատարանում հետազոտված դատապարտյալներ Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի, Դանիել Ֆլորին Ֆեռառուի, վկաներ Քրիստինա Մարտիրոսյանի, Հայկուհի Մարտիրոսյանի, Լիանա Մնացականյանի, Մարինե Խաչատրյանի ցուցմունքներով, ինչպես նաև վերոհիշյալ ապացույցներով:

Հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, հանցավորի անձը բնութագրող տվյալները, այդ թվում պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքները որոշիչ հանգամանքներ են պատժի տեսակը և չափը որոշելու հարցում:

Հանցագործության համար նախատեսված պատիժներից առավել խիստը նշանակվում է, եթե նվազ խիստ տեսակը չի կարող ապահովել պատժի նպատակները:

Պատիժ նշանակելիս հանցավորի նկատմամբ անհատական մոտեցումը անհրաժեշտ է, որպեսզի դատարանը պատժի տեսակն ու չափը որոշելիս համոզվի, որ դրանով կհասնի պատժի վերը

նշանակված նպատակներին, որոնք փոխկապակցված ու փոխհամաձայնեցված են, /մեկ նպատակը ենթադրում է մյուսները, և յուրաքանչյուրի ինքնուրույն իրականացումն օժանդակում է մյուսներին/: Այսինքն՝ պատժի նպատակներին հասնելու երաշխիք է հանցագործություն կատարած անձի նկատմամբ արդարացի և արարքի ծանրությանը և հասարակական վտանգավորությանը համապատասխան պատիժ նշանակելը:

Վերոգրյալ հոդվածների բովանդակային վերլուծությունից և սույն քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 177 հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով մեղադրվող ամբաստանյալ Ադի Իօան Բլազայի նկատմամբ պատժի տեսակն ու չափը որոշելիս առաջին ատյանի դատարանը ղեկավարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 61 հոդվածով սահմանված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, բավարար չափով ստուգման ու բազմակողմանի գնահատման է ենթարկել ամբաստանյալի կողմից բերված վերաքննիչ բողոքում մատնանշված բոլոր հանգամանքները, նրա կողմից կատարած հանցանքի հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, անձը բնութագրող տվյալները, այդ թվում պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, մասնավորապես այն, որ ամբաստանյալն նախկինում դատված է եղել, հանցագործության մեջ առանձնապես ակտիվ դերը, նրա պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք չարձանագրելով, հետազոտելով ձեռք բերված ապացույցներն իրենց համակցությամբ՝ իրավացիորեն ամբաստանյալի նկատմամբ նշանակել է արդարացի պատիժ, ինչը բխում է ՀՀ քրեական օրենսգրքի 10 հոդվածով անրագրված արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքից՝ համապատասխանում է կատարված հանցանքի ծանրությանը, այն կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ ու բավարար է նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար և կարող է ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48 հոդվածով նախատեսված պատժի նպատակները, այն է՝ վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին:

Անդրադառնալով ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64 հոդվածի կիրառման հարցին, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ սույն գործով բացակայում են հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի, առողջության և այլ հանգամանքների հետ կապված այնպիսի բացառիկ հանգամանքներ, որոնք էականորեն կնվազեցնեն Ադի Իօան Բլազայի կողմից կատարած արարքի հանրորեն վտանգավորության աստիճանը, հետևաբար վերջինիս նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64 հոդվածի կիրառմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 177 հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ նշանակելու օբյեկտիվ հիմքեր չկան:

Վերոգրյալ հիմքերի առկայության պայմաններում, Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ ամբաստանյալի վերաքննիչ բողոքում մատնանշված հանգամանքներն իրենց համակցությամբ, որոնք արդեն իսկ հաշվի են առնվել դատարանի կողմից պատիժ նշանակելիս, չեն նվազեցնում ամբաստանյալի կատարած հանցավոր արարքի հանրության համար վտանգավորության աստիճանը և նրա նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը մեղմացնելու, նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ նշանակելու, առումով դատավճիռը փոփոխելու համար օբյեկտիվ հիմքեր առկա չեն, թեկուզև Դատարանը որպես ամբաստանյալի անձը բնութագրող հանգամանք ոչ ճիշտ դիտել է դատվածությունը, այնուհանդերձ դատավճռով նշանակված պատիժը համաչափ է հանցագործության

ծանրությանը և ամբաստանյալի անձին:
Քրեական գործի քննության նախորդ փուլում թույլ չեն տրվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտումներ, որոնք կհանգեցնեին դատական սխալի:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 393, 394, հոդվածներով` ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Ամբաստանյալի վերաքննիչ բողոքը մերժել` օրինական ուժի մեջ թողնելով Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2011թ. հոկտեմբերի 28-ի դատավճիռն` ըստ մեղադրանքի Ադի Իօան Բլազայի` ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 177 հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով:
Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ Վճռաբեկ դատարանին` հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ` ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ` ստորագրություններ

Իսկականի հետ ձիշտ է`

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ` Կ. ԴԱԶԱՐՅԱՆ

Դատական ակտի ամսաթիվը:

25-01-2012

Դատական ակտ:

Գործ ԵԿԴ/0088/01/11

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

2012թ. հունվարի 25-ին Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԸ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ`

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ Կ. ԴԱԶԱՐՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ Գ. ՄԵԼԻՔ-ՍԱՐԳՍՅԱՆ
Հ. ՏԵՐ-ԱԴԱՄՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՄԲ` Լ. ՓՈԼԱԴՅԱՆԻ

Մասնակցությամբ`

ՄԵՂԱԴՐՈՂ` Գ. ՏԻԳՐԱՆՅԱՆԻ
ՊԱՇՏՊԱՆ` Է. ԱՂԱԶԱՆՅԱՆԻ
ԹԱՐԳՄԱՆԻՉ Ի. ԱՆԻՍԻՄՈՎԻ
ԱՄԲԱՍՏԱՆՅԱԼ` ԱԴԻ ԻՈԱՆ ԲԼԱԶԱՅԻ

Դռնբաց դատական նիստում քննելով ամբաստանյալի վերաքննիչ բողոքը` քրեական գործով ըստ մեղադրանքի Ադի Իօան Բլազայի` ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 177 հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, Երևանի Կենտրոն և

Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի /այսուհետ՝ Դատարան/ 2011թ. հոկտեմբերի 28-ի դատավճռի դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը և փաստական հանգամանքները.

27.08.2008թ. ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 58207208 քրեական գործը:

Նույն օրը, ժամը 10:51-ից մինչև 10:55-ն ընկած ժամանակահատվածում, օգտագործելով 4462726565089813, 4658591057395001, 4539785385530710, 4547423009302213, 6767094284734269, 675940472241248502, 4921819117976325 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ն Երևանի Կիևյան 19 հասցեում տեղակայված բանկոմատից փորձել է ստանալ 700.000 դրամ, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով կարողացել է հափշտակել ընդամենը 300.000 դրամ կանխիկ գումար, ընդ որում 100.000-ական դրամ հափշտակել է 4462726565089813, 4539785385530710, 4921819117976325 համարների քարտերի կրկնօրինակներով:

Նույն օրը, ժամը 12:01-ից մինչև 12:04-ն ընկած ժամանակահատվածում, 4539793794904203, 4539798468814034 և 4658590054965006 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ն Էջմիածին քաղաքում տեղակայված բանկոմատից հափշտակել է ընդհանուր առմամբ 275.000 դրամ, ընդ որում 150.000 դրամ հափշտակել է 4539793794904203 համարի քարտի կրկնօրինակով, 100.000 դրամ 4539798468814034 համարի քարտի կրկնօրինակով և 25.000 դրամ 4658590054965006 համարի քարտի կրկնօրինակով:

Նույն օրը, ժամը 12:24-ից մինչև 13:00-ն ընկած ժամանակահատվածում, Ադի Իոան Բլազան, օգտագործելով 4547425103666856, 4659020577492006, 4658591039780007, 46585900958688003, 4659210206379001, 4543132389648426, 4921818838653619, 4921817935084637, 4462619844501734, 4659210011140010, 4658590112583007, 6759674712752635, 4539798074224107, 4658590080678003, 4921827642680320, 4539795831386138, 4177270020151476, 675940477291714899, 4539796609591065, 4921817879760515 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, <<Անելիք Բանկ>> ՓԲԸ-ն Էջմիածին քաղաքում տեղակայված բանկոմատից հափշտակել է ընդհանուր առմամբ 480.000 դրամ կանխիկ գումար, ընդ որում 150.000 դրամ հափշտակել է 4658591039780007 համարի քարտի կրկնօրինակով, 100.000-ական դրամ հափշտակել է 4543132389648426, 4462619844501734 համարների քարտերի կրկնօրինակներով, 50.000 դրամ 4539798074224107 համարի քարտի կրկնօրինակով, 40.000-ական դրամ 4539795831386138 և 4539796609591065 համարների քարտերի կրկնօրինակներով, իսկ հանցակից Դանիել Ֆլորին Ֆեռառուն վերահսկել է հարակից տարածքը:

Նույն օրը, ժամը 14:08-ից մինչև 14:14-ն ընկած ժամանակահատվածում, Ադի Իոան Բլազան, օգտագործելով 4658590112583007, 4658590095868003, 4921819794793217, 4659210206379001 և 4658590080678003 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ն Երևանի Արգիշտի 7 հասցեում տեղակայված բանկոմատից փորձել է ստանալ 201.000 դրամ, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով հափշտակել է ընդամենը 60.000 դրամ կանխիկ գումար 20.000 դրամը 4658590112583007 համարի բանկային քարտի կրկնօրինակով, 40.000 դրամն էլ 4658590095868003 համարի բանկային քարտի կրկնօրինակով, իսկ հանցակից Ղանիել Ֆլորին Ֆեռառուն վերահսկել է մոտակա տարածքը:

Նույն օրը, ժամը 23:56-ին, Ադի Իոան Բլազան <<HSBC բանկ-Հայաստան>> ՓԲԸ-ն Երևանում տեղակայված A842 բանկոմատից 4921817090417317 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով հափշտակել է 100.000 դրամ:

27.08.2008թ., ժամը 0:06-ից մինչև 0:08-ն ընկած ժամանակահատվածում, 4659010861715022 և 4543132624196322 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով <<HSBC բանկ-Հայաստան>> ՓԲԸ-ն Երևանում տեղակայված A843 բանկոմատից հափշտակել է ընդհանուր առմամբ 200.000 դրամ, յուրաքանչյուր քարտով 100.000-ական դրամ:

Նույն օրը, ժամը 00:15-ից մինչև 00:45-ն ընկած ժամանակահատվածում, Ադի Իոան Բլազան և Ղանիել Ֆլորին Ֆեռառուն հաջորդաբար օգտագործելով 4659103125013118, 4921817090417317, 4659010861715022, 4462729220452525, 4543132624196322, 4462785124725077, 6759676149981737, 4917540161451132, 4917542163056356, 4917545311217226, 4547421202368908, 4921819401055513, 675940050000007986, 6759686411824739, 4921816758437815, 4539783272066021, 4539789261668164, 4658590904274005, 4539782987449019, 4659011029246025, 4462785388693151, 6759673235921719, 6304992260610611, 4917542469109701, 4659010994513039, 4917316264735238, 4917545388692756, 4658582258650005, 4539782257863030, 4539782331328174 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, փորձել են <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ն Երևանի Գ.Նժդեհի 8 հասցեում տեղակայված բանկոմատից ստանալ 1.581.000 դրամ, սակայն իրենց կամքից անկախ հանգամանքներով հափշտակել են ընդամենը 426.000 << դրամ կանխիկ գումար, որից 66.000 դրամը Ղանիել Ֆլորին Ֆեռառուն հափշտակել է 4543132624196322 համարի քարտի կրկնօրինակով, 10.000-ական դրամ Ադի Իոան Բլազան հափշտակել է 4547421202368908 և 4921816758437815 համարների քարտերի կրկնօրինակներով, 145.000 դրամ 4539782987449019 համարի քարտի կրկնօրինակով, 25.000 դրամ 4917316264735238 համարի քարտի կրկնօրինակով և 170.000 դրամ 4539782257863030 համարի քարտի կրկնօրինակով:

Նույն օրը, ժամը 4:05-ից մինչև 4:07-ն ընկած ժամանակահատվածում, Ադի Իոան Բլազան 4539785385530710, 4921819117976325 և 4659010861715022 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով <<HSBC բանկ-Հայաստան>> ՓԲԸ-ն Երևանում տեղակայված A843 բանկոմատից հափշտակել է ընդհանուր առմամբ 350.000 դրամ, ընդ որում 100.000-ական դրամ հափշտակել է 4539785385530710 և 4921819117976325 համարների բանկային քարտերի կրկնօրինակներով և 150.000 դրամ 4659010861715022 համարի քարտի կրկնօրինակով:

Նույն օրը, ժամը 4:07-ից մինչև 4:13-ն ընկած ժամանակահատվածում, Ադի Իոան Բլազան 4921828820858654, 4659010479966058, 4917541158941309, 4539780131720210, 4921827133063457, 4539794497475210, 4543133694831129 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով <<HSBC բանկ-Հայաստան>> ՓԲԸ-ն Երևանում տեղակայված A843

բանկոմատից հափշտակել է ընդհանուր առմամբ 650.000 դրամ, ընդ որում 100.000-ական դրամ հափշտակել է 4921828820858654, 4659010479966058, 4539780131720210, 4921827133063457, 4539794497475210, 4543133694831129 համարների քարտերի կրկնօրինակներով և 50.000 դրամ 4917541158941309 համարի քարտի կրկնօրինակով:

Նույն օրը, ժամը 4:15-ին, Ղանիել Ֆլորին Ֆեռառուն 4543132624196322 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով <<HSBC բանկ-Հայաստան>> ՓԲԸ-ն Երևանում տեղակայված A842 բանկոմատից հափշտակել է 100.000 դրամ:

Նույն օրը, ժամը 4:18-ից մինչև 4:23-ն ընկած ժամանակահատվածում, Ադի Իոան Բլազան 4539793794904203, 4539798468814034, 4659210011140010 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով <<HSBC բանկ-Հայաստան>> ՓԲԸ-ն Երևանում տեղակայված A842 բանկոմատից հափշտակել է ընդհանուր առմամբ 300.000 դրամ, ընդ որում 100.000-ական դրամ հափշտակել է յուրաքանչյուր քարտով:

Նույն օրը, ժամը 04:31-ից մինչև 04:37-ն ընկած ժամանակահատվածում, Ադի Իոան Բլազան և Ղանիել Ֆլորին Ֆեռառուն հաջորդաբար օգտագործել են 4539793794904203, 4539798074224107, 4539795831386138, 4658590095868003, 4543132389648426, 4539796609591065, 4658591039780007 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները և «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ն Երևանի Գ.Նժդեհի 8 հասցեում տեղակայված բանկոմատից փորձել են ստանալ 810.000 դրամ, սակայն իրեց կամքից անկախ հանգամանքներով Ղանիել Ֆեռառունին հաջողվել է հափշտակել ընդամենը 160.000 դրամ, ընդ որում 60.000 դրամը հափշտակել 4543132389648426 համարի քարտի կրկնօրինակով և 100.000 դրամը 4658591039780007 համարի քարտի կրկնօրինակով:

Իրավապահ մարմինների կողմից հանցակիցներին 27.08.2008թ. վնասագերծելուց հետո, Կոռնել Կոնստանտին Ստենգաչուն 28.08.2008թ., ժամը 02:20-ին, օգտագործելով 675940090771390880, 4539794801554239 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ն Երևանի Կոյունի 6 հասցեում տեղակայված բանկոմատից փորձել է ստանալ 11.000 դրամ կանխիկ գումար, սակայն դա նրան չի հաջողվել՝ իր կամքից անկախ հանգամանքներով:

Մի քանի ժամ անց, ժամը 06:26-ից մինչև 6:29-ն ընկած ժամանակապատվածում, Կոռնել Կոնստանտին Ստենգաչուն, օգտագործելով 4659010861715022, 4462787101837008, 6759676149981737, 5434604173828215, 4539797084663106, 4539798100625012 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ն Գորիս քաղաքում տեղակայված բանկոմատից փորձել է ստանալ 600.000 դրամ, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով կարողացել է հափշտակել ընդամենը 300.000 դրամ կանխիկ գումար, ընդ որում 100.000-ական դրամ հափշտակել է 4462787101837008, 4539797084663106 ու 4539798100625012 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով:

Ղրա հետ մեկտեղ, Կոռնել Կոնստանտին Ստենգաչուն հանցակիցներին ցուցում է տվել բանկոմատներից << դրամի տեսքով գողացված գումարը փոխարկել արտարժույթի, իսկ վերջիններս, տեղյակ լինելով այդ գումարի ծագման աղբյուրի հանցավոր բնույթի վերաբերյալ, ձեռնամուխ են եղել այդ եղանակով հանցավոր ձանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելուն, որի արդյունքում առանձնապես խոշոր չափերով՝ 10.131.720 դրամ գումարը փոխարկվել է 22.540 եվրո արտարժույթի:

Այսպես, Ադի Իոան Բլազան 25.08.2008թ. <<Արդշինհնվեստբանկ>> ՓԲԸ-ն Երևանի <<Տիգրան Մեծ>> մասնաձյուղում 1.317.120 դրամ գումարն իր անձնագրային տվյալներով փոխարկել է 2.940 եվրոյի,

որից 1.000 ԱՄՆ դոլարը նույն օրը <Ինեկոբանկ>> ՓԲԸ-ն <<Արովյան-18>> մասնաձյուղից <<Վեսթերն Յունիոն>> համակարգով փոխանցել է Ռումինիա՝ Դումային: Այնուհետև, տարբերություն կազմող գումարը՝ 2.100 եվրոն, <<Ամերիաբանկ>> ՓԲԸ-ն Երևանի Վ.Սարգսյան 2 հասցում տեղակայված մասնաձյուղում փոխարկել է 898.212 դրամին համարժեք 2.940 ԱՄՆ դոլար գումարի, որը նույն մասնաձյուղից, նույն օրը <<Վեսթերն Յունիոն>> համակարգով փոխանցել է Ռումինիա՝ Նիկոլայե Դումային:

Նույն օրը, Ադի Իոան Բլազան, <<Պրոմեթեյ բանկ>> ՍՊԸ-ն մասնաձյուղից 933 ԱՄՆ դոլար գումարն իր անձնագրային տվյալներով <<Վեսթերն Յունիոն>> համակարգով փոխանցել է Ռումինիա՝ Կորինա Դաբիժային:

Նույն օրը, Մարիուս Լուպուն <<Արդշինինվեստբանկ>> ՓԲԸ-ն Երևանի <<Տիգրան Մեծ>> մասնաձյուղում 2.250.000 դրամ գումարն իր անձնագրային տվյալներով փոխարկել է 5.000 եվրոյի:

Նույն օրը, Դանիել Ֆլորին Ֆեռառուն <<Արդշինինվեստբանկ>> ՓԲԸ-ն Երևանի <<Էրեբունի>> մասնաձյուղում 2.074.600 դրամ գումարն իր անձնագրային տվյալներով փոխարկել է 4.600 եվրոյի: Այնուհետև, 26.08.2008թ., <<Ամերիաբանկ>> ՓԲԸ-ն Երևանի Վ.Սարգսյան 2 հասցում տեղակայված մասնաձյուղում 4.490.000 դրամ գումարը փոխարկել է 10.000 եվրոյի:

Երբ 27.08.2008թ. Մարիուս Լուպուն և Ադի Իոան Բլազան լքել են Հայաստանը, իսկ նույն օրը երեկոյան իրավապահ մարմինները վնասագործել են նրանց հանցակիցներ Օլիվեր Ռադուկու Մարիանին և Դանիել Ֆլորին Ֆեռառունին, այդ ժամանակ, Կոռնել Կոնստանտին Ստենգաչուն, 28.08.2008թ., ժամը 02:20-ին, օգտագործելով 675940090771390880, 4539794801554239 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ն Երևանի Կորյունի 6 հասցեում տեղակայված բանկոմատից փորձել է ստանալ 11.000 դրամ կանխիկ գումար, սակայն դա նրան չի հաջողվել՝ իր կամքից անկախ հանգամանքներով:

Մի քանի ժամ անց, 06:26-ից մինչև 6:29-ն ընկած ժամանակապատվածում, Կոռնել Կոնստանտին Ստենգաչուն, օգտագործելով 4659010861715022, 4462787101837008, 6759676149981737, 5434604173828215, 4539797084663106, 4539798100625012 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ն Գորիս քաղաքում տեղակայված բանկոմատից փորձել է ստանալ 600.000 դրամ, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով կարողացել է հավիշտակել միայն 300.000 դրամ կանխիկ գումար, ընդ որում 100.000-ական դրամ ստացել է 4462787101837008, 4539797084663106 ու 4539798100625012 համարների քարտերով: 2/ Վերաքննիչ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը. Վերաքննիչ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում, ներքոհիշյալ հիմնավորումներով:

Բողոքաբերն իր վերաքննիչ բողոքում նշել է, որ դատավճիռը կայացվել է հաշվի չառնելով գործի նյութերի բոլոր իրեղեն ապացույցները: Դատարանը նշել է, որ ինքն նախկինում եղել է դատապարտված, սակայն բոլոր նյութերում, գործի իրեղեն ապացույցներում չկա ոչ մի ապացույց դրա մասին: Դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ ինքը հանցագործությունը կատարել է ստիպողաբար և ոչ մի կապ չի ունեցել գողացված գումարների հետ:

Հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ ինքը փորձ է կատարել ետ քաշվել և գալուց 2 օր հետո հեռանալ ՀՀ-ից, մասնակի խոստովանել է մեղավորությունը, համագործակցել է հետաքննության ժամանակ, պատասխանել է բոլոր հարցերին:

Ըստ բողոքաբերի իր նկատմամբ պետք է կիրառվի ՀՀ քրեական օրենսգրքի 64 հոդվածը:

Վերոգրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրում է ամբողջովին չեղյալ

հայտարարել 28.10.2011թ. դատավճիռը և նշանակել որքան հնարավոր է մեղմ պատիժ:

3/. Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Վերաքննիչ բողոքում նշված հիմքերի ու հիմնավորումների սահմաններում վերլուծելով գործի նյութերը, լսելով պաշտպանի կողմից իր վերաքննիչ բողոքի հիմնավորումները, ամբաստանյալի բացատրությունը, մեղադրողի պատասխանը, ստուգելով քրեական գործով ձեռք բերված ապացույցները, ապացույցների ձեռքբերման աղբյուրները, քրեական գործով ձեռք բերված յուրաքանչյուր ապացույց ստուգելով թույլատրելիության, վերաբերելիության, ապացույցների ողջ համակցությունը՝ քրեական գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը գտավ, որ ամբաստանյալի վերաքննիչ բողոքը պետք է մերժել, Դատարանի 28.10.2011թ. դատավճիռը՝ քրեական գործով ըստ մեղադրանքի Ադի Իոան Բլազայի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 177 հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, թողնելով օրինական ուժի մեջ՝ հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ քրեական օրենսգրքի 3 հոդվածի համաձայն՝ քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը ապացույցները գնահատում են իրենց ներքին համոզմամբ, նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեական դատավարությունում ոչ մի ապացույց նախապես հաստատված ապացույցի ուժ չունի: Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը չպետք է կանխակալ մոտեցում ցուցաբերեն ապացույցներին, չպետք է դրանց որոշ մասին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տան՝ մինչև դրանց հետազոտումը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 124 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապացուցումը գործի օրինական, հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ բացահայտելու նպատակով ապացույցներ հավաքելը, ստուգելը և գնահատելն է:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126 հոդվածի համաձայն՝ գործով հավաքված ապացույցները ենթակա են բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման՝ ձեռք բերված ապացույցի վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ձեռքբերման աղբյուրներն ստուգելու միջոցով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127 հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107 հոդվածի համաձայն՝ միայն ապացույցների հիման վրա են հաստատվում՝

1/ դեպքը և հանգամանքները/կատարման ժամանակը, տեղը,

եղանակը և այլն/.

2/ կասկածյալի և մեղադրյալի առնչությունը դեպքին.

3/ հանցագործության՝ քրեական օրենքով նախատեսված հատկանիշները.

4/ անձի մեղավորությունը քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելու մեջ.

5/ քրեական օրենքով նախատեսված պատասխանատվությունը մեղմացնող կամ խստացնող հանգամանքները.

6/ այն հանգամանքները, որոնցով դատավարության մասնակիցը կամ քրեական դատավարությանը մասնակցող այլ անձը հիմնավորում է իր պահանջները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

Քրեադատավարական ապացուցման տարրեր հանդիսացող ապացույցների ստուգման, գնահատման, ապացուցման ենթակա հանգամանքների վերաբերյալ՝ ՀՀ քրեադատավարական օրենսդրության վերը նշված հիմնարար իրավադրույթների պահանջների համատեքստում, քննության առնելով քրեական գործով ձեռք բերված ապացույցների համակցությունը, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը գտնում է, որ ամբաստանյալի պատճառաբանություններն անհիմն են, նպատակ են հետապնդում թեթևացնել մեղքը և խուսափել խիստ պատժից, վերջինիս կողմից՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 177 հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հանցանքները հաստատված են, իսկ պատճառաբանությունները հերքված քրեական գործով պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում ձեռք բերված և ընդհանուր իրավասության դատարանում հետազոտված հետևյալ ապացույցներով.

Ամբաստանյալն առաջադրված մեղադրանքներում իրեն մեղավոր է ճանաչել մասնակիորեն և ցուցմունք տվել այն մասին, որ ինքը միմիայն Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի ճնշման ներքո է կատարել իրեն վերագրված բոլոր հանցագործությունները և մեղավոր է միայն «Վեսթերն Յունիոն» համակարգի միջոցով Ռումինիա հարազատներին 2940 ԱՄՆ դոլարի չափով փոխանցված գումարի հափշտակության մեջ, իսկ մնացած գողոնը գողացել ու հանձնել է Կոռնել Կոնստանտին Ստենգաչուին: Ինչ վերաբերում է Կորինա Դաբիժայի տվյալներով «Վեսթերն Յունիոն» համակարգի միջոցով փոխանցված 933 ԱՄՆ դոլարին, ապա այն փոխանցել է Ստենգաչուի հանձնարարությամբ, վերջինիս կնոջը: Այդ գումարն իրեն Երևանում տվել է Կոռնելը, միասին գնացել են փոխանցման կետ, նա տվել է իր անձնագիրը և Կորինա Դաբիժայի տվյալները և ցուցում տվել գումարն այդ անվամբ նրա կնոջը: Հայաստանում գտնվելու ընթացքում, անգամ նույնիսկ ցանկացել է դիմել իրավապահ մարմիններին և հայտնել ամբողջ իրողությունը, սակայն լինելով օտարերկրացի և գտնվելով Ստենգաչուի և վերջինիս ընկերների ճնշման և հսկողության ներքո, չի կարողացել դիմել այդ քայլին: Հայաստանում աշխատելով նրանց համար՝ նկատել է, որ վերջիններս իրենից որոշ հանգամանքներ թաքուն են պահել, խաբել են իրեն: Ստենգաչուն, հանցավոր գործողությունն իրականացնելու նպատակով, իրենից վերցրել է անձնագիրը և ստիպել, որպեսզի ինքը կատարի նրա թելադրած բոլոր վտանգավոր արարքները: Միաժամանակ, իրենից վերցրել է բոլոր գողոնը, որպեսզի ինքը, չունենալով գումար, չկարողանա փախուստի դիմել և հեռանալ Հայաստանից:

2008թ. ամռանը, Մեծ Բրիտանիայի Լոնդոն քաղաքում, մի սենյակ է վարձակալել Միհայ Ֆաուրի տանը: Ղա մի քանի սենյականոց տուն է եղել: Երկու կամ երեք շաբաթ անց, այդ տուն է եկել Կոռնել Ստենգաչուն, ուրիշ սենյակ է վարձակալել: Մի քանի օրից ծանոթացել է և Կոռնել Ստենգաչուն առաջարկել է լինել նրա վարորդն: Ինքն ասել է, որ աշխատելու պատճառով մշտական վարորդ լինել չի կարող, սակայն հանգստյան օրերին կարող է վարել նրա ավտոմեքենան: Երկուշաբթիից մինչև ուրբաթ, ինքն օրինական կերպով աշխատել է որպես սալիկապատող Լոնդոն քաղաքում, իսկ

հանգստյան օրերին ազատ է եղել: Մի քանի օր անց, Ստենգաչուն այդ տուն է բերել Քիշտրուլյա անունով անծից վերցված պլաստմասե մի սարք՝ էլեկտրոնային պարունակությամբ: Միհայ Ֆաուրի հետ կանչել և ցույց են տվել այդ սարքն, իրեն հարցրել են, թե արդյոք գիտի, թե դա ինչ է: Ինքը բացասական պատասխան է տվել և նրանք ասել են, որ այդ պլաստմասե սարքը բավականին թանկ արժե և օգտագործվում է փող աշխատելու նպատակով: Մի շաբաթ օր, Կոռնելն իրեն տվել է մի հասցե և խնդրել այնտեղ տանել, ինքը վերջինիս <<Ֆուլկսվագեն պասսատ>> մակնիշի ավտոմեքենայով Ստենգաչուին և Միհայ Ֆաուրին տարել է պահանջված վայրը: Վերջիններս վերցրել են այդ պլաստմասե սարքերը, գնացել և ամրացրել են մի բանկոմատի վրա, հետ գալուց ասել են, որ դրանց հետևից պետք է վերադառնան Երեկոյան: Այդ ժամանակահատվածում շրջել են քաղաքով և ինքը նրանցից հարցրել է, թե ինչպես են գումար հանելու այդ սարքն ամրացնելուց հետո, քանի որ դրա մասին ոչինչ չի իմացել: Նրանք ասել են, որ այդքան հարցեր չտա և մեքենան վարի: Վերադառնալուց նրանք հանել են այդ սարքերը բանկոմատից և միասին գնացել են տուն: Դրանից հետո, նրանք երկուսով գնացել են այդ սարքերի տիրոջ հետ հանդիպման, ավելի ուշ ինքն իմացել է, որ վերջինիս անունը Քիշտրուլյա է: Երբ վերադարձել են տուն առանց այն սարքերի, նրանց խոսակցությունից հասկացել է, որ դրանք չեն աշխատել և պետք է կրկին փորձել: Մի քանի օր հետո, նույն տուն տեղափոխվել է ապրելու Կոռնել Ստենգաչուի եղբայրը Բողոն: Մեկ կամ երկու շաբաթ անց, Կոռնել Ստենգաչուն Միհայ Ֆաուրի հետ նորից բերել են այդ սարքերը և ցուցում են տվել ավտոմեքենայով նրանց նշած հասցե տանել: Երբ տեղ են հասել, նրանք կրկին այդ սարքերն ամրացրել են բանկոմատին: Վերադարձել են տուն, հետո երկուսով նորից գնացել են արդյունքները տեսնելու, իսկ վերադառնալուց ասել են, որ ինչ-որ խնդիրների պատճառով այդ սարքը չի աշխատել: Ինքն ասել է, որ դա իր խնդիրը չէ, քանի որ ինքը տարել է նրանց ցանկացած վայրն, իրեն տվել են մի 20-30 ֆունտ ստերլինգ 2-3 շաբաթվա համար: Ըստ նրանց ցանկության, վարել է այդ ավտոմեքենան, բայց միայն աշխատանքից ազատ լինելու ժամանակ: Մի կիրակի Կոռնելի եղբորը՝ Բողոյին, ավտոմեքենայով տարել է քաղաք, որտեղ ինքը 100-120 եվրոյով <<Դուլչե Պաբանա>> ֆիրմայի արտադրության ժամացույց է գնել և տուն են վերադարձել մի 2-3 ժամից: Տանը Ստենգաչուն եկել է իր սենյակ և ցանկացել է տեսնել ժամացույցը, պահանջել է այն տալ իրեն: Ինքը հրաժարվել է, այդ ժամանակ Կոռնելն իրեն մի քանի անգամ հարվածել է և խլել է ժամացույցը: Միհայ Ֆաուրն եկել է իր սենյակ ու ասել է Ստենգաչուին, որ իրեն հանգիստ թողնի ու չծեծի, որ ինքը հանկարծ ոստիկանություն չկանչի, քանի որ տանը բազմաթիվ ապօրինի առարկաներ են եղել, ինչի մասին ինքը ոչինչ չի իմացել: Այդ ժամանակ Ստենգաչուն և Ֆաուրը սկսել են վիճաբանել, զորժը համարյա հասել է ծեծկռտուքի, ինքը հասկացել է, որ նրանք ցանկացել են կիսել ինչ-որ քարտեր կամ դրանց տեղեկություններն: Այդ ժամանակ է առաջին անգամ էլ սել, որ զբաղվել են բանկային քարտերով: Ինքը չի տեսել, բայց իմացել է, որ նրանք կիսել են այդ քարտերն ու դրանց տեղեկությունները և Միհայ Ֆաուրը տնից հեռացել է:

Միհայ Ֆաուրի գնալուց անմիջապես հետո, Ստենգաչուն եկել է իր մոտ և ասել է, որ դա այլևս չի կրկնվի, որ ամեն ինչ նորմալ է լինելու, պետք չէ ոստիկանություն կանչել: Այնուհետև ասել է, որ մեքենայով իրեն տանի Լոնդոնի կենտրոն, երբ տեղ են հասել, Կոռնել Ստենգաչուն հանդիպել է մի մարդու հետ: Որոշ ժամանակ հետո, արդեն Հայաստանում ինքն իմացել է, որ այդ մարդու անունը Մաբիուս Լուպուս է: Ստենգաչուն մոտ մեկ ժամ խոսել է Մաբիուս Լուպուսի հետ, վերջինս նրան հայտնել է, որ այդ քարտերը հնարավոր է օգտագործել Հայաստանում: Այդ տեղեկատվության համար, իր իմանալով, Ստենգաչուն Մաբիուս Լուպուսին տվել է փող կամ քարտեր: Հետո Կոռնելը մոտեցել է իրեն, ցույց է տվել մոտ 200

մետր հեռավորության վրա գտնվող Հայաստանի դեսպանատունը և ասել է, որ եթե նրա հետ գնա Հայաստան, ապա կտեսնի, թե ինչ է կատարվել, որ նա Հայաստանից պետք է փողեր վերցնի: Ինքը ստույգ չի իմացել, թե ումից և ինչպես: Ինքը համաձայնվել է, ասել է, որ կմտածի, Ստենգաչուն ասել է, որ պետք է շտապ պատասխանել, որ դա գեղեցիկ երկիր է: Առանց որևիցե մանրամասնություններ իմանալու, ինքը համաձայնվել է, որից հետո միայն գնացել են դեսպանատուն, ստացել են վիզա, Կոռնելյն ասել է, որ կհոգա ճանապարհածախսը: Հայաստան գալուց մի օր առաջ, ցանկացել է Կոռնելի հետ խոսել, նրա սենյակ մտնելուց թակել է դուռը և այն բացվել է, Ստենգաչուն եղբոր հետ ինչ-որ քարտ գրելու սարքի և համակարգչի միջոցով քարտեր են պատրաստել: Դա տեղ է մի քանի վարկյան, իրեն ասել են, որ դուրս գա սենյակից: Ինքը դուրս է եկել ու պատրաստել է ճամպրուկը: Հայաստան գալուց առաջ, գիշերը, Կոռնելյն բոլոր քարտերն առանց իրեն տեղյակ պահելու տեղադրել է իր ճամպրուկի մեջ: Գնացել են օդանավակայան, ինքը չի իմացել ճամպրուկի մեջ պահված քարտերի մասին: Լոնդոնից մեկնել են Հայաստան, Երևանի օդանավակայանում Կոռնելյն իրեն ասել է, որ ինքնուրույն գնա և ստանա ուղեբեռը և ճամպրուկը վերցնելուց հետո անմիջապես դուրս գա օդանավակայանից: Ինքը հետաքրքրվել է այդ պատճառով, հասկացել է, որ ինչ-որ բան նորմալ չէ: Կոռնելյն ասել է, որ ինքը հետո կտեսնի, թե ինչ է դրվել ճամպրուկի մեջ, որ չվախենա: Երևանի օդանավակայանից վերցրել են տաքսի և Կոռնելյն խնդրել է վարորդին իրենց տանել մի հյուրանոց: Հասել են «Եվրոպա» հյուրանոց, այնտեղ ինքը ճամպրուկը տվել է Կոռնելյն, բացելուց տեսել է գուլպայի մեջ թաքցված բազմաթիվ քարտեր: Ինքը հարցրել է, թե ինչու են դրանք դրվել իր ճամպրուկի մեջ, նա ասել է, որ լռի և այդքան հարցեր չտա, կատարի նրա ցուցումները և ոչ մի խնդիր չի ունենա, որից հետո Ստենգաչուն, վերցնելով մոտ 10 հատ քարտ, առաջարկել է դուրս գալ քաղաք: Հասել են Երևանի կենտրոն, նա ասել է, որ բանկոմատ նկատելուց իրեն քարտեր կտա և ինքը պետք է բանկոմատից գումար հանի: Ինքն ասել է, որ ցանկություն չունի դրանով զբաղվելու, Կոռնելյն սկսել է սպառնալ իրեն և Ռուսիանիայում գտնվող հարազատներին՝ մորը և 7 տարեկան քրոջն, ասել է, որ եթե չգնա գումարներ հանելու, ապա մեծ պրոբլեմներ կունենա: Ինքը վերցրել է քարտերը, մոտեցել է բանկոմատին և կատարել է գործարք: Ստենգաչուն գտնվել է իրենից 10 մետր հեռավորության վրա, երբ վերջացնելուց մոտեցել է նրան, Կոռնելյն ասել է, որ քարտերը և գումարը հանձնի ու գնա նրա հետևից: Վերադարձել են հյուրանոց, այդ ժամանակ Կոռնելյն կրկին սպառնացել է իրեն, այլ քարտեր է վերցրել և սկսել է բացատրել, թե ինչ պետք է անել: Ամեն քարտի վրա գրված է եղել PIN-ծածկագիրը, նա բացատրել է մանրամասնությունները, ասել է, որ քարտը պետք է մտցնել բանկոմատի մեջ, իսկ բանկոմատից փողը ստանալուց հետո այն պետք է ծախել և արանքը դնել օգտագործված քարտը հաշվարկ կատարելու համար: Ինքն այլընտրանք չի ունեցել, շարունակել է գումարներ հանել Կոռնելի համար ու վերջացնելուց ասել է, որ ցանկություն չունի դրանով զբաղվելու և ուզում է վերադառնալ: Նա ասել է, որ հանգիստ լինի, որ ուշադիր է լինելու իր հանդեպ և ոչինչ չի պատահի: Ինքն կրկին հրաժարվել է այդ գործից, Կոռնելյն ասել է, որ եթե ցանկություն ունի Ռուսիանիա վերադառնալու, ապա պետք է դա անի, նորից սպառնացել է մորը և քրոջը, նշելով, որ նրանք Ռուսիանիայում պրոբլեմներ կունենան, իսկ ինքն՝ այստեղ: Կոռնելյն ասել է, որ իր վրա արդեն գումար է ծախսել ու փախչելու դեպքում իրեն յուրաքանչյուր վայրում կգտնի: Ինքն էլ իր ընտանիքի համար վախենալով՝ ստիպված համաձայնվել է՝ իմանալով, որ Կոռնելյն վտանգավոր գնալու է: Ոստիկանություն չի դիմել, քանի որ Կոռնելյն ասել է, որ նրան ավելի շուտ կհավատան, որովհետև ինքն արդեն մի օր գողություն է արել, իսկ նրա ձեռքով ոչինչ չի կատարվել: Հաջորդ օրն ինքը լսել է նրա և Լոնդոնում գտնվող ինչ-որ մարդու միջև հեռախոսագրույցը: Այդ անձնավորությունն եղել է «Ռադուն»

Օլիվեր Ռադուկու Մարիանը, որի հետ ինքը ծանոթ չի եղել և որին Ստենգաչուն կանչել է Հայաստան: Իրենց Հայաստան գալուց երկու օր անց, Օլիվերը նույնպես ժամանել է Հայաստան: Մինչև Օլիվերի ժամանելը, Ստենգաչուն վարձակալել է մի ուրիշ սենյակ <<Էրեբունի>> հյուրանոցում, իսկ Օլիվերը Հայաստան ժամանելուց հետո տեղավորվել է <<Եվրոպա>> հյուրանոցում: Այդ ժամանակ, Ստենգաչուի հետ միասին գնացել են մի ավտոմեքենա վարձակալելու: Վարձակալել են <<ԲՄՎ Z3>> մոդելի ավտոմեքենա, որով շրջել են քաղաքով բանկոմատներ գտնելու նպատակով, որպեսզի ինքը գումարներ հանի Ստենգաչուի համար: Կոռնելը գնչուական լեզվով խոսացել է ինչ-որ մեկի հետ Լոնդոն քաղաքում, իր կարծիքով, Մարիուս Լուպուի հետ և վերցրել է Կատալին անունով մի անձնավորության հեռախոսահամար, որն իրենցից առաջ է ժամանել Հայաստան: Կոռնելը զանգահարել է Կատալինին, պայմանավորվել են հանդիպել, որպեսզի վերջինս տեղեկություններ տրամադրի բանկոմատների տեղակայման մասին: Իր հասկանալով, Կատալինն աշխատել է Մարիուս Լուպուի համար, իրենք հանդիպել են Կատալինի հետ, Կոռնել Ստենգաչուն ասել է վերջինիս, որ իր հետ առաջ անցնելով ցույց տա բանկոմատները, իսկ նա հետևից է գալու: Կոռնելն իրեն տվել է քարտեր և ցուցում է տվել գումարներ հանել մատնացույց արած բանկոմատներից: Երբ ինքը բանկոմատից գումար է հանել, Կոռնելը շատ մոտ է կանգնել, որ հանկարծ չկարողանա փախչել, գործարքը վերջացնելուց մոտեցել ու վերցրել է գումարը և քարտերը: Կոռնելն իրենց համար գնել է հայկական Սիմ-քարտեր և ցուցում է տվել գործարքը վերջացնելուց զանգահարել նրան ու հայտնել գործարքի արդյունքների մասին, որից հետո ինքը հեռախոսով հայտնել է, թե ինքը որ ուղղությամբ գնա գումարը փոխանցելու համար: Երբ վերադարձել են հյուրանոց, սկսել է իրեն ստուգել պարզելու համար, թե գումար գողացել է նրանից, թե ոչ: Նա պահանջել է հագուստը հանել, անգամ պայուսակն է ստուգել: Այդ ժամանակ ինքը հասկացել է, որ ինչ-որ բան լավ չէ: Կոռնելն իր անձնագիրն առաջին իսկ օրն է վերցրել, բայց քանի որ պետավտոտեսուչները մի քանի անգամ կանգնեցրել են իրենց ավտոմեքենան, նա վերադարձրել է իր անձնագիրը: Ինքն ասել է, որ այլևս ցանկություն չունի այդպես աշխատելու և հայտնել է վերադառնալու ցանկության մասին, սակայն Կոռնելն ասել է, որ մինչև բոլոր քարտերը չսպառվեն, մինչև իր առաքելությունը չվերջացնի չի վերադառնա: Նա սպառնացել է, որ իրեն կվնասի, որ մարդ կուղարկի Ռումինիա մորը կամ քրոջը վնասելու, ինքը դրանից շատ է վախեցել: Երբ Օլիվերն եկել է, իրեն ասել է, որ հանգիստ լինի, որ ոչինչ չի պատահի և Կոռնելի ցուցումները կատարելու հարցում նա իրեն կօգնի: Ինքը չի իմացել, թե նրանք ինչ հարաբերությունների մեջ են եղել Ստենգաչուի հետ, տեղյակ է եղել, որ ընկերներ են: Նույն կամ հաջորդ օրն, Երևանից ավտոմեքենայով քարտեզի օգնությամբ ուղևորվել են դեպի Սևան, որտեղ Կոռնելն իրեն տվել է քարտեր և ցուցում է տվել մոտենալ բանկոմատին, գումար հանել ու վերադառնալ փողերով հանդերձ: Գործարքը վերջացնելուց հետո, մոտեցել է նրան, տվել է գումարը, Կոռնելը Օլիվերի հետ նույնպես գնացել են գումար հանելու: Վերադարձել են Երևան, տարբեր բանկոմատների մոտ կանգնելով, Կոռնելը իրեն ստիպել է գումարներ հանել: Երբ վերադարձել են հյուրանոց, նա իրեն ամբողջությամբ ստուգել և հարցրել է, թե իր մոտ գումար ունի, ինքը բացասական է պատասխանել: Իրականում ինքն իր հետ Մեծ Բրիտանիայից մոտ 3000 եվրո գումար է բերել, մտածելով, որ մեկնել է ճամփորդելու, բայց տեսնելով իր մոտ գումար փնտրելու Կոռնելի փորձերն, ինքը հաջորդ օրը մենակ գնացել է մոտակա <<Վեսթերն Յունիոն>> համակարգի կետ, զանգահարել է մորն և իր անձնական գումարից 1000 ԱՄՆ դոլարը փոխանցել է վերջինիս՝ Ռումինիա: Սկզբից ցանկացել է ամբողջ գումարն ուղարկել, սակայն հետո որոշել է մի մասը պահել, ցանկանալով մի կերպ ավիատոմս գնել ու մեկնել Հայաստանից, որից հետո ճանապարհին մտել է մի

ավիագործակալություն, մոտ 200 եվրոյով գնել է Երևան-Բուխարեստ չվերթի ավիատոմս Ռումինիա փախչելու համար: Տոմսը գնելուց հետո, Ռումինիա է ուղարկել նաև իրեն պատկանող մնացած գումարը, քանի որ Կոռնել Ստենգաչուն իրեն անընդհատ ստուգել է և ինքը վախեցել է, որ նա այն կգտնի և կվերցնի: Ավիատոմսը գնելու հաջորդ օրը, Կոռնել Ստենգաչուն ստուգել է իր հագուստն ու ճամպրուկը և դրա մեջ գտել է ավիատոմսը: Այդ ժամանակ Օլիվերն իրենց մոտ է եղել, Կոռնելը գտել և պատռել է ավիատոմսը, հետո ցանկացել է իրեն ծեծել, սակայն Օլիվերը բաժանել է իրենց և համոզել իրեն չգնալ Հայաստանից: Ինքն էլ խոստացել է մնալ, Կոռնելն իրենից նորից վերցրել է անձնագիրը և ասել է, որ այն երբեք չի վերադարձնի, քանի որ ինքը փորձել է փախչել: Տեսնելով, որ այլևս ոչինչ անել չի կարող, ստիպված շարունակել է աշխատել Կոռնելի համար: Կոռնելի սպառնալիքները կրկնվել են ամեն օր:

Դրանից հետո, իրենք <<Էրեբունի>> հյուրանոցից տեղափոխվել են <<Կոնգրես>> հյուրանոց: Օգոստոսի 25-ին Հայաստան է ժամանել Դանիել Ֆեռառուն և իր ենթադրելով, ճամպրուկի մեջ բերել է քարտերի խմբաքանակ նրա ու Օլիվերի համար: Իր կարծիքով, Դանիելին Հայաստան է հրավիրել Օլիվերը, քանի որ նա բնակվել է վերջինիս հյուրանոցային համարում, սակայն որևիցե պայմանավորվածություն հեռախոսով այդ մասին չի լսել: Գրեթե միաժամանակ Հայաստան է ժամանել նաև Մարիուս Լուպուն: Վերջինիս գալուց առաջ, Օլիվերը և Ստենգաչուն հանդիպել են Կատալինի հետ և նրանից վերցրել են բոլոր քարտերը, քանի որ Հայաստան էր ժամանելու Մարիուս Լուպուն: Ինքը այդ հանդիպմանը չի մասնակցել: Իր իմանալով, Կատալինը Մարիուս Լուպուին ամբողջ գողոնը չէր ուղարկել և վախենում էր հանդիպել Կոռնելի ու Օլիվերի հետ, սակայն հեռախոսագրույցի ընթացքում Ստենգաչուն Կատալինին վստահեցրել է, որ Մարիուս Լուպույի հետ կապված նրան ոչինչ չի անի, քանի որ վերջինիս հետ նույնպես պրոբլեմներ ունի: Դրանից հետո, Կոռնելը և Օլիվերը հանդիպել են Կատալինի հետ և քարտերը վերցրել, որից հետո վերջինս փախչել է Հայաստանից՝ վախենալով, որ կարող է բռնվել Մարիուս Լուպուի կողմից: Մարիուսի քարտերը սկզբից տարել են Օլիվերի մոտ <<Եվրոպա>> հյուրանոց, որտեղ նա բնակվել է Դանիել Ֆլորին Ֆեռառուի հետ:

Մարիուս Լուպուն ժամանել է <<Կոնգրես>> հյուրանոց: Ինքը բնակվել է Կոռնել Ստենգաչուի հետ նույն սենյակում, իսկ Մարիուսն տեղավորվել է առանձին սենյակում: Նույն օրը Կոռնելը և Օլիվերը <<Եվրոպա>> հյուրանոցից քարտերը, դրանք դրված են եղել սև գուլպայի մեջ, բերել ու հանձնել են Մարիուսին, որոնք մյուս քարտերի հետ դրել են չիրկիզվող պահարանի մեջ, բայց առանձին: Այդ ընթացքում մի օր, ինքն ու Կոռնել Ստենգաչուն գնացել են քաղաք, մի տարադրամի փոխանակման կետի առջև նա կանգնեցրել է ավտոմեքենան, իրեն տվել է ՀՀ դրամ և ասել է, որ մտնի ներս ու դրամը փոխանակի եվրոյով, նշելով, որ սպասելու է դրսում: Ինքը վախեցել է, սակայն չկարողանալով ոչինչ անել, մտել և դրամով գնել է մի քանի հագար եվրո, ստույգ գումարը չի հիշում, նույն կետում մի քանի անգամ տարադրամ է փոխանակել: Գումարը փոխելուց հետո, Կոռնելն իրեն տարել է <<Վեսթերն Յունիոն>> համակարգի մի կետի մոտ, դրա դիմաց տվել է 1000 ԱՄՆ դոլար և ցուցում է տվել այդ գումարն ուղարկել նրա կնոջը, տվել է ստացողի տվյալները Կորինա Դաբիժա: Ինքը հարցրել է, թե ինչպես դա անի, Ստենգաչուն ասել է, որ հարցեր չտա և կատարի պահանջը: Ստենգաչուի քարտերի օգտագործման արդյունքում, <<Կոնգրես>> հյուրանոցի իրենց համարի չիրկիզվող պահարանում արդեն բավականին գումար է հավաքվել, բայց Կոռնելն ասել է, որ իր աշխատանքը դեռ չի վերջացել, պետք է Մարիուս Լուպուին պատկանող քարտերով էլ գողություն անել: Իր և Մարիուս Լուպուի միջև որևիցե պայմանավորվածություն չի եղել, վերջինիս անձամբ չի ձանաչել, այդ ժամանակ էլ առաջին անգամ հանդիպել նրա հետ: Նա

Կոռնել Ստենգաչուի ընկերն է եղել, երկուսով են գրուցել քարտերով փող գողանալու մասին: Թե ինչ պայմանավորվածություն են նրանք ունեցել, ինքը չի իմացել, բայց <<Կոնգրես>> հյուրանոցի սենյակում իրեն մոտեցել է Կոռնել Ստենգաչուն և պահանջել է, որ Մարիուս Լուպուի քարտերով գումար հափշտակի: Ինքն սկզբից հրաժարվել է, հայտնել է տուն վերադառնալու իր ցանկության մասին, այդ ժամանակ Կոռնելը հարձակվել ու սկսել է ոտքերով և ձեռքերով իրեն ծեծել, ասելով, որ հրաժարվելու դեպքում պորբլեմներ է ունենալու Ռուսիանայում, սպառնացել է իր մորը և քրոջը: Վախենալով նրանից, ինքը ստիպված համաձայնվել է: Երբ իրենք երկուսով են եղել իրենց հյուրանոցային սենյակում, Կոռնելն ցուցում է տվել Մարիուսի քարտերով հափշտակված գումարների խոշոր մասը աննկատ թաքցնել և դնել նրա քարտերով հափշտակված գումարների հետ: Դրա համար իրեն փոխանցել է մի փոքր պայուսակ և ցուցում է տվել նրա և Մարիուսի քարտերը պահել տարբեր բաժիններում: Բացի դրանից, Կոռնելն ունեցել է քարտեր, որոնց միջոցով արդեն գումար գողանալ հնարավոր չի եղել: Ստենգաչուն ցուցում է տվել դրանք կրկին փորձարկել և փող ստանալու դեպքում դնել նրա բաժնի մեջ, իսկ անհաջող փորձի դեպքում դնել Մարիուսի քարտերի հետ: Վերջինիս հարցին, թե ինչու նրա քարտերով գումարներ չի հաջողվել ելքագրել, Կոռնելը ցուցում է տվել պատասխանել, որ Կատալինն արդեն ամբողջ գումարը հանել է: Ինքն ասել է, որ չի կարող դա անել, բայց Կոռնելը պատասխանել է, որ հրաժարվելու դեպքում ավելի շատ ծեծ է ստանալու, նա կարող է Մարիուսին ասել, որ ինքը խաբել է վերջինիս: Երբ ինքը հետաքրքրվել է այդ վարքագծի պատճառներով, Կոռնելն ասել է, որ դեմքի սպին Մարիուսն է թողել ավելի փոքր գումարի համար և առաջարկել է պատկերացնել, թե վերջինս ինչ կարող է անել, եթե իմանա, որ ինքը նրան խաբել է: Նա կատարել է այդ ցուցումները: Մարիուս Լուպուն տեսնելով, որ նրա քարտերով գումար չի հաջողվել ելքագրել, իրեն հարցրել է, թե ինչու դրանք չեն գործել: Ինքը պատասխանել է, որ չգիտի: Ի վերջո նա որոշել է Հայաստանից գնալ, իսկ Կոռնել Ստենգաչուն որոշ գումար է վճարել այդ քարտերի դիմաց, դրա մասին նրանք պայմանավորվել են գնչուական լեզվով, իր ենթադրելով Կոռնելը Մարիուսին տվել է 10-15 հազար եվրո: Երբ վերադարձել են <<Կոնգրես>> հյուրանոց, Մարիուս Լուպուն ասել է, որ իրեն գումար վճարել չի կարող, որովհետև քարտերով փող ստանալ չի հաջողվել: Քանի որ Մարիուսի քարտերը <<լավը>> չեն եղել, իրեն ասել են, որ Կատալինին պետք է բռնել: Ինքն ասել է, որ վերջինիս հետախույզ չի պատասխանում, երևի գնացել է: Այդ ժամանակ Կոռնելը իրեն ծեծել է և ասել է, որ եթե Կատալինին չբերի <<Կոնգրես>> հյուրանոց, ապա նորից է իրեն ծեծելու:

Երեկոյան մի քանի ժամից հյուրանոց են եկել մարմնավաճառներ, որոնց վճարել են Մարիուսը և Կոռնելը, այդ մարմնավաճառներից մեկին ուղարկել են իր սենյակ որպես վարձատրություն: Մարիուս Լուպուն որոշել է գնալ Հայաստանից, բոլոր քարտերը թողել է Կոռնել Ստենգաչուի մոտ և վերջինս դրանք դրել է հյուրանոցային համարում գտնվող չիրկիզվող պահարանի մեջ: Դրանից հետո Մարիուս Լուպուն մեկնել է Հայաստանից, ինքը նույնպես ունեցել է ավիատոմոս Երևան-Լոնդոն հետադարձ չվերթների համար, սակայն Կոռնելն իրեն թույլ չի տվել մեկնել, չնայած իր բազմաթիվ խնդրանքների: Կոռնելը վերցրել է իր անձնագիրն, ասել է, որ իրեն չի թողնի գնալ, որովհետև ինքը գործը դեռ չի ավարտել, որից հետո գնացել է իրենց թռիչքի օրերը հետաձգելու: Այլընտրանք չունենալով՝ ինքը ևս 2-3 օր նրա հետ գնացել է բանկոմատներից գումարներ գողանալու, վերջին օրերին Կոռնելը անընդհատ գիշեր-ցերեկ անհանգստացրել է իրեն, անգամ առավոտյան ժամը 4-ին արթնացրել է և ուղարկել է գողություն կատարելու: Վերջապես օգոստոսի 27-ին, Կոռնելն իրեն թույլատրել է մեկնել Հայաստանից՝ ասելով, որ մնացած քարտերով անձամբ կգբաղվի: Գնալուց առաջ, իրեն տվել է 2.000 եվրո և ասել է այդ գումարը փոխանցել եղբորը

Բողոյին, ասելով, որ եթե փորձի փախչել այդ փողերի հետ կամ ծախսել դրանք, ապա բազմաթիվ պրոբլեմներ կունենա, որ ոչ մի տեղ չի կարող փախչել նրանից: Դրանից հետո, ինքը վերադարձել է Մեծ Բրիտանիա, 2.000 եվրոն տվել է Բողոյին, մի օր անց վերջինս մտել է իր սենյակ ու ասել է, որ Քիշտրույան ցանկություն է հայտնել իրեն հանդիպելու: Քիշտրույան զրույցի ժամանակ առաջարկել է վերադառնալ Հայաստան և Կալու անունով նրա մարդկանցից մեկի հսկողության ներքո աշխատել անմիջապես նրա համար: Ինքը համաձայնվել է, Քիշտրույան իր համար գնել է ավիատոմս դեպի Երևան: Երբ Քիշտրույան գնացել է, ինքը գնացել է այդ ավիագործակալություն և պահանջել է վերադարձնել ավիատոմսի գումարը, քանի որ իր գրպանում ընդհանրապես փող չի ունեցել: Վերադարձել է տուն, վերցրել է ձամպրուկները, տեղափոխվել է բնակվելու այլ բնակարան և այդ օրվանից այդ խմբից որևէ մեկի հետ չի հանդիպել:

Ղատապարտյալ Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի ցուցմունքով այն մասին, որ Ադի Իոան Բլազան սեփական շահերից ելնելով ցուցմունքներում իրողությունը մի փոքր չափազանցացրել է: Ինքը Հայաստանում երբևիցե չի ծեծել Ադի Իոան Բլազային, չի ստիպել գողությամբ զբաղվել, քանի որ մարդուն կարելի է 10 անգամ ստիպել փող գողանալ, բայց ոչ 340 անգամ: Եթե ինքը նրան անընդհատ ծեծեր, ապա Բլազան կմեռներ, կամ դրան ականատեսներ կլինեին, դա կլսեին հյուրանոցում: Բլազան Հայաստանում առաջին անգամը չէ, որ իր հետ մասնակցել է գողության: Իրենք միասին գողություններ են կատարել նաև Իտալիայում, Վենետիկում և Պադուայայում 2008թ. ապրիլ ամսին: Միակ բանը, ինչ Բլազան Երևանում <<ստիպված>> է արել, դա ամեն օր թեթևաբարո կանանց հետ հյուրանոցում ժամանակ անցկացնելն է եղել: Նա իր հետ միասին հափշտակել է բանկային քարտերի տվյալները Լոնդոնում, միասին տիրանալով դրանց, որոշել են գալ Հայաստան, քանի որ Մարիուս Լուպուից ստացել են տեղեկություն, որ Հայաստանում բրիտանական բանկերի քարտերով հնարավոր է բանկոմատներից գումար հափշտակել: Իհարկե, Բլազան Լոնդոնում վախեցել է իրենից, բայց Հայաստանի տարածքում ինքը նրան ոչ մի անգամ չի հարվածել: Մի անգամ նման զրույց եղել է, կասկածանք ունենալով, ինքը որոշել է ստուգել Բլազայի ձամպրուկը և դրա մեջ հայտնաբերել է 300.000 դրամ: Կանչել է, շատ հանգիստ զրուցել են, ինքը հիմար չէ, որ Հայաստանի հյուրանոցում ինչ-որ մեկին ծեծեր, դա կարող էր անել Լոնդոնում կամ Ռումինիայում: Իր սխալն այն է եղել, որ Բլազայի խաբեությունը բացահայտելուց հետո վերջինիս կատարած ծառայությունների համար հասանելիք գումարը չի տվել և չեն բաժանվել: Իր կարծիքով, խաբեության բացահայտման ժամանակ Բլազան վախեցել է իրենից, քանի որ ասել է, որ ոչ մի փող չի ուզում: Ինքն ասել է, որ պետք չէ ոչինչ միմյանցից թաքցնել, որ եթե այդպես շարունակեն, ապա կբռնվեն: Բլազան ազատ է տեղաշարժվել, ինչ ուզեցել ձեռք է բերել, անգամ կոստյում է գնել, նույնիսկ փող է ուղարկել տուն հարազատներին:

Իհարկե, Բլազան իր մեղքով է այստեղ հայտնվել, դրա պատճառն այն է եղել, որ Բլազան Ֆաուրի լավ ընկերն էր: Ինքը Բլազայի հետ ծանոթ չի եղել, քանի որ Մարոկկոյից նոր էր եկել Լոնդոն:

Հանդիպելով Բլազային՝ ինքը Ֆաուրից հարցրել է, թե ով է այդ երեխան, վերջինս Բլազային ներկայացրել է որպես կեղծ բանկային քարտերով գողություններ կատարող անձնավորություն, առաջարկել է նրան ներգրավել գողության կատարման մեջ և մի փոքր գումար տալ: Իր սեփական փորձից ելնելով կարող է ասել, որ Լոնդոնում ազգությամբ ռումինացի գրեթե բոլոր երիտասարդները դրանով են զբաղվել կամ բանկային քարտերի տեղեկություններն են գողացել, կամ բանկոմատներից գողությամբ են զբաղվել: Դրանով Լոնդոնում կարող է նույնիսկ 3 տարեկան երեխան զբաղվել, բանկոմատին փակցնելով համապատասխան սարք: Ինքը նման սարքեր չի ունեցել, Ֆաուրի միջոցով մի տղայից ձեռք է բերել այդ սարքերը, Բլազայի հետ ծանոթանալուց հետո սկսել են միասին գողությամբ

զբաղվել: Մեկ-երկու շաբաթվա ընթացքում, իրենք բանկային քարտերի տեղեկություններ են հափշտակել, ինքն ու Ֆաուրը փակցրել են այդ սարքը բանկոմատին, իսկ Ադի Իոան Բլազան ժամանակ անց այդ սարքը բերել է և տվել է իրենց: Իհարկե, այն բերելն ավելի վտանգավոր է եղել, դրա համար իրենք Բլազային են ուղարկել, օգտագործել են նրան: Բանկային քարտերի վրա գրառված տվյալները հափշտակելուց հետո, վերադարձել են տուն և դրանց օգտագործմամբ կեղծ քարտեր են պատրաստել: Այդ կրեդիտային քարտերի PIN-ծածկագրերը ձեռք է բերել Միհայ Ֆաուրը, Բլազան այդ գործում ոչ մի լուրջ դերակատարում չի ունեցել, նրան ուղարկել են տարբեր մանր գործերով: Այդ երկու շաբաթվա ընթացքում, Մեծ Բրիտանիայում մոտ 200 բանկային քարտերի տվյալներ է հաջողվել ստանալ: Քանի որ այդ ամենն արել են Լոնդոնում, պատրաստված քարտերով պետք է գումարներ հափշտակեին և դրա համար երկիր են որոնել: Լոնդոնում ինքը հանդիպել է Մարիուս Լուպուին, նրա հետ անցյալում ծանոթ են եղել, վերջինս իր երեսը վնասել էր ծեծկռտուքի ժամանակ: Ինքը հարցրել է, թե որտեղ է հնարավոր կեղծ բանկային քարտերով գումար հափշտակել, Լուպուն ասել է, որ ինչ-որ մեկին ուղարկել է Հայաստան, երբ տեղեկանա արդյունքների մասին և նրա տղաները գնան Հայաստան, ինքը նույնպես կարող է այնտեղ գնալ: Ինքը հարցրել է, թե ինչ է անհրաժեշտ ուղևորության համար, Լուպուն հայտնել է վիզա ստանալու անհրաժեշտության մասին, բացատրել է մանրամասնությունները: Մարիուս Լուպուն ասել է, որ կողմնակի անձանց այդ տեղեկությունները չհայտնի, որպեսզի նրա եղբոր և <<Քիշտրույա>>-ի հետ պրոբլեմներ չլինեն: Իր կարծիքով, վերջիններս հարազատներ են: Սովորաբար, երբ հայտնաբերվել է մի երկիր, որտեղ հնարավոր է եղել բանկոմատներից կեղծ քարտերով գումարներ հափշտակել, այնտեղ առաջնահերթ գողության գնացել են հայտնաբերողները: Բայց քանի որ Մարիուս Լուպուն, ժամանակին վնասելով իր երեսը, պարտք է եղել իրեն, մեղքի զգացումից ելնելով փորձել է լավություն անել: Ինքը խոստացել է այդ տեղեկությունը ոչ մեկին չասել: Որոշելով մեկնել Հայաստան, ինքը գնացել է տուն, Միհայ Ֆաուրին և բոլորին հարցրել է, թե ով է ցանկանում իր հետ գնալ: Ադի Իոան Բլազան իր և Ֆաուրի հետ նույն բնակարանում է ապրել Լոնդոնում: Բնավորությամբ վախկոտ լինելով, Ֆաուրը հրաժարվել է, ասելով, որ Հայաստանը հետխորհրդային երկիր է, նախընտրել է գնալ Իտալիա, իսկ Բլազան համաձայնվել է ուղեկցել իրեն: Ինքն ու Ֆաուրը կիսել են պատրաստված քարտերը, իր կողմից Ֆաուրին և Բլազային տվել է որոշ քանակությամբ քարտեր, քանի որ իր հետ գողություն կատարած անձանց նույնպես պետք է բաժին հասներ: Ադի Իոան Բլազան շատ քիչ քարտեր ուներ, որկից պայմանավորվածություն այն մասին, թե ինչպես կիսել գողոնը, նախապես չի եղել, բնական է, որ դրա գերակշիռ մասը մոտ 80 տոկոսը պետք է իրենը լիներ, քանի որ քարտերը պատկանել են իրեն: Դրանից հետո Բլազայի հետ գնացել են Լոնդոնում Հայաստանի դեսպանատուն, միասին դիմել են վիզա ստանալու համար, մի քանի օրից դեսպանատնից վերցրել են անձնագրերը վիզաներով: Ինքն այժմ չգիտի, թե Բլազան ուզեցել է Հայաստան գալ, թե եկել է այստեղ իրենից վախենալով: Ամեն ինչ հնարավոր է, քանի որ Լոնդոնում մի անգամ ինքն ուժեղ հարվածել է նրան, երբ վերջինս սկզբից համաձայնվել է փոխանակել նրա գնած <<Դուլչե Գաբանա>> ժամացույցն իրեն պատկանող <<Պոլիս>> ժամացույցի հետ, իսկ հետո, մտնելով Միհայ Ֆաուրի սենյակ, վերադարձել և հրաժարվել է փոխանակումից: Ինքը մտածել է, որ դրա նախաձեռնողը Միհայ Ֆաուրն է եղել, պարզաբանել է նրա հետ այդ հարցը և երբ վերջինս հրաժարվել է դրանից, մի անգամ հարվածել է Ադի Իոան Բլազային, որպեսզի իրենց միջև կռիվ չգցի: Հայաստան գալուց, ինքն ուղեկցի կարիք չի ունեցել, իր քարտերը ոչ մեկին չէր վստահի, իսկ Բլազային վստահել է, որովհետև նա երիտասարդ էր և նման չէր խուլիգանի: Հայաստան գալուց կեղծ

բանկային քարտերը թաքցվել են Ադի Իոան Բլազայի ուղեբեռում, նա այդ մասին իմացել է: Քանի որ ինքն է ղեկավարել Բլազայի գործողությունները, բնական է, դա անձամբ չէր անելու, ամբողջ վտանգը հասնելու էր Բլազային, իրենք այդպես են պայմանավորվել Լոնդոնում: Երևանի օդանավակայանում ուղեբեռը ստուգել են և ինքը մտածել է, որ դա վերջն է, սակայն ոչինչ չեն նկատել: Այդպես եկել են Երևան, քանի որ առավոտյան ժամը 6-ին են ժամանել, որոշել են ստուգել, թե բանկոմատներից ինչքան գումար է կարելի հանել: Ադի Իոան Բլազան վերցրել մի 4-5 քարտ, գտել է մի քանի բանկոմատ, որտեղից գումար է հանել և վերադարձել է հյուրանոց, գումարի չափը չի տպավորվել իր հիշողության մեջ: Իր հիշելով, այդ երեկո ինքը Բլազային ասել է, որ փորձի թեթևաբարո աղջիկներ գտնել և բերել հյուրանոց, Ադի Իոան Բլազան եկել է 2-3 աղջիկների հետ, բայց վերջիններիս չեն թողել մտնել հյուրանոց: Իհարկե, ինքը հետևել է Ադի Իոան Բլազային, նա իր հսկողության տակ է եղել: Օրը 2-3 անգամ դուրս են եկել քաղաք գողություն կատարելու, ինքը Բլազային միանգամից մի 15-20 քարտ է տվել, վերջինս մոտեցել է բանկոմատների մոտ, իսկ ինքը նրան սպասել է: Այն քարտերով, որոնց միջոցով առավոտյան հաջողվել է գումար հափշտակել, փորձել են Լոնդոնի ժամով կեսգիշերից հետո նորից գողություն կատարել, քանի որ դրանք օրեկան լիմիտ են ունեցել: Ինքն իրոք պարբերաբար ստուգել է Բլազայի ինքուստը և ուղեբեռը, քանի որ մի անգամ Բլազան սպասվածից քիչ գումար է հանձնել: Ղա իր մեջ կասկած է հարուցել, ստուգելով ուղեբեռը, գուլպաների մեջ պահած 300.000 դրամ է հայտնաբերել: Կորցնելով Բլազայի հանդեպ վստահությունը՝ բարկացել և հարցրել է, թե ինչու է այդպիսի բան արել, որ ինքը մինչ այդ հոգացել է նրա բոլոր կարիքները: Բլազան պատասխանել է, որ ինչ-որ հարսանիքի նվերի համար գումար է պահել: Ինչ վերաբերում է նրան, թե ինքն իբր արգելել է Բլազային մեկնել Հայաստանից և պատռել է Երևան-Քուխարեստ չվերթի վերջինիս ավտատոմսը, ապա նման դեպք չի եղել: Ադի Իոան Բլազան հափշտակված գումարները բերել և տվել է իրեն, իսկ ինքը դրանք պահել է սենյակում: Ղա տևել է մի 4 օր, մինչև Օլիվեր Ռադուկու Մարիանը ժամանել է Հայաստան, ինչը որևիցե կապ չի ունեցել իր կամ Բլազայի հետ: Օլիվերն իր համար չի եկել Հայաստան, ինքը վերջինիս կարիքը չի ունեցել, քանի որ իր հետ է եղել Ադի Իոան Բլազան: Օլիվերն եկել է սեփական քարտերով և սեփական նախաձեռնությամբ, մի անգամ Բլազային է առաջարկել դրանցով գումար հափշտակել և Բլազան դրան չի համաձայնվել: Օլիվեր Ռադուկու Մարիանը սեփական քարտերով է գողություն կատարել, դրանց միջոցով շատ քիչ գումար է հաջողվել հափշտակել, քանի որ գերմանական բանկերի քարտեր են եղել: Օլիվերը կանչել է Հայաստան Ղանիել Ֆլորին Ֆեռառուին, որի հետ ինքը որևիցե առընչություն չի ունեցել, դա Օլիվերի մարդն է եղել: Քանի որ Օլիվերի քարտերով չի հաջողվել մեծ գումար հափշտակել, նա գումարից շատ նեղն է եղել, մի անգամ գումար է ուզել և ինքը 700.000 դրամ է տվել: Մի օր Օլիվերն եկել է իր մոտ «Էրեբունի» հյուրանոց և իր ճամպրուկի մեջ տեսնելով 22 միլիոն դրամ, հարցրել է, թե արդյոք չի վախենում այդ գումարները պահել, առաջարկել է փոխարկել: Իմանալով, նա Մարոկկոյում տարադրամի փոխանակմամբ է զբաղվել, ինքը ասել է, որ վերցնի այդ գումարը և փոխանակի տարադրամով: Այդ օրը նա մի 20.000 եվրո է փոխարկել և բերել իրեն, թե որտեղ, ինքը չի իմացել, նրա հետ չի եղել: Իր կարծիքով, ոչ մի հանցագործություն այդ առումով չեն կատարել, որովհետև Եվրոպայում կարելի է փոխարկել ցանկացած չափի գումար:

Հետո Հայաստան է ժամանել Մարիուս Լուպուն սեփական կեղծ քարտերով, երևի Օլիվերի հետ էր զրուցել և տեղեկացել, որ իրենց հաջողվել է բավականին մեծ գումար հափշտակել, որ Ադին <<Քլոնդո>>-ն բախտավոր տղա է: Հայաստան ժամանելուց հետո, Մարիուս Լուպուն մի քանի անգամ իրեն խնդրել է միջնորդել, որ Ադին նրա համար էլ գումար հափշտակի: Բայց Ադին չի

համաձայնվել, որովհետև զնչուներին չէր սիրում: Բլազան Մարիուս Լուպուին Լոնդոնում չի ձանաչել, մի գուցե մի անգամ տեսել է իր հետև և ինքը պատմել է, թե ինչ հանգամանքներում է Լուպուս իր երեսը վնասել:

Այնուհետև Հայաստան անսպասելի եկել է Դանիել Ֆլորին Ֆեռառուն, որի համար Օլիվերի մայրն է ավիատոմս: Նա սկսել է փող հափշտակել Օլիվերի <<Ռադու>>-ի և Մարիուս Լուպուի համար: Շատ անգամ Օլիվեր Ռադուկու Մարիանը և Դանիել Ֆլորին Ֆեռառուն գողություն կատարելու համար վերցրել են նաև Բլազային, միասին փող հափշտակելուց հետո վերադարձել են, Օլիվերը Ֆեռառուի հետ օգտագործված քարտերը տվել է Մարիուս Լուպուին: Նրանք շատ քիչ քարտեր են ունեցել մի 30-40 հատ, իսկ Ադի Իոան Բլազան հափշտակված փողը տվել է իրեն: Իր հիշելով, մի օր ոստիկանությունը նկատել է Դանիելին և Օլիվերին բանկոմատի մոտ, դա օգոստոսի 25-ին կամ 26-ին է եղել: Նրանք վախեցած վերադարձել են հյուրանոց և ասել, որ նրանց ոստիկանությունն է նկատել: Ինքը հարցրել է, թե այդ դեպքում ինչու են Օլիվերի կողմից շահագործվող մեքենայով եկել հյուրանոց: Մարիուս Լուպուս իր և Բլազայի հետ ոչ մի գործնական կապ չի ունեցել, նա եկել է սեփական քարտերով, նրանից առաջ Հայաստանում գործել են <<Քիշտրույա>>-ի և Մարիուս Լուպուի եղբոր մարդիք: Ինքը նրանց չի ձանաչել, Հայաստանում նրանց պատահական է տեսել, իմացել է, որ Բաքաու քաղաքից են: Անունները չեն տպավորվել իր հիշողության մեջ, երեխաներ են եղել, իսկ ինքն երեխաների հետ աշխատել է չչվիվել: Հավանաբար նրանք վախեցել են, որ ինքը կարող է գումարները խլել, քանի որ հաճախ է այդպես վարվել: Մարիուսն անձամբ է գումարներ հափշտակել բանկոմատներից և անձամբ է գողոնը փոխարկել տարադրամով, հետո քարտերի ինչ-որ մաս տվել է Օլիվերին և Դանիել Ֆեռառուին, քանի որ նրանք գումար գրեթե չեն ունեցել, սոված են եղել, բոլորին ինչ-որ ծառայություններ են մատուցել գումարի դիմաց: Գումարներ գողանալով, Մարիուսը որոշել է օգոստոսի 26-ի առավոտյան գնալ Հայաստանից և մեկնել է ինքնաթիռով: Նույն օրն, ինքը Բլազային ասել է, որ տեղափոխվի այլ հյուրանոց, որովհետև ոստիկանների է նկատել հյուրանոցում և մտածել է, որ Բլազային կարող են ձանաչել, քանի որ բանկոմատներից հիմնականում նա է գումար հափշտակել: Բլազան տեղափոխվել է այլ հյուրանոց իր մոտ մնացած բոլոր քարտերով հանդերձ, դրանց միջոցով արդեն գրեթե չի ստացվել գումարներ ստանալ բանկոմատներից: Նույն օրը կամ դրանից մի օր առաջ Ադի Իոան Բլազան ավիատոմս է գնել, իսկ առավոտյան մեկնել է Հայաստանից, ինքը վերջինիս նորմալ է ձանաչարհել, փաթաթվել են եղբայրների պես: Իր հիշելով, Բլազային մեկնելուց առաջ մի 2 հազար եվրո է տվել, իմանալով, որ վերջինս փող է ուղարկել հարազատներին Ռումինիա, ավիատոմս է գնել: Բլազայի գնալու օրը, ժամը 10-ին, Օլիվեր Ռադուկու Մարիանը մենակ եկել է իր մոտ, ինքը պատրաստվել է նույնպես փոխել հյուրանոցը: Օլիվերն իրեն առաջարկել է միասին սենյակ վարձակալել <<Երևան>> հյուրանոցում, քանի որ այն բարձրակարգ է և այնտեղ սեյֆեր կան: Ինքը համաձայնվել է, քանի որ այնտեղ աշխատում էր մի աղջիկ, որն իրեն դուր է եկել: Օլիվերի հետ կիսովի այդ սենյակն են վերցրել, իր հիշելով սեյֆում դրվել են միայն իր փողերը, մի 10 քարտ և մոտ 1 միլիոն դրամի չափի գումար, որոնք Բլազան բերել է իրեն մեկնելուց առաջ: Այդ օրն Օլիվեր Ռադուկու Մարիանը և Դանիել Ֆլորին Ֆեռառուն մոտ մի 10000 եվրո են փոխարկել: Օլիվերն ինչ-որ բնակարան է վարձել Երևանում, որովհետև ուզեցել է այստեղ ընտանիքը բերել, նրա կնոջ եղբայրը Դանիել Ֆեռառուն մտերիմ ընկերն է եղել: Այդ վարձակալած բնակարանից վերադարձել է իր մոտ հյուրանոց, որտեղ ամբողջ օրը մենակ է գտնվել եղել, հյուրանոցի սրճարանում է ժամանակ անցկացրել, հյուր և սուրճ է խմել: Ժամը 17-ի սահմաններում Ֆեռառուն և Օլիվերն են եկել, ինքը մի աղջկա հետ պետք է հանդիպեր հյուրանոցի մոտ: Ինքը փոխել է հագուստը ժամադրման

համար, վերցրել է մոտ մեկ շաբաթ առաջ Հայաստանում 250.000 դրամով գնած <<Վերտու>> հեռախոսը, մի 200 ֆունտ ստերլինգ և մոտ 100.000 դրամ, որ շատ փող չծախսի: Երբ գնացել է այդ աղջկա հետ հանդիպելու, տեսել է, թե ինչպես են բռնել Օլիվեր Ռադուկու Մարիանին, իսկ Դանիել Ֆլորին Ֆեռառուին հաջողվել է փախչել: Ինքը Դանիելի հեռախոսահամարը չի ունեցել, նա Օլիվերի մարդն է եղել և ինքը նրան մինչ այդ չի ճանաչել: Այդ ժամանակ իրեն զանգահարել է վերոհիշյալ աղջիկն, ինքը տեսել է, որ հյուրանոցի մոտ ԱՄԾ աշխատակիցներ են և այնտեղ գնալ չի կարելի: Չանգահարել է Օլիվերին և հարցրել է, թե ինչու են նրան բռնել, վերջինս ասել է, որ անձնագրի հետ կապված խնդրի պատճառով: Օլիվերը խնդրել է Դանիելի միջոցով անձնագիրը <<Եվրոպա>> հյուրանոցից բերել, բայց ինքը Դանիելի հեռախոսահամարը չի իմացել: Ինքը հարցրել է Դանիելի հեռախոսահամարը, բայց երբ զանգահարել է, վերջինս չի պատասխանել: Իմանալով, որ նա բնակվել է <<Եվրոպա>> հյուրանոցում, գնացել է այնտեղ և վերցրել է Օլիվերի անձնագրի պատճեն, իրեն այն տվել են սպասարահի աշխատակիցները: <<Եվրոպա>> հյուրանոցի աստիճաններով իջնելուց տեսել է Դանիել Ֆեռառուին, որն իջնում էր Օլիվերի հետ և նրա ձամպրուկը ձեռքին: Ինքը հարցրել է, թե ինչու չի պատասխանել զանգին, Դանիելը պատասխանել է, որ որոշել է գնալ: Ինքը հարցրել է, թե որտեղ է Օլիվերի անձնագիրը, Դանիելն ասել է, որ նրա մոտ է: Ինքը վախեցել է անձամբ գնալ և անձնագիրը փոխանցել Օլիվերին, ասել է Դանիելին, որ տանի և Օլիվերին հանձնի անձնագիրն: Այդ ընթացքում մի տաքսի է կանգնեցրել, Դանիելն ասել է, որ անձնագիրը ոչ մի տեղ չի տանի, առաջարկել է գնալ այնտեղից: Ճանապարհին ինքը կանգնեցրել է տաքսին և ասել է, որ մի քանի քարտ պետք է պահի, երբ դուրս է եկել քարտերը պահելու, շրջվելուց տեսել է, որ տաքսին Դանիել Ֆեռառուի հետ գնացել է: Ինքը կրկին զանգահարել է Օլիվերին, ասել է, որ պատճենը բերել չի կարող և իմացել է, որ Դանիելն անձնագրով արդեն եկել է հյուրանոց: Ինքը հարցրել է Օլիվերին, թե ինչ է պատահել, նա խորհուրդ է տվել փախչել, ասելով, որ վիճակը լավ չէ: Հասկանալով վիճակի լրջությունը, որոշել է փախչել Հայաստանից, իր մոտ եղել է միայն անձը հաստատող քարտն, անձնագիրը մնացել է հյուրանոցային համարում: Ինքը չի իմացել, որ այդ քարտով չի կարող մեկնել, դիմել է ծանոթներից մեկին, որն <<Էրեբունի>> հյուրանոցում զբաղվել է անվտանգության ապահովմամբ, խնդրել է մի տաքսի գտնել իր համար երկրից մեկնելու համար: Ծանոթը մի տաքսի է ուղարկել, որով ինքը գնացել է դեպի սահման և հետ է վերադարձել, քանի որ, հասնելով Գորիս, հասկացել է, որ ձեռքին եղած փաստաթղթով չի կարող անցնել սահմանը: Որոշել է հետ վերադառնալ, հասնելով Երևան, տեղավորվել է այն հյուրանոցում, որտեղ Բլազան է մնացել վերջին օրը: Չանգահարել է ռումինական դեսպանատուն, ասել է, որ մեղավոր չէ, իր ընկերները բռնվել են: Դեսպանատնից իրեն ասել են, որ կարող է առավոտյան ժամը 10-ին գալ գրույցի, հաջորդ օրը դրա ընթացքում յուրովի է բացատրել է իրավիճակն, ասել է, որ անմեղ է, խնդրել է իրեն մի անձնագիր տալ Հայաստանից մեկնելու համար: Դեսպանատնից դուրս գալուց, նկատել է դրա դիմաց կանգնած մի ոստիկանական ավտոմեքենա, հասկացել է, որ արդեն սկսել են հետևել դեսպանատանը: Որոշել է դեսպանատնից դուրս չգալ մինչև փաստաբան գտնելը: Մի շաբաթվա ընթացքում իրեն գտել են փաստաբան, դրանից հետո միայն դուրս է եկել դեսպանատնից, դեսպանի անձնական ավտոմեքենայի մեջ կամավոր եկել է ՀՀ ԱՄԾ շենքի կենտրոնական մուտքի մոտ, որտեղ իրեն դիմավորել են, այնուհետև մեղադրանք են առաջադրել և կալանավորել:

Հարցաքնության ժամանակ իր փաստաբանների խորհրդով հրաժարվել է ցուցմունքներ տալուց և միայն վերջերս է հասկացել, որ սխալ է վարվել: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բռնվել է Ադի Իոան Բլազան, հասկացել է, որ գործը փակելու հնարավորություն չկա: Ադի Իոան Բլազայի ցուցմունքների մեծ մասը

համապատասխանել է իրականությանը, բացի այն հատվածից, որ ինքը նրան Հայաստանում ծեծել է և ստիպել է փող գողանալ բանկոմատներից: Վերջինիս իրոք ինքն է բերել Հայաստան և շատ է զղջացել, որ այդ իրավիճակի մեջ է գցել Բլազային:

Ինչ վերաբերում է Բլազայի կողմից Կորինա Ղաթիճային փոխանցված 1000 ԱՄՆ դոլարին, ապա ինքը դրա հետ որևիցե առընչություն չի ունեցել, այդ գումարը Բլազային չի տվել: Իր իմանալով, Բլազան պարտք է եղել Միհայ Ֆաուրին 1000 դոլար և այդ գումարը փոխանցել է վերջինիս կնոջը Կորինա Ղաթիճային: Իր ցուցմունքները դատապարտյալ Կոռնել Կոնստանտին Ստենգաչուն պնդել է նաև Ադի Իոան Բլազայի հետ առերես հարցաքննության ժամանակ:

Ղատապարտյալ Ղանիել Ֆլորին Ֆեռառուի ցուցմունքով այն մասին, որ բնակվելով Մեծ Բրիտանիայի Լոնդոն քաղաքում, աշխատել է շինարարությունում որպես բանվոր, մտերիմ է եղել համերկրացու Ռոմինիայի քաղաքացի Օլիվեր Ռադուկու Մարիանի հետ, ժամանակին աշխատել է վերջինիս հոր հետ: Ծանոթ է եղել նաև մյուս համերկրացու Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի հետ, լսել է, որ վերջինս կեղծ բանկային քարտերով օգտագործմամբ զբաղվել է գողություններով, սակայն մինչև Հայաստան ժամանելը որևիցե գործնական կապ չեն պաշտպանել: 23.08.2008թ. ինքը ժամանել է Հայաստան Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի հրավերով ՀՀ դրամի տեսքով գողոնն արտարժույթի փոխարկելու համար, վերջինս խոստացել է հատուցել ավիատոմսի արժեքն Երևան ժամանելուց հետո: Ավիատոմս գնելու համար գումարն ինքը պարտքով վերցրել է Օլիվեր Ռադուկու Մարիանի մորից, ժամանելով Երևան, <<Եվրոպա>> հյուրանոցում բնակվել է Օլիվերի հետ նույն սենյակում: Վերջինիս և Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի պայմանավորվածության մանրամասնություններով չի հետաքրքրվել, սակայն լսել է, որ Օլիվերը պարտավորվել է ինչ-որ գումար տեղափոխել Լոնդոն:

Ինքը Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի համար գնել է մոտավորապես 20.000 եվրո, այդ գումարի 5 տոկոսը որպես վարձատրություն ստանալու պայմանով: Երևանի <<Կոնգրես>> հյուրանոցում Կոռնել Կոնստանտին Ստենգաչուն իրեն ծանոթացրել է Ադի Իոան Բլազայի հետ, մինչ այդ Լոնդոն քաղաքում չեն հանդիպել և ծանոթացել են միայն Հայաստանում: Վերջինիս հետ գնացել են քաղաքով շրջելու, ինքը վարել է վարձակալված ավտոմեքենան, նախապես չի իմացել Բլազայի դերակատարման մասին, այդ մասին տեղեկացել է ընթացքում: Բլազան աշխատել է Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի համար, եղել է վերջինիս խմբից և կեղծ բանկային քարտերով գումարներ է ստացել

բանկոմատներից և հանձնել է Կոռնելին: Հաջորդ անգամ քաղաքում շրջելուց, Ադի Իոան Բլազան խնդրել է օժանդակել և օգնել գումարները բանկոմատներից ստանալու գործում, ինքը չի մերժել: Բլազան տվել է իրեն <<top up>>, <<Virginia>> և <<Orange>>

կազմակերպությունների թողարկած հեռախոսային քարտերի երկու տրցակ, քարտերի վրա նշված են եղել PIN-ծածկագրերն: Ինքն այդ քարտերով որոշ գումարներ է ստացել բանկոմատներից:

Այնուհետև, վախենալով հետևանքներից, հաջորդ անգամ քաղաքում շրջելուց, ինքը հրաժարվել է անմիջականորեն գողություն կատարելուց, վերադարձրել է քարտերը և գողացված գումարը Բլազային, որը բարկացել է, դրանից հետո ինքը միայն ավտոմեքենան է վարել: Այդպես քաղաք են դուրս եկել շրջելու 3-4 անգամ: Թե ընկերը Օլիվեր Ռադուկու Մարիանի ինչքանով է մտերիմ եղել Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի, Ադի Իոան Բլազայի և Մարիուս Լուպուի հետ, ինքը չի իմացել, նրանց միջև պայմանավորվածության մանրամասնություններով չի հետաքրքրվել, սակայն լսել է, որ Օլիվերը պարտավորվել է ինչ-որ գումար տեղափոխել Լոնդոն:

Վկա, <<Արդշինինվեստբանկ>> ՓԲԸ-ն <<Տիգրան Մեծ>> մասնաձյուղի գանձապահ Հայկուհի Մարտիրոսյանի ցուցմունքով

այն մասին, որ 20.08.2008թ. բանկում իրեն է մոտեցել արտասահմանցի մի երիտասարդ և անզլերեն լեզվով ցանկություն է հայտնել գնել 4000 ԱՄՆ դոլար: Ինքը խնդրել է ներկայացնել անձնագիրը և համարժեք գումարն: Երիտասարդը ներկայացրել է Դրագոշ Իոնութ Բոտեզատուի տվյալներով Ռումինիայի քաղաքացու անձնագիր: Ինքը կազմել է արտարժույթի վաճառքի անդորրագիր, երիտասարդը ստորագրել է այն և վերցնելով փոխարկված գումարը՝ հեռացել է: 21.08.2008թ. բանկում իրեն է մոտեցել արտասահմանցի մեկ այլ երիտասարդ, խոսելով անզլերեն՝ ցանկություն է հայտնել գնել 2940 եվրո: Կարգի համաձայն, ինքը խնդրել է ներկայացնել անձնագիրը և համարժեք գումարն: Երիտասարդը ներկայացրել է Ադի Իոան Բլագայի տվյալներով Ռումինիայի քաղաքացու անձնագիր: Ինքը կազմել է արտարժույթի վաճառքի անդորրագիր, երիտասարդը ստորագրել է այն և վերցնելով փոխարկված գումարը՝ հեռացել է: 25.08.2008թ. բանկում իրեն է մոտեցել մի արտասահմանցի տղամարդ, անգրերեն լեզվով ցանկություն է հայտնել գնել 5000 եվրո: Ինքը խնդրել է ներկայացնել անձնագիրը և համարժեք գումարը: Տղամարդը ներկայացրել է Մարիուս Լուպուի տվյալներով Ռումինիայի քաղաքացու անձնագիր: Կազմվել է արտարժույթի վաճառքի անդորրագիր, տղամարդը ստորագրել է այն և վերցնելով փոխարկված գումարը՝ հեռացել է: Վկա, <<Ամերիաբանկ>> ՓԲԸ-ն վճարային համակարգերի բաժնի գանձապահ Քրիստինա Մարտիրոսյանի նախաքննական ցուցմունքով այն մասին, որ 2008թ. օգոստոսին, հաճախ <<Ամերիաբանկ>> ՓԲԸ-ն վարչական շենք են եկել երկու արտասահմանցի երիտասարդներ, որոնք ըստ գործարքների ժամանակ ներկայացված անձնագրերի, հանդիսացել են Ռումինիայի քաղաքացիներ Դրագոշ Իոնուտ Բոտեզատուն և Կատալին Իոնուտ Ապետրի Ֆուրդույը: Գրեթե միշտ նրանք միասին են եղել և իր մոտ նույնիսկ տպավորություն է ստեղծվել, որ նրանք եղբայրներ են: Նրանք մոտեցել են իրեն, ցանկություն են հայտնել <<Վեսթերն Յունիոն>> համակարգով գումարներ փոխանցել Մեծ Բրիտանիա և Ռումինիա: Քանի որ այդ համակարգով թույլատրվել է գումար փոխանցել միայն ԱՄՆ դոլարի տեսքով, նրանց մոտ եղած << դրամը փոխարկել են տարադրամի, այնուհետև լրացրել և ստորագրել են համապատասխան փաստաթղթեր, որից հետո գումարը փոխանցվել է: Ըստ լրացված հայտարարագրերի՝ նրանք բնակվել են <<Ամրոց>> հյուրանոցում, ընդ որում Կատալին Իոնուտ Ապետրի Ֆուրդույը օգտվել է 077-34-63-42 հեռախոսահամարից: Բացի այդ, 23.08.2008թ. բանկում իրեն մոտեցել է մի արտասահմանցի երիտասարդ, որը ցանկություն է հայտնել <<Վեսթերն Յունիոն>> համակարգով 2100 եվրո փոխանցել Ռումինիա՝ Նիկոլաե Դումային: Ինքը բացատրել է, որ այդ համակարգով գումարը կարելի է փոխանցել միայն ԱՄՆ դոլարի տեսքով, որից հետո նա տարադրամը փոխարկել է 934500 դրամի, այնուհետև փոխանցում կատարելու համար այդ գումարով գնել է 2940.14 ԱՄՆ դոլոր: Գործարք կատարելու համար ներկայացրել է Ադի Իոան Բլագայի տվյալներով Ռումինիայի քաղաքացու անձնագիր, լրացրել և ստորագրել է համապատասխան փաստաթղթեր, որից հետո գումարը փոխանցվել է: Բացի այդ, նույն օրը բանկում իրեն մոտեցել է մի արտասահմանցի երիտասարդ, անզլերեն լեզվով ցանկություն է հայտնել գնել 10.000 եվրո: Ինքը չի առարկել, քանի որ այդ գումարը չի գերազանցել << Կենտրոնական բանկի կողմից նշված սահմանաչափը 20 միլիոն դրամ: Ինքը խնդրել է ներկայացնել անձնագիրը և գումարն: Երիտասարդը ներկայացրել է Դանիել Ֆլորին Ֆեռառուի տվյալներով Ռումինիայի քաղաքացու անձնագիրը, սովել է 10.000 եվրոյին համարժեք 4.490.000 դրամ գումար: Ինքը կազմել է արտարժույթի վաճառքի անդորրագիր, իսկ երիտասարդը ստորագրել է այն և վերցնելով գնված 10.000 եվրոն՝ հեռացել է: Վկա, <<Ինելկոբանկ>> ՓԲԸ մասնավոր փոխանցումների խմբի մասնագետ Լիանա Մնացականյանի նախաքննական ցուցմունքով

այն մասին, որ 21.08.2008թ. բանկում իրեն մոտեցել է արտասահմանցի մի երիտասարդ և դժվարությամբ խոսելով ռուսերեն լեզվով՝ ցանկություն է հայտնել 1000 ԱՄՆ դոլար փոխանցել Ռումինիա Գաբրիելա Օանա Ռուսուի տվյալներով: Ինքը խնդրել է ներկայացնել անձնագիրը և համարժեք գումարը: Երիտասարդը ներկայացրել է Ադի Իոան Բլազայի տվյալներով Ռումինիայի քաղաքացու անձնագիր, որպես բնակության հասցե նշել է <<Եվրոպա>> հյուրանոցը, իսկ որպես հեռախոսահամար 077-675024 բջջային համարը: Ինքը կազմել է փոխանցման ձևաթուղթը, երիտասարդը ստորագրել է այն և հեռացել է:

Վկա, <<Պրոմեթեյ բանկ>> ՍՊԸ-ն <<Տիգրան Մեծ>> մասնաճյուղի օպերատոր Մարինե Խաչատրյանի նախաքննական ցուցմունքով այն մասին, որ 25.08.2008թ. բանկում իրեն է մոտեցել արտասահմանցի մի երիտասարդ, ցանկություն է հայտնել Կորինա Դաբիջայի տվյալներով 933 ԱՄՆ դոլար փոխանցել Ռումինիա: Ինքը խնդրել է ներկայացնել անձնագիրը և համարժեք գումարը: Երիտասարդը ներկայացրել է Ադի Իոան Բլազայի տվյալներով Ռումինիայի քաղաքացու անձնագիր, որպես բնակության հասցե նշել է <<Եվրոպա>> հյուրանոցը, իսկ որպես հեռախոսահամար 077-67-50-24 բջջային համարը: Ինքը կազմել է փոխանցման ձևաթուղթը, երիտասարդը ստորագրել է այն և հեռացել է:

Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի կողմից <<Երևան>> հյուրանոցում վարձակալված սենյակում հայտնաբերված գողոնով 25.200 եվրոյով և 4.040.000 դրամով:

Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի կողմից <<Երևան>> հյուրանոցում վարձակալված սենյակում հայտնաբերված, Ադի Իոան Բլազայի կողմից օգտագործված թվով 10 հատ 4921828820858654, 4539780131720210, 4543133694831129, 4921827079829333, 4921819117976325, 4917541158941309, 4539794497475210, 4539785385530710, 4659010479966058, 4921827133063457 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով:

<<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ն բանկոմատներից հայտնաբերված, Ադի Իոան Բլազայի կողմից օգտագործված 4539795171235200, 4539795163445072, 4539792456667504, 4462720158230025, 4539798585547020, 4921819624425816, 4658582470799002, 4539785202342604, 4659010372044102, 4462744688362116, 4921818442551829, 4921819282764738 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով:

<<Անելիք բանկ>> ՓԲԸ-ն բանկոմատներից հայտնաբերված, Ադի Իոան Բլազայի կողմից օգտագործված 6759676150760830, 675940382431080393, 6759682125713250, 4539791651421600, 4658582059989008, 4539781060081111, 675940132821223941, 4921816532421119, 4462740000316517, 4921819624863719, 4917315146734252, 4547423202356347, 4547421101271138, 4921817090417317 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով:

<<ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ-ն բանկոմատից հայտնաբերված, Ադի Իոան Բլազայի կողմից օգտագործված, 4539793226028415 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով: 11.12.2008թ. արձանագրությամբ առգրավված և զննված <<Վեսթերն Յունիոն>> համակարգով դրամային փոխանցում կատարելու 25.08.2008թ. դիմումով և անդորրագրով, ըստ որի Ադի Իոան Բլազան <<Պրոմեթեյ բանկ>> ՍՊԸ-ից նշված օրը Կորինա Դաբիջայի անվամբ Ռումինիա է փոխանցել 933 ԱՄՆ դոլար գումար: 11.12.2008թ. արձանագրությամբ առգրավված և զննված արտարժույթի առքի ու վաճառքի AAA 002374 և AAA 002375 համարների 23.08.2008թ. անդորրագրերով, ըստ որոնց՝ Ադի Իոան Բլազան <<Անելիքբանկ>> ՓԲԸ-ում 2100 եվրոն փոխարկել է 934.500 դրամով, իսկ հետո 898.212 դրամը փոխարկել է 2940.14 ԱՄՆ դոլարով: 11.12.2008թ. արձանագրությամբ առգրավված և զննված <<Վեսթերն Յունիոն>> համակարգով դրամային փոխանցում կատարելու

23.08.2008թ. դիմումով և անդորրագրով, ըստ որի Ադի Իոան Բլազան <<Ամերիաբանկ>> ՍՊԸ-ից նշված օրը Նիկոլայե Դումայի անվամբ Ռումինիա է փոխանցել 2940.14 ԱՄՆ դոլար:

11.12.2008թ. արձանագրությամբ առգրավված և գննված արտարժույթի փոխանակման 8082100375337 համարի 21.08.2008թ. անդորրագրով, ըստ որի՝ Ադի Իոան Բլազան <<Արդշինինվեստբանկ>> ՓԲԸ <<Տիգրան Մեծ>> մասնաձյուղում 1.317.120 դրամը փոխարկել է 2.940 եվրոյի:

11.12.2008թ. արձանագրությամբ առգրավված և գննված <<Վեսթերն Յունիոն>> համակարգով դրամային փոխանցում կատարելու 21.08.2008թ. արտարժույթի մուտքի օրդերով և անդորրագրով, ըստ որի՝ Ադի Իոան Բլազան <<Ինեկոբանկ>> ՓԲԸ-ն <<Արվյան-18>> մասնաձյուղից նշված օրն Անա Դումային անվամբ Ռումինիա է փոխանցել 1000 ԱՄՆ դոլար:

Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի կողմից օգտագործվող 353510029036580 գործարանային համարով <<NOKIA 6300>> մոդելի հեռախոսով, որի մեջ մուտքագրված են Ադի Իոան Բլազայի, Օլիվեր Ռադուկու Մարիանի և Դանիել Ֆլորին Ֆեռառուի կողմից օգտագործվող, համապատասխանաբար 077675024, 077672911 և 0040751244454 հեռախոսահամարները <<BlArme>>, <<Rad Arm>> և <<Ferary>> անունների տակ, վերջինիս նախկին կնոջից ստացված SMS-հաղորդագրություններով:

Օլիվեր Ռադուկու Մարիանի և Դանիել Ֆլորին Ֆեռառուին 27.08.2008թ. բերման ենթարկելու արձանագրությամբ:

Օլիվեր Ռադուկու Մարիանի և Դանիել Ֆլորին Ֆեռառուի նկատմամբ Դատարանի կողմից 10.04.2009թ. կայացված մեղադրական դատավճռով:

Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի նկատմամբ Դատարանի կողմից 12.10.2009թ. կայացված մեղադրական դատավճռով:

Ադի Իոան Բլազայի տվյալներով 21.08.2008թ. Երևան-Վիեննա-Բուխարեստ չվերթի ավիատոմսով:

<< ռստիկանության Ինտերպոլի ԱԿԲ-ից 17.10.2008թ. ստացված N33/A4610 CF3/318/5/2008 գրությամբ, Ռումինիայի Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյի 13.10.2008թ. 1796815/08/BCR նամակով այն մասին, որ Մարիուս Լուպուն, Կոռնել Կոնստանտին Ստենգաչուն, Օլիվեր Ռադուկու Մարիանը, Դանիել Ֆլորին Ֆեռառուն, Ադի Իոան Բլազան, Դրագոչ Իոնուտ Բոտեգատուն անցել են այդ երկրի քրեական հաշվառումներով կեղծ բանկային քարտերով բանկոմատներից գողություններ կատարելու համար, ընդ որում Մարիուս Լուպուն, Կոռնել Կոնստանտին Ստենգաչուն և Օլիվեր Ռադուկու Մարիանը հանդիսացել են տարբեր հանցավոր խմբերի պարագլուխներ: Մարիուս Լուպուն 2003թ.-ից ընտանիքի անդամների հետ կազմակերպել է հանցավոր խումբ, որը կատարել է հանցագործություններ Ռումինիայում, Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Գերմանիայում, իսկ Դրագոչ Իոնուտ Բոտեգատուն և Անդրեյ-Պետրոնել Բուրսուկն օգտագործվել են որպես <<զենք>>: Օլիվեր Ռադուկու Մարիանը հայտնի է կեղծ բանկային քարտերով Մեծ Բրիտանիայում, Նիդերլանդներում, Իտալիայում, Իսրայելում, Մարոկկոյում, Ֆրանսիայում գողություններ կատարելու համար, հավաքագրել է տարբեր լմարդկանց Բաքաու քաղաքից, օգտագործել է որպես միջոց բանկոմատներից գումարներ գողանալու համար, այդ եղանակով օգտագործել է նաև Դանիել Ֆլորին Ֆեռառուին, անձամբ զբաղվել է հյուրանոցային համարների ամրագրմամբ և ավտոմեքենաների վարձակալությամբ այն քաղաքներում, որտեղ նախապատրաստվել են հանցագործությունները: Կոռնել Կոնստանտին Ստենգաչուն եղբոր հետ կազմակերպել է մեկ այլ հանցավոր խումբ և հանդիսացել է դրա պարագլուխն, առաջինն է եղել, որ սկսել է հանցավոր գործունեությունը Հայաստանում, իր նախածեղնությամբ են այնտեղ մեկնել Օլիվեր Ռադուկու Մարիանը, Ադի Իոան Բլազան և Դանիել Ֆլորին Ֆեռառուն:

<< ռստիկանության Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյից

ստացված 25.10.2008թ. N 33/A816գ-CF3/318/5/2008 գրությամբ այն մասին, որ համաձայն Մեծ Բրիտանիայի Ինտերպոլի ԱԿԲ-ից ստացված տեղեկատվության, Մարիուս Լուպուն, Օլիվեր Ռադուկու Մարիանը և Ադի Իոան Բլազան, անցնում են ոստիկանության քրեական հաշվառումներով, Մարիուս Լուպուն դատապարտվել է 2 անգամ ոստիկանությանը դիմադրելու և խարդախության համար, Օլիվեր Ռադուկու Մարիանը դատապարտվել է 2 անգամ:

<<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ից N Ե-22-1748 գրությամբ ստացված, նշված բանկի բանկոմատներում կատարված գործարքների փաստաթղթային հավելվածներով:

Նույն ՓԲԸ-ից N Ե-22-1748 գրությամբ ստացված լազերային սկավառակով, որտեղ գետեղված են նշված բանկի բանկոմատների լուսանկարահանումները Օլիվեր Ռադուկու Մարիանի, Դանիել Ֆլորին Ֆեռառուի, Ադի Իոան Բլազայի և Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի կողմից կատարված և ֆիքսված գողության հանցադեպերով:

Նույն ՓԲԸ-ից N Ե-22-1766 գրությամբ ստացված լազերային սկավառակով, որտեղ գետեղված են նշված բանկի բանկոմատների լուսանկարահանումները Օլիվեր Ռադուկու Մարիանի, Դանիել Ֆլորին Ֆեռառուի, Ադի Իոան Բլազայի և Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի կողմից կատարված և ֆիքսված գողության հանցադեպերով:

Նույն ՓԲԸ-ից N Ե-22-1766 գրությամբ ստացված, նշված բանկի բանկոմատներում կատարված գործարքների փաստաթղթային հավելվածներով:

<<Արմենիան քարդ>> ՓԲԸ-ից N 115-08 գրությամբ ստացված <<Նույն գործող բանկերի բանկոմատներում կատարված գործարքների ցանկով:

Նույն ՓԲԸ-ից N 117-08 գրությամբ ստացված լազերային սկավառակով, որտեղ գետեղված են <<Անելիք բանկ>> ՓԲԸ-ն բանկոմատների լուսանկարահանումները Ադի Իոան Բլազայի և Դանիել Ֆլորին Ֆեռառուի կողմից կատարված և ֆիքսված գողության հանցադեպերով:

<<Անելիք բանկ>> ՓԲԸ-ից ստացված, 2008թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին, նշված բանկի բանկոմատներում կատարված գործարքների կապակցությամբ ստացված հետզանձումային պահանջների ցանկով և լազերային սկավառակով, որտեղ գետեղված են այդ գործարքների լուսանկարահանումները Ադի Իոան Բլազայի և Դանիել Ֆլորին Ֆեռառուի պատկերներով:

<<Կոնվերս բանկ>> ՓԲԸ-ից ստացված, 2008թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին նշված բանկի բանկոմատներում կատարված գործարքների կապակցությամբ ստացված հետզանձումային պահանջների ցանկով:

05.12.2008թ. արձանագրությամբ առգրավված 2 լազերային սկավառակներով, որտեղ գետեղված են <<HSBC>> ՓԲԸ-ն ընկերության բանկոմատների տեսագրությունները Ադի Իոան Բլազայի կողմից կատարված և ֆիքսված գողության հանցադեպերով:

05.12.2008թ. արձանագրությամբ առգրավված, 2008թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին <<HSBC>> բանկի բանկոմատներում կատարված գործարքների կապակցությամբ ստացված հետզանձումային պահանջների ցանկով:

2008թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ն բանկոմատներում կատարված գործարքների կապակցությամբ ստացված հետզանձումային պահանջների ցանկով և լազերային սկավառակով, որտեղ գետեղված են այդ

գործարքների լուսանկարահանումները, կատարված նշված բանկի բանկոմատների կողմից:

13.10.2008թ. N 132/08 գրությամբ <<Արմենիան>> քարդ>> ՓԲԸ-ից ստացված լազերային սկավառակով, որտեղ զետեղված են <<Արցախբանկ>> ՓԲԸ-ն ընկերության Տիգրան Մեծ 3/6 հասցեում տեղակայված բանկոմատի լուսանկարահանումները Ադի Իոան Բլազայի կողմից կատարված և ֆիքսված գողության հանցադեպերով:

13.10.2008թ. N 132/08 գրությամբ <<Արմենիան>> քարդ>> ՓԲԸ-ից ստացված այն գործարքների ցանկը, որոնց կապակցությամբ <<Արցախբանկ>> ՓԲԸ-նը հետզանձումային պահանջներ են ներկայացվել արտերկրից, <<Արցախբանկ>> ՓԲԸ-ն Տիգրան Մեծ 3/6 հասցեում տեղակայված բանկոմատում կատարված վերոհիշյալ գործարքների թղթային հավելվածը:

11.09.2008, 11.12.2008, 17.12.2008, 30.03.2009 թվականների զննության արձանագրություններով

Կատալին Իոնուտ Ապետրի Ֆուրդույին լուսանկարով մեղադրյալ Ադի Իոան Բլազային ճանաչման ներկայացնելու մասին 22.02.2011թ. արձանագրությամբ:

Մարիուս Լուպուին լուսանկարով մեղադրյալ Ադի Իոան Բլազային ճանաչման ներկայացնելու մասին 22.02.2011թ. արձանագրությամբ: Իոնուտ Մարիան Ստենգաչուին լուսանկարով մեղադրյալ Ադի Իոան Բլազային ճանաչման ներկայացնելու մասին 22.02.2011թ.

արձանագրությամբ:

Սիհայ Ֆաուրին լուսանկարով մեղադրյալ Ադի Իոան Բլազային ճանաչման ներկայացնելու մասին 22.02.2011թ. արձանագրությամբ: Քննչական փորձարարություն կատարելու 23.02.2011թ.

արձանագրությամբ այն մասին, որ մեղադրյալ Ադի Իոան Բլազան մատնացույց է արել <<Արդշինինվեստբանկ>> ՓԲԸ-ն <<Տիգրան Մեծ>> մասնաձյուղը, որտեղ ՀՀ տեսքով գողոնը Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի հանձնարարությամբ փոխարկել է եվրոյով, ինչպես նաև <<Լևոն Թրավել>> ՍՊԸ-ն գրասենյակը, որտեղ գնել է Երևան-Վիեննա-Բուխարեստ 21.08.2008թ. չվերթի ավիատոմսը:

Մատնադրոշմային և համակարգչատեխնիկական համալիր փորձաքննության թիվ 08-1166 եզրակացությամբ այն մասին, որ <<Երևան>> հյուրանոցում Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի կողմից վարձակալած սենյակում հայտնաբերված 10 հատ պլաստիկ քարտերը, ինչպես նաև <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ն և <<Անելիք Բանկ>> ՓԲԸ-ն բանկոմատներում հայտնաբերված 72 հատ պլաստիկ քարտերը պիտանի են օգտագործման համար որպես բանկային քարտեր, դրանց վրա առկա տպագրական գրառումները մասամբ կամ ամբողջությամբ չեն համապատասխանում մագնիսական շերտի վրա գրառված տեղեկություններին, չեն համապատասխանում սահմանված նմուշներին և կեղված են մագնիսական շերտի վերագրառման եղանակով: <<Երևան>> հյուրանոցում Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի կողմից վարձակալած սենյակում հայտնաբերված 10 հատ պլաստիկ քարտերը հանդիսանում են 4921828820858654, 4539780131720210, 4543133694831129, 4921827079829333, 4921819117976325, 4917541158941309, 4539794497475210, 4539785385530710, 4659010479966058, 4921827133063457 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները: <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ն բանկոմատներում հայտնաբերված 43 հատ պլաստիկ քարտերը հանդիսանում են 4659110018040009, 4539781872620049, 4659220064134000, 4658590570260031, 4659010042649017, 4539795171235200, 4659220064140015, 4539795163445072, 4539792456667504, 4462720158230025, 4539798585547020, 4539785053052443, 4921819624425816, 4539798712295006, 4539780119427135, 4539787073568317, 4539780094272126, 4658580360158008, 4658580079088009, 4659110342684001, 4539782217901029, 4659110306750004,

4658582470799002, 4539785202342604, 4659230065122003, 4659010372044102, 4539796178764085, 4539789040892309, 4539789698637139, 4539789726440100, 4539786140228269, 4921818096628535, 4539781881625104, 4659010309891104, 4539795898757205, 4539789482002235, 4462744688362116, 4917487527255007, 4921818442551829, 4917546309575583, 4917545392918346, 4917542394107853, 4921819282764738 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները: <<Անելիք Բանկ>> ՓԲԸ-ն բանկոմատներում հայտնաբերված 29 հատ պլաստիկ քարտերը հանդիսանում են 4921816400394356, 6759676150760830, 6759683118544785, 6759647262169467, 4974927305836718, 4658580125043016, 4921817252767061, 6759675435674832, 675940341802153858, 675940382431080393, 6759675748121166, 6767104913517124, 4921817883253911, 6759686129207441, 6767096815236623, 6759682125713250, 4539791651421600, 4658580413680008, 4658582059989008, 4539781060081111, 675940132821223941, 4921816532421119, 4462740000316517, 4921819624863719, 4917315146734252, 4547423202356347, 6759692146113612, 4547421101271138, 6759684276494607 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները:

<Համակարգչատեխնիկական փորձաքննության թիվ 08-1472 եզրակացությամբ այն մասին, որ <<Ակբա-Կրեդիտ Ազրիկոլ բանկ>> ՓԲԸ-ն բանկոմատից հայտնաբերված 4539793226028415 համարի պլաստիկ քարտը և <<Անելիք բանկ>> ՓԲԸ-ն բանկոմատից հայտնաբերված 4921817090417317 համարի պլաստիկ քարտը պիտանի են օգտագործման համար որպես բանկային քարտեր, դրանց վրա առկա տպագրական գրառումները մասամբ կամ ամբողջությամբ չեն համապատասխանում մագնիսական շերտի վրա գրառված տեղեկություններին, չեն համապատասխանում սահմանված նմուշներին և կեղծված են մագնիսական շերտի վերագրառման եղանակով:

2008թ. հուլիս-հոկտեմբեր ժամանակահատվածում <<Զվարթնոց>> օդանավակայանով << մուտք գործած և մեկնած Ռումինիայի քաղաքացիների ցանկով, որտեղ նշված է, որ Կոռնել Կոնստանտին Ստենգաչուն և Ադի Իոան Բլազան ժամանել են << նույն 18.08.2008թ. թիվ 965 չվերթով և կես րոպեի տարբերությամբ ժամը 00:50-ին հատել են սահմանային հսկողության գոտին: Օլիվեր Ռադուկու Մարիանը << է ժամանել միայն 20.08.2008թ. և սահմանային հսկողությունն է անցել ժամը 23:06-ին: <<Եվրոպա>> հյուրանոցից ստացված գրությամբ այն մասին, որ Ադի Իոան Բլազան և Կոռնել Կոնստանտին Ստենգաչուն 2008թ. օգոստոսի 17-ից մինչև 18-ն ընկած ժամանակահատվածում, բնակվել են նշված հյուրանոցի թիվ 215 սենյակում, Օլիվեր Ռադուկու Մարիանը 2008թ. օգոստոսի 20-ից մինչև 22-ը բնակվել է նույն հյուրանոցի թիվ 115 սենյակում, իսկ օգոստոսի 22-ից մինչև 28-ը թիվ 314 սենյակում, որտեղ օգոստոսի 24-ից բնակվել է նաև Ռումինիայի քաղաքացի Դանիել Ֆլորին Ֆեռառուն:

<<Էրեբունի>> հյուրանոցից ստացված հաշվառման քարտերով այն մասին, որ Ադի Իոան Բլազան և Կոռնել Կոնստանտին Ստենգաչուն 2008թ. օգոստոսի 18-ից մինչև 20-ն ընկած ժամանակահատվածում բնակվել են նշված հյուրանոցի թիվ 705 սենյակում:

<<Կոնգրես>> հյուրանոցից ստացված 08.09.2008թ. գրությամբ այն մասին, որ Ռումինիայի քաղաքացիներ Մարիուս Լուպուն և Կոռնել Կոնստանտին Ստենգաչուն բնակվել են այնտեղ 2008թ. օգոստոսի 22-ից մինչև 27-ը:

<<Ղ-Տելեկոմ>> ՓԲԸ-ից ստացված Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի կողմից օգտագործվող 077-675035 հեռախոսահամարից, Օլիվեր Ռադուկու Մարիանի կողմից օգտագործվող 077-672911 հեռախոսահամարից, Դանիել Ֆլորին Ֆեռառուի կողմից օգտագործվող 077783691 հեռախոսահամարից, Ադի Իոան Բլազայի կողմից օգտագործվող 077-675024

հեռախոսահամարից, Մարիուս Լուպուի կողմից օգտագործվող 077-737116 հեռախոսահամարից կայացած ելքային ու մուտքային զանգերի վերծանումներով:

Ղատարանը, ՀՀ քրեադատավարական օրենսդրության պահանջների պահպանմամբ վերլուծելով և գնահատելով ամբաստանյալի նախաքննական և ընդհանուր իրավասության դատարանում տրված ցուցմունքները, համադրելով դրանք քրեական գործի դատական քննությամբ ձեռք բերված և հետազոտված ապացույցների հետ, գնահատելով դրանք վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, իրենց համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված ներքին համոզմամբ, իրավացիորեն գտել է, որ ամբաստանյալ Ադի Իոան Բլազայի մեղավորությունը ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 177 հոդվածի 3-րդ մասի 1-ի ու 2-րդ կետերի հատկանիշներով նախատեսված հանցանքներ կատարելու մեջ ապացուցված է, որի համար նա ենթակա է քրեական պատասխանատվության և պատժի, ուստի Ղատարանը ճիշտ է կիրառել քրեական օրենքը, այդ փաստական հանգամանքները համապատասխանում են ամբաստանյալի՝ ՀՀ քրեական օրենսգրքի վերը նշված հոդվածներով նախատեսված հանցանքների հատկանիշներին, որոնք հիմնավորվում են քրեական գործով ձեռք բերված վերոհիշյալ ապացույցներով:

Ըստ ՀՀ ոստիկանության Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյից ստացված 25.10.2008թ. N 33/A816գ-CF3/318/5/2008 գրության, համաձայն որի Մեծ Բրիտանիայի Ինտերպոլի ԱԿԲ-ից ստացված տեղեկատվության, Մարիուս Լուպուն, Օլիվեր Ռադուկու Մարիանը և Ադի Իոան Բլազան, անցնում են ոստիկանության քրեական հաշվառումներով, Մարիուս Լուպուն դատապարտվել է 2 անգամ ոստիկանությանը դիմադրելու և խարդախության համար, Օլիվեր Ռադուկու Մարիանը դատապարտվել է 2 անգամ և Ադի Իոան Բլազան դատապարտվել է 1 անգամ խարդախություն կատարելու համար: Սակայն ամբաստանյալը պնդում է, որ նախկինում դատված չի եղել, նշված տեղեկանքում ամրագրված է, որ ինքը նախկինում դատված չի եղել և Ղատարանի հետևությունը դատվածության վերաբերյալ զուտ թարգմանության սխալի արդյունք է:

ՀՀ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ որպես ամբաստանյալ Ադի Իոան Բլազայի անձը բնութագրող հատկանիշ չպետք է հաշվի առնվի նախկինում դատված լինելու հանգամանքը՝ նկատի ունենալով, որ դրա վերաբերյալ քրեական գործով ձեռք չեն բերվել բավարար ապացույցներ:

Ղատարանը հանգել է այն հետևության, որ ամբաստանյալը իրեն մասնակի մեղավոր ճանաչելով նպատակ է հետապնդում մեղմացնելու իր կողմից կատարած արարքները և նրա ցուցմունքներն այն մասին, որ ինքը Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի ճնշման ներքո է կատարել իրեն վերագրված բոլոր հանցագործությունները և մեղավոր է միայն <<Վեսթերն Յունիոն>> համակարգի միջոցով Ռումինիա հարազատներին 2940 ԱՄՆ դոլարի չափով փոխանցված գումարի հափշտակության մեջ, իսկ մնացած գողոնը գողացել ու հանձնել է Կոռնել Կոնստանտին Ստենգաչուին: Ինչ վերաբերում է Կորինա Դաբիժայի տվյալներով <<Վեսթերն Յունիոն>> համակարգի միջոցով փոխանցված 933 ԱՄՆ դոլարի, ապա այն փոխանցել է Ստենգաչուի հանձնարարությամբ վերջինիս կնոջն: Այդ գումարն իրեն Երևանում տվել է Կոռնելը, միասին գնացել են փոխանցման կետ, նա տվել է իր անձնագիրը և Կորինա Դաբիժայի տվյալները և ցուցում է տվել գումարը այդ անվամբ նրա կնոջը: Հայաստանում գտնվելու ընթացքում անգամ նույնիսկ ցանկացել է դիմել իրավապահ մարմիններին և հայտնել ամբողջ իրողությունը, սակայն լինելով օտարերկրացի և գտնվելով Ստենգաչուի և վերջինիս ընկերների ճնշման և հսկողության ներքո,

չի կարողացել դիմել այդ քայլին: Հայաստանում աշխատելով նրանց համար, նկատել է, որ վերջիններս իրենից որոշ հանգամանքներ թաքուն են պահել, խաբել են իրեն: Ստենդաչուն հանցավոր գործողությունն իրականացնելու նպատակով իրենից վերցրել են անձնագիրը և ստիպել, որպեսզի ինքը կատարի նրա թելադրած բոլոր վտանգավոր արարքները: Միաժամանակ իրենից վերցրել է բոլոր գողոնը, որպեսզի ինքը, չունենալով գումար, չկարողանա փախուստի դիմել և հեռանալ Հայաստանից, արժանահավատ չեն՝ նպատակ են հետապնդում մեղմացնելու իր կողմից կատարած հանցանքները և նրա ցուցմունքները հերքվում են քրեական գործով ձեռք բերված ու դատարանում հետազոտված դատապարտյալներ Կոռնել Կոնստանտին Ստենդաչուի, Դանիել Ֆլորին Ֆեռառուի, վկաներ Քրիստինա Մարտիրոսյանի, Հայկուհի Մարտիրոսյանի, Լիանա Մնացականյանի, Մարինե Խաչատրյանի ցուցմունքներով, ինչպես նաև վերոհիշյալ ապացույցներով:

Հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, հանցավորի անձը բնութագրող տվյալները, այդ թվում պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքները որոշիչ հանգամանքներ են պատժի տեսակը և չափը որոշելու հարցում:

Հանցագործության համար նախատեսված պատիժներից առավել խիստը նշանակվում է, եթե նվազ խիստ տեսակը չի կարող ապահովել պատժի նպատակները:

Պատիժ նշանակելիս հանցավորի նկատմամբ անհատական մոտեցումը անհրաժեշտ է, որպեսզի դատարանը պատժի տեսակն ու չափը որոշելիս համոզվի, որ դրանով կհասնի պատժի վերը նշանակված նպատակներին, որոնք փոխկապակցված ու փոխհամաձայնեցված են, /մեկ նպատակը ենթադրում է մյուսները, և յուրաքանչյուրի ինքնուրույն իրականացումն օժանդակում է մյուսներին/: Այսինքն՝ պատժի նպատակներին հասնելու երաշխիք է հանցագործություն կատարած անձի նկատմամբ արդարացի և արարքի ծանրությանը և հասարակական վտանգավորությանը համապատասխան պատիժ նշանակելը:

Վերոգրյալ հոդվածների բովանդակային վերլուծությունից և սույն քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 177 հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով մեղադրվող ամբաստանյալ Ադի Իոան Բլազայի նկատմամբ պատժի տեսակն ու չափը որոշելիս առաջին ատյանի դատարանը ղեկավարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 61 հոդվածով սահմանված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, բավարար չափով ստուգման ու բազմակողմանի գնահատման է ենթարկել ամբաստանյալի կողմից բերված վերաքննիչ բողոքում մատնանշված բոլոր հանգամանքները, նրա կողմից կատարած հանցանքի հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, անձը բնութագրող տվյալները, այդ թվում պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, մասնավորապես այն, որ ամբաստանյալն նախկինում դատված է եղել, հանցագործության մեջ առանձնապես ակտիվ դերը, նրա պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք չարձանագրելով, հետազոտելով ձեռք բերված ապացույցներն իրենց համակցությամբ՝ իրավացիորեն ամբաստանյալի նկատմամբ նշանակել է արդարացի պատիժ, ինչը բխում է ՀՀ քրեական օրենսգրքի 10 հոդվածով ամրագրված արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքից՝ համապատասխանում է կատարված հանցանքի ծանրությանը, այն կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ ու բավարար է նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար և կարող է ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48 հոդվածով նախատեսված պատժի նպատակները, այն է՝ վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին:

Անդրադառնալով ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64 հոդվածի կիրառման հարցին, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ սույն գործով բացակայում են հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի, առողջության և այլ հանգամանքների հետ կապված այնպիսի բացառիկ հանգամանքներ, որոնք էականորեն կնվազեցնեն Ադի Իօան Բլագայի կողմից կատարած արարքի հանրորեն վտանգավորության աստիճանը, հետևաբար վերջինիս նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64 հոդվածի կիրառմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 177 հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ նշանակելու օբյեկտիվ հիմքեր չկան:

Վերոգրյալ հիմքերի առկայության պայմաններում, Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ ամբաստանյալի վերաքննիչ բողոքում մատնանշված հանգամանքներն իրենց համակցությամբ, որոնք արդեն իսկ հաշվի են առնվել դատարանի կողմից պատիժ նշանակելիս, չեն նվազեցնում ամբաստանյալի կատարած հանցավոր արարքի հանրության համար վտանգավորության աստիճանը և նրա նկատմամբ ազատազրկման ծևով նշանակված պատիժը մեղմացնելու, նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ նշանակելու, առումով դատավճիռը փոփոխելու համար օբյեկտիվ հիմքեր առկա չեն, թեկուզև Դատարանը որպես ամբաստանյալի անձը բնութագրող հանգամանք ոչ ճիշտ դիտել է դատավճիռն, այնուհանդերձ դատավճռով նշանակված պատիժը համաչափ է հանցագործության ծանրությանը և ամբաստանյալի անձին:

Քրեական գործի քննության նախորդ փուլում թույլ չեն տրվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտումներ, որոնք կհանգեցնեին դատական սխալի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 393, 394, հոդվածներով` ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Ամբաստանյալի վերաքննիչ բողոքը մերժել` օրինական ուժի մեջ թողնելով Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2011թ. հոկտեմբերի 28-ի դատավճիռն` ըստ մեղադրանքի Ադի Իօան Բլագայի` ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 177 հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով:

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ Վճռաբեկ դատարանին` հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ` ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ` ստորագրություններ

Իսկականի հետ ճիշտ է`

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ` Կ. ԴԱԶԱՐՅԱՆ

Ամսաթիվ:	24-02-2012
Էջերի քանակը:	1-ին հատոր`349 թերթ, 2-րդ հատոր`301 թերթ, 3-րդ հատոր`234 թերթ, 4-րդ հատոր`298 թերթ, 5-րդ հատոր`313 թերթ, 6-րդ

	հատոր`205 թերթ, 7-րդ հատոր`214 թերթ, 8-րդ հատոր`313 թերթ,
Գործին կից նյութեր:	
Այլ նշումներ:	
Գործն ուղարկվել է:	24-02-2012
Էջերի քանակը:	349, 301, 234, 298, 313, 205, 214, 313, 123, 104, 112 թերթ:
Գործին կից նյութերը:	
Ուր:	Վճռաբեկ
Գրության համարը:	Ե-2560/12
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	01-03-2012
Ղատական Գործ N: ԵԿԴ/0088/01/11	
Ամսաթիվ:	20-02-2012
Բողոք բերող անձինք:	Ամբաստանյալի պաշտպան
Բողոք բերող անձինք	
Անուն	Է
Ազգանուն	Աղաջանյան
Հասցե	ք.Երեվան, Կորյունի 8 շենք, բն. 5
Այլ	ամբաստանյալ՝ Ադի Իոան Բլազա
Հավատարմագրված փաստաբան	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Ղատապարտյալ	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Չափահաս:	Այո
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Պատասխանի բովանդակությունը:	
Գործի առաքման ամսաթիվը:	24-02-2012
Գրության համարը:	Ե-2560
Գործի ստացման ամսաթիվը:	01-03-2012
Քրեական գործի հատորներ /կիստաթղթեր/:	11 հատոր
Ղատապարտյալ	

Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Գործի համարը:	ԵԿԴ/0088/01/11
Գործը ստացվել է:	Քրեական և զինվորական վերաք.
Գործը ստացվել է:	
Գործը ստացվել է:	
Պատասխանատվության ենթարկվածների թիվը:	1
Ամսաթիվ:	01-03-2012
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Վճռաբեկ
Դատավորի անուն:	Դավիթ Զաքարի Ավետիսյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Վճռաբեկ
Դատավորի անուն:	Սամվել Վլադիմիրի Օհանյան
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	28-03-2012
Որոշման բովանդակությունը:	<p>ԵԿԴ/0088/01/11</p> <p>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ</p> <p>ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ</p> <p>28 մարտի 2012 թվական ք.Երևան</p> <p>ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)</p> <p>նախագահությամբ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ մասնակցությամբ դատավորներ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Հ.ՂՈՒԿԱՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ</p> <p>քննարկելով Ադի Իօան Բլազայի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հունվարի 25-ի որոշման դեմ ամբաստանյալ Ադի Իօան Բլազայի պաշտպան Է.Աղաջանյանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը,</p> <p>Պ Ա Ր Զ Ե Ց</p> <p>Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2011</p>

թվականի հոկտեմբերի 28-ի դատավճռով Ադի Իոան Բլազան մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով: ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով Ադի Իոան Բլազան դատապարտվել է ազատազրկման 6 տարի ժամկետով՝ ամբողջ գույքի բռնագրավմամբ, բայց ոչ ավելի, քան հանցագործությամբ պատճառված վնասի և հանցավոր ճանապարհով ձեռք բերված օգուտի չափը, ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով՝ ազատազրկման 5 տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառմամբ՝ Ադի Իոան Բլազայի նկատմամբ վերջնական պատիժ նշանակվել ազատազրկում՝ 9 տարի ժամկետով՝ ամբողջ գույքի բռնագրավմամբ, բայց ոչ ավելի, քան հանցագործությամբ պատճառված վնասի և հանցավոր ճանապարհով ձեռք բերված օգուտի չափը:

Վերոհիշյալ դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել ամբաստանյալ Ադի Իոան Բլազան:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հունվարի 25-ի որոշմամբ ամբաստանյալի վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ բողոքարկված դատական ակտը՝ թողնվել օրինական ուժի մեջ:

Վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Ադի Իոան Բլազայի պաշտպան Թ.Աղաջանյանը:

Գտնելով, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հունվարի 25-ի որոշումը կայացվել է նյութական իրավունքի նորմերի խախտումներով, օրինական և հիմնավորված չէ՝ բողոքաբերը խնդրել է պատժի մասով բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հունվարի 25-ի որոշումը և ամբաստանյալ Ադի Իոան Բլազայի նկատմամբ նշանակված պատիժը մեղմացնել:

Բողոքի հեղինակը նշել է, որ բողոքը պետք է վարույթ ընդունվի, քանի որ առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված հիմքերը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և բողոքարկվող դատական ակտն առերևույթ հակասում է Վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված որոշումներին:

Վերլուծելով բողոքը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքաբերի փաստարկները բավարար չեն եզրահանգելու, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ բողոքաբերի փաստարկները բավարար չեն եզրահանգելու, որ բողոքարկվող դատական ակտն առերևույթ հակասում է Վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված որոշումներին:

Ուստի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ներկայացված բողոքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված հիմքերի առկայությունը հիմնավորված չէ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե այն չի համապատասխանում նույն օրենսգրքի 407-րդ հոդվածի և 414.2-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, ուստի ներկայացված բողոքը ենթակա է վերադարձման:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ Վճռաբեկ դատարանը

Աղի Իոան Բլազայի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հունվարի 25-ի որոշման դեմ ամբաստանյալ Աղի Իոան Բլազայի պաշտպան Է.Աղաջանյանի վճռաբեկ բողոքը վերադարձնել:
Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆ
Դատավորներ՝ Ս.ՕՀԱՆՅԱՆ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆ

Ամսաթիվ: 30-03-2012

Այլ նշումներ:

Գործի առաքման ամսաթիվ: 04-04-2012

Դատարան: Կենտրոն և Նորք-Մարաշ

Այլ նշումներ: 11 հատոր՝ 349, 301, 234, 298, 313, 205, 214, 313, 123, 104, 126 թերթ: